Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՐՂՈՒԹԵԱՆ

8239

05 SEP 2011
31 AUG 2007
9(47.925)
L-38

Լ. Ֆ. Ա

ՅՈՎՍԷՓ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՐՂՈՒԹԵԱՆ

10047
16980

ՋՈՐՍ ՊԱՏԿԵՐՈՎ.

ԹԻՖԼԻՍ
Տպարան Տ. Մ. Ռօտինեանցի
1902

26 SEP 2013

Дозв. ценз. Тифлисъ, 4 Февраля 1902 г.

Յովսէփ կաթողիկոս Արղութեանը XVIII դարի հայ հռչակաւոր գործիչներից մէկն է. մէկը այն մարդկանցից, որոնց թիւը մեզանում, դժբախտաբար, շատ չէ եղել։

Յովսէփ կաթողիկոսի մասին գրաւոր լիշատակութիւններ շատ կան և ես ձեռքիս տակ ունեցել եմ համարեա այն ամենը, ինչ տպված է մինչև այժմ։ Բայց պէտք է խոստովանել, որ այդ տպագրական աղբիւրները շատ քիչ են՝ այդ նշանաւոր հայի ամբողջ պատկերը նկարելու համար. պաշտօնական, չոր ու ցամաք, միակողմանի են հրատարակում եղած սեղեկութիւնները։ Արղութեանին մենք դեռ չենք ճանաչում։ Եւ կը ճանաչենք միայն այն ժամանակ, երբ կը հրատարակվեն նրա բոլոր գրագրութիւնները։ Որոնց մի նշանաւոր մասը, բաղկացած երեք խոշոր

հատորներից, զանվում է հանգուցեալ հնագէտ Ալէքսանդր Երիցեանի գրագարանում։ Ներկայ աշխատութեան մէջ մենք օգտվել ենք ծերունի հնագէտի ձեռքով ապ տնտիպ մնացած թանգագին գաղտնիքներ դոկումենտներից քաղած տեղեկութիւններից։

ՅՈՎՍԷՓ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՐԳՈՒԹԵԱՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ո՞Վ ԷՐ ԱՐԳՈՒԹԵԱՆԸ

Հայերի պատմական ճակատագիրը։—Նքանք սկզբից և եթ հղօր ազգերի տիրապետութեան տակ են։—Ասորեստան, Պարսկաստան, մակեդոնական իշխանութիւն, Հռոմ, Բիւզանդիա, արաբներ։—Այդ բոլոր լուծերի յատկութիւնը. դժբախտութիւնը դեռ առջեւումն է։—XI դար. Մի ջին Ասիայի վայրենի ցեղերը։—Հայաստանի սոսկալի աւերումը. Լէնկ-թիմուր և Շահ-Աբաս։—Մտաւոր անկում։—Յարութիւն առնելու ջանքեր։—Դրականութիւն։—Քաղաքական շարժում. Խորայէլ Օրի։—Պետրոս Մեծի ջանքերը։—Հայոց հարցը կայսրի մահից յետոյ։ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեան։—Նրա առնմագրութիւնը. Հայ իշխանական առնմերի կատարած դերը։—Յովսէփի ծնունդը։

Հայերը պատմութեան տապարէզում երեւան գալու առաջին իսկ օրերից, նուաճող մեծ ազգերի տիրապետութեան տակ են եղել։

Դեռ այն ժամանակ, երբ այդ ազգը նոր էր առաջ շարժվում, ինչպես ենթադրում են *),

*) Масперо, «Исторія народовъ Востока», М. 1895, գլ. XIII.

արևմուտքից գէպի արևելք՝ իր համար մշտական հայրենիք գտնելու, Ասորեստանը, ասիական ծայրայեղ բռնապետութիւնների այդ դախտաւորը, ոչնչացաւ, իր տեղը տալով Պարսկաստանին։ Պարսից տիրապետութիւնը տարածվեց հայերի վրա դեռ այն ժամանակ, երբ նրանք չէին էլ հասել Արարատին և Արաքսի հովտին։ Այդ բանը տեղի ունեցաւ Քրիստոսից մօտ եօթը դար առաջ, և այնուհետև մինչև VII դարի կէսը Քրիստոսից լեռ՝ պարսկական ազդեցութիւնը անուսան էր հայոց երկրի եթէ ոչ ամբողջութեան մէջ, գոնէ նրա ամենանշանաւոր մասում։

Հին աշխարհակալ բռնապետութիւնները սովորաբար չէին ջնջում իրանց նուաճած երկիրների քաղաքական ինքնուրոյն կարգերը։ Նուաճված ազգերը, մեծ մասամբ, շարունակում էին պահպանել իրանց պետական կազմակերպութիւնը. նրանք ունէին իրանց թագաւորները, իրանց իշխանները, ներքին ինքնավարութիւնը։ Այս դրութիւնը թոյլ էր տալիս, որ պարսկական տիրապետութեան տակ գոյութիւն ունենայ հայոց հարկաստաթագաւորութիւն։ Շատ անգամ էր պատահում, որ հարկաստաթագաւորութիւնը այնքան էր ուժեղանում, որ թօթափում էր հպատակութիւնը, կատարեալ անկախութիւն էր ձեռք բերում։ Բայց այս հանգամանքը չատ չէ փոփոխում իրերի ընդհանուր դրութիւնը։ Եւ Հայաստանը, ընդհանուր առմամբ, հպատակված էր Պարսկաստանին երկար դարերի ընթացքում։

Եղել են ընդհատումներ պարսկական այդ տիրապետութեան մէջ։ Ալէքսանդր Մակեդոնացին արշաւում է մինչև Հնդկաստան և Հայաստանը Պարսկաստանի հետ հպատակվում է մակեդոնական իշխանութեան։ Ապա նորից ուժեղանում է Պարսկաստանը, նորից իր կալուածների տէրն է դառնում։ Բայց մակեդոնական թագաւորութեան տեղ Առաջաւոր Ասիայում երևան է գալիս արևմտեան մի մեծ պետութիւն—Հռոմը։ Հայաստանը մի առ ժամանակ էլ ստիպված էր փոփոխակի հպատակվել այս երկու վիթխարի հակառակորդներին—Պարսկաստանին և Հռոմին։

IV դարում (Թ. ը.) Հռոմէական պետութիւնը բաժանվում է արևելեան և արևմտեան մասերի։ Արևելեանը, որ կոչվում էր նաև Բիւզանդիա, շարունակեց ընդհատումները Պարսկաստանի հետ։ Հայաստանը, որտեղով երկու կողմերի արիւնահեղ պատերազմների մէջ, չը կարողացաւ ինքնուրոյնութիւն պահ-

պանել. պարսիկները և բիւզանդական լոյները բաժանեցին նրան իրանց մէջ։ VII դարի կէսից պարսիկները ոչնչանում են իբրև քաղաքական մարմին. նրանց տեղը բռնում են արաբները, որոնք չարունակում են կռիւը Բիւզանդիայի դէմ և գաւառում են Հայաստանի մեծագոյն մասի տէրերը։

Լուծերի մի ամբողջ շղթայ։ Նրանք անընդհատ ըմբոստում էին միմեանց, չափազանց ծանր էին Հայաստանի համար։ Ազգաբնակութիւնը կոտորվում էր անվերջ պատերազմների մէջ, ճնշված էր հարկերի ծանրութեան տակ և հազիւ կարողանում էր վերանորոգել այն աւերակները, որ աջ ու ձախ փռում էին արևելքից, հարաւից, հիւսիսից ու արևմուտքից արշաւողները։

Բայց հայոց ազգի դժբախտութիւնը դեռ ամբողջու

էր։

XI դարից Արևմտեան Ասիա են սկսում թափվել Միջին Ասիայի խատնիճաղանճ, վայրենի ազգերը։ Դրանք մոնղոլական կամ թաթարական ցեղին պատկանող ահարկու ձիաւորներ էին, մահ և ոչնչացնում էին բերում Հայաստանի համար։ Մեր պատմագիրներից մէկը շատ զեղեցիկ կերպով նկատում է, որ

թաթարները իրանց ձիաների սմբակներով մաշեցնում էին հայոց լեռները։

Ցկսվում է ամենատարաբնոյթ արիւնհեղութիւնների մի երկար, սարսափելի երկար շրջան։ Թաթարական զանազան արշաւանքներ, հրալին հոսանքների նման, սարսափում են արևելքից դէպի արևմուտք զանազան ուղղութիւններով, արևան և կրակների մէջ սպառում են ազգերի կեանքը։ Տուղրիլ-բէկ, Ալբ-Արսլան, Զինղիզ-խան—սրանք երևելին պատիժներ են Հայաստանի համար։ Վերջին, ամենասոսկալի պատիժը Լենկ-Թիմուրն էր, որ չատ երկիրներ էր անապատ դարձրել, բայց ամենից անգութ կերպով հոյ ազգը խեղդեց արեան ծովերի մէջ...

Ազգքան սոսկալի ազէտ չէր տեսել նոյն իսկ այնքան դժբախտութիւնների սովորած Հայաստանը։ Լայնատարած, լուսաշերեզմանատուն էր դարձել հոյի դժբախտ հայրենիքը և նրա վրա բարձրացաւ մի ահեղի խաւար։ Խաւար էր հոյի օրը, խաւար տիրեց և նրա մարքի վրա։ Ազգաբնակութեան այն պատուիկները, որոնք ազատվել էին սրի բերանից, մատնվեցին զարհուրելի դժբախտութեան. առաջ եկաւ բարքերի վայրենացում,

անասնական անտարբերութիւն, մոռացվեց գիրքն ու գրականութիւնը։

Քանդվում էր Աստուծոց և մարդկանցից մոռացված եկեղեցը, քանդվում էր ամեն կողմից։ Ավերակները մամուռով էին ծածկվում, բայց ավելի սարսափելի էր մոռաց քարքարումը։ Այդ գերեզմանային կացութեան մէջ էր հայութիւնը, երբ թաթարական ցեղերը երկու մեծ, միմեանց թշնամի պետութիւններ սանձեցին — Պարսկաստանն ու Թուրքիան։ Սրանց մէջ բարբարվեց լուսաս, երկարատև պատերազմ և մէջ ուղ ոսքի տակ տրորվողը առանց այդ էլ շնչասպառ, գիակնացած Հայաստանն էր...

Եւ հայերը մենակ էին այդ սրածութիւնների, անհալի սովերի, ժանտախտերի մէջ։ Օգնութիւն ոչ մի տեղից։ Նրանք իրանք պիտի ոտքի կանգնէին, իրանք իրանց ջանքերով պիտի ապրելու հնար գտնէին այն երկաթէ լուծի տակ, որ դրել էր նրանց վրա մահմեդականութիւնը։ XVII դարի սկզբում Արարատեան դաշտին ու նրա շրջակայքին նայողը պիտի ասէր թէ հայ ազգը այլ ևս չի դուրս գալ այն խոր գերեզմանից, որ փորել էր պարսից Շահ-Աբբաս թագաւորը։ Թէ այդ անարկու ընտաւորի զաղանային գերեվարութիւնը, թէ զրանից լուսալ տեղի ունեցած գէպքերը վկայում էին, որ հայութիւնը պիտի յաւերժվին անհետանալ, պիտի բնաջինջ դառնալ...

Բայց հրաշալի է մի կենսունակ ազգի ճակատագիրը։ Հալը մի նոր Գաղարոս էր. նա չէր փտել գերեզմանի մէջ։ Հենց նույն իսկ ժամանակներում, երբ քար քարի վրա չէր մնում, հայկական ավերակների մէջ յարութիւն առնելու նշաններ են երևում։ Վառվում են հանկարծ ճրագներ և գրանք վանքերն գպրոցներն են, որանք հաստատում են իրանց մէջ աշակերտներ, գրագիտութիւն են սովորեցնում։ Այդ գպրոցներից դուրս են գալիս արժանաւոր հոգևորականներ, որոնք աշխատում են կենդանացնել մեռած գրականութիւնը, վերանորոգել և բարեկարգել ավերակները...

Չէ անցնում և կէս դար, Հայաստանի արևելեան մասերում արդէն բաւական զգալի են դառնում վարդենութեան ու խաչարի գեմ ուղղած ջանքերը։ Այդտեղից մարդիկ են գնում Արևմտեան Եւրոպա, հայերէն գրքերի տպագրութիւնը զարգացնելու համար։ Հաստատվում են այդ մարդիկ, քրտնում, տանջվում են և այդ սուրբ ջանասիրութիւնն ու անձ-

նամոռացութիւնը դեղեցիկ պատգներ են տալիս։ Դարի վերջում այնքան զգալի է նահատակ ազգի բարոյական վերածնութիւնը, որ նոյն իսկ առաջ է գալիս քաղաքական ազատութեան անհրաժեշտը։ Խրայել Օրին երևում է Հայաստանի արևելեան մասում և ծրագրում է ապստամբական շարժում պարսիկների դէմ։ Նա առաջին հայ քաղաքագէտն էր. ստեղծեց և եւրոպական մի քանի պետութիւնների առջև դրեց հայոց հարցը։ Հայի խաւար երկնքում էլ պայծառ աստղեր ասողը։

Լուսապա XVIII դարը, որ այնքան նշանաւոր է մարդկային առաջադիմութեան պատմութեան մէջ։ Հեռաւոր Ասիայի մի անծանօթ լեռնաստանում, մահմեդական բարբարոսութիւնների մէջ խեղդված հայկական կեանքն էլ, թէև շատ ծանր ու դանդաղ, նոյնպէս առաջ է գնում։ Խրայել Օրին Եւրոպայումն է. նրա հանձնարարութիւն կայացնել Ռուսաստանի, Աւստրիայի և Հռոմի մէջ մի զօրաւոր դաշնակից և նրա օգնութեամբ Հայաստանի պարսկական բաժինը ազատելու համար։ Օրիի հետ է Մինաս վարդապետը։ Սա արդէն երկրորդ հոգ քաղաքագէտն է։

Միաժամանակ մի ուրիշ մեծ մարդ՝ Մխիթար Սեբաստացին, Եւրոպա է տանում իր վանական մշակութիւնը, որին վիճակված էր գրական վերածնութեան սկզբնապատճառ և գլխաւոր գեկավար դառնալ։ Այդ ժամանակից գերերը բաժանվում են Հայաստանի արևելեան և արևմտեան մասերի մէջ։ Արևմտեան մասը, Թէոդիսիի հայութիւնը, դեռ քաղաքական ազատութեան գաղափար չունի. նա գլխաւորապէս գրական գործունեութեան է նուիրվում։ Իսկ արևելեան մասի, այսինքն պարսկական Հայաստանի համար ամենագլխաւոր, առաջնակարգ գաղափարը դառնում է մահմեդական լուծից ազատվելը։

Խրայել Օրին երկար կեանք չունեցաւ, որպէս զի կարողանայ իր ծրագիրների գոնէ մի մասը իրագործել։ Բայց նրա սկսած գործը չը մոռացվեց և սուրբ ատենդի պէս պահվեց արևելեան հայերի մէջ։ 1722 թուականին ռուսաց Պետրոս Մեծ կայսրը արշաւանք սկսեց դէպի Անդրկովկաս։ Քրիստոնեաների վաղեմի յոյսերը իրականանալու վրա էին։ Վաղուց էր Պետրոսը խոստումներ տալիս հայերին, յորդորում էր ազատել իր դաշնակիցներ հայերը պատրաստ էին։ Գանձասարի Եղիայի կաթողիկոսը հայկական զօրք կազմեց. պայ-

մանաւորված էր, որ ուստաց զօրքերի հետ միասին հայերն էլ պիտի պատերազմական գործողութիւններ սկսեն պարսիկների դէմ։

Բայց Պետրոս Մեծը հարկադրված էր կիսատ թողնել գործը և հեռանալ Կասպից ծովի ափերից։ Հայերը սիրում են, բայց չեն յաւատամում։ Ապատելով ազատարար կոչերի նոր արշաւանքին, նրանք ամրանում են Ղարաբաղի և Սիւնիքի լեռներում։ Մնում է ազատութեան նուիրված վաստակը, հայ զօրքը կռւում է, յաղթութիւններ է տանում։ Սիւնիքի մէջ հաստատվում է Դաւիթ-բէկը իր զարմանալի յաղթութիւններով. Հայաստանի այս հին նշանաւոր նահանգը արդէն սրի բերանով իր համար կատարեալ ազատութիւն էր նուաճել, երբ մահը վերջ դրեց Դաւիթ-բէկի հերոսական կեանքին, նորից մահմեդական լուծը տարածելով երկրի վրա։

Բայց դա ազատական անդնդանքի մահը չէր։ Այդ անդնդանքը դառնում է կոյծ, պահվում է Ղարաբաղի հնգալական լեռներում։ Ապատեղ այլ ևս կարճատև, երկրորդ չէր ազատութեան գործը։ Յամառ ակռնոտութեամբ նա պահվեց մինչև XIX դարի սկիզբը։ հայ մելիքները, չը նայած արտաքին անողորմ հանգամանքներին և նոքին անհանձնառութիւններին, մի ամրաղջ դար անշէջ պահեցին այն կրակը, որ վառել էր Խորայել Օրին։

Սիւնիքի և Ղարաբաղի քաղաքական շարժումը անդայթ, մասնաւոր բնաւորութիւն ունէր. նա չը վարակեց ամբողջ պարսկական Հայաստանը և մի ընդհանուր լամառ երկարատև մարտում չատաջարկեց։ Ապրէս, օրինակ, Արարատեան աշխարհը, որ ապրում էր հայութեան մի խոշոր մասը, անտարբեր մնաց դէպի հայ մելիքների անհաւատար պայքարը, օգնութիւն չը հասցրեց մարտընչողներին։ Իսկ թէ ինչ խոշոր օգնութիւն կարող էր նա հասցնել, երևում է նրանից, որ 1724 թուականին, երբ օսմանցիները պաշարել էին Երևանը, հայերից մօտ 10 հազար հոգի միացան պարսիկների հետ և սաստիկ կռիւներ մղեցին օսմանցիների դէմ *)։ Սա Արարատեան դաշտի հայ ազգաբնակութեան առաջին և վերջին պատերազմական գործն էր։

Անտարբեր էր, ընդհանուր առմամբ, և Էջմիածինը, թէև նա էր հայերի կրօնական ամենապրեստիժ կենտրոնը։ Գանձասարի կաթողիկոսները մասնաւոր թեմի առաջնորդներ էին, Էջմիածնի հետ չատ էլ բարեկամ չէին.

*) Հ. Ալիշան—«Այրարատ», եր. 305։

մի մեծ հեղինակութիւն վայելել հայերի մէջ նրանք չէին կարող, ուստի և ազատասիրական շարժման ընդհանուր, համազգային կերպարանք չէին կարող տալ։ Այդ կաթողիկոսներն էին անդադար գիմումներ անում ռուսներին և ամեն անգամ հարկադրված էին մարդիկ ուղարկել՝ թղթեր տանելու և պատասխաններ ստանալու համար։

Այսպէս ահա, պարսկական Հայաստանը, լեռ մնալով թիւրքական Հայաստանից դրական առաջադիմութեան գործում, ունէր իր սեփական մեծ գործը, որ քաղաքական ազատութիւն ձեռք բերելն էր. այս կողմից թիւրքական Հայաստանն էլ շատ լեռ մնացած էր պարսկական Հայաստանից։ Մնում էր որ արևելեան Հայաստանը ունէր մեծ եռանդով առաջ տանէ իր քաղաքական ծրագիրը. մնում էր այդ գործին ընդհանուր բնաւորութիւն տալ, դարձնել նրան համազգային հարց գոնէ պարսկական Հայաստանի մէջ։ Պէտք էր ունէր մօտենալ Ռուսաստանին, տնտեսական և յարատև յարաբերութիւններ պահպանել նրա հետ։

Այդ գերը յանձն է առնում Ռուսաստանի հայոց առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը։

Բազմակողմանի, զարմանալի եռանդուն էր այս հոգևորականի երկարատև գործունէութիւնը։ Նա մի հասարակ առաջնորդ չէր, լոկ եկեղեցական գործերով հետաքրքրվող, այլ մի աչքի ընկնող քաղաքական գործիչ։ XVIII դարում մենք ունինք մի քանի հոգևորական քաղաքագէտներ. այսպէս են Օրիի ընկեր Մինաս վարդապետը և Գանձասարի Նոսալի կաթողիկոսը։ Սակայն Յովսէփ Արղութեանը այս երկուսից էլ շատ նշանաւոր հանգամանաւ և եթէ կան մեր հոգևորականութեան մէջ այնպիսի քաղաքագէտներ, որոնք կարող են Արղութեանի արժանաւոր դասակիցները դառնալ, դրանք միայն երկու հոգի են XIX դարում—Ներսէս Աշտարակեցի կաթողիկոսը և Ներսէս Վարժապետեան պատրիարքը։

Ո՞վ էր Արղութեանը։

Նշանաւոր է, որ հայերի քաղաքական վերածնութեան առաջին պարագլուխները ազնուական դասակարգից էին։ Հայաստանը, ինչպէս յայտնի է, հին ժամանակներից ունէր ազնուականների մեծ բազմութիւն։ Մեր պատմական հայրենիքը ֆէոդալական մի պետութիւն էր, բաժանված բազմաթիւ մանր ու խոշոր տեղական, համարեա անկախ իշխանութիւնների։ Այս սիստեմից առաջանում էր

հայոց պետութեան ընդհանուր թուլութիւնը-ազնուականութիւնն էր պատերազմող, դիմադրող ոյժը և սակայն նա ոչ միայն չէր միանում, միասնաբար մի դիմադրութիւն կազմում պետութեան ընդհանուր շահերը պաշտպանելու համար, այլ և շատ յաճախ ներքին խռովութիւններով ու անմիաբանութեամբ ջլատում էր երկրի սահմանը թոյլ ու անջատված ոյժերը։ Մինչդեռ ժամանակ ազնուականութիւնն էր, որ ամենից շատ ենթարկված էր տիրապետող պետութիւնների հարձակումներին։ Պարսիկները աշխատում էին ոչնչացնել նախարարական տները։ Նրանցից լեռնային արարները, ապա և թաթարական ցեղերը ոչ մի անդիմութիւն չը խնայեցին ազնուական տարբեր միանգամայն բնանջինջ անելու համար, որպէս զի երկրում չը մնան ժողովրդի առաջնորդներ, դիմադրական ոյժ կազմակերպողներ։

Եւ այդ արիւնոտ ծրագիրը աջողվեց զլուխ բերել դարերի ընթացքում,—իշխանական տները Հայաստանում անհետացան մինչև նոսին։ Պահպանվեցին միայն մի քանի տներ՝ դիմաւորապէս արևելեան Հայաստանի լեռներում։ Դրանք էլ երանց ազգակիցների առաջնորդները հանդիսացան, երբ

կարելի եղաւ մոռանալ մահմեդական մաղալ լուծից ազատվելու մասին։ Խորանել Օրին Պռոշ իշխանի ցեղից էր. Գանձասարի կաթողիկոսները Հասան-Ջալալեան իշխանական տոհմից էին. մելիքները ժառանգական իշխաններ էին։ Ազնուական ծագում ունէր և Յովսէփ Արղութեանը։

Յովսէփի կողմից, ուստայ կատարութեան ներկայացրած տոհմագրութեան մէջ ասված է թէ Արղութեանների տոհմը սերված է պարսից Արտաշէս-Երկայնաձեռակ թագաւորից. այդ թագաւորն է և Արշակունեաց թագաւորական տոհմի նախահայրը։ Այս պատճառով էլ Յովսէփ Արղութեանը իրան անուանում էր «սերեալ ի լարմատաց և ի շառաւիղէ տոհմ Լուսաւորչին մերոյ Արշակունեաց Պահլաւունի»։

Ոչինչ փաստ չը կայ Արղութեանների այնքան հին ծագումը ստուգելու համար և կարելի է համարձակ ասել որ Արտաշէսը, պարթեւական տոհմարանութիւնը առելի երևակայութեան արդիւնք են այս ճիզարութեան մէջ։ Աւելի ճիշտ են երևում մեղանից ժամանակով ոչ այնքան շատ հեռու տեղեկութիւնները։ Դրանք ասում են թէ Արղութեանների նախնիքներն էին XIII դարում

հաչակված Զաքարէ և Իւանէ սպասալարները, Երկու եղբայրներ, որոնք անդադիր դեր են կատարել վրաց և հայոց պատմութեան մէջ։ Իսկ այս քաջ զօրավարները, ինչպէս վկայում են Վարդան և Կիրակոս պատմագիրները, քրդական ծագում ունէին։ Հետևաբար, Արղութեանները, եթէ նրանք Զաքարէի կամ Իւանէի սերունդն են, պէտք է բաւականանան այդ նախնիքներով և մի կողմ թողնեն պարթևներին, Արտաշէսին։

Ինչ և իցէ։ Հիմնվելով այդ տոհմագրութեան վրա, որի վաւերացնողը վրաց Հերակլ թագաւորն էր, Պաւել կայսրը 1800 թուականին ընդունեց Արղութեանների տոհմը ռուսաց ազնուականութեան մէջ, յատկացնելով նրան իշխանի տիտղոս։ Արղութեանների հին իշխանական զինադրոշմը, որ հաստատվեց նոյն կայսրի ձեռքով, ներկայացնում է վահան, նրա վրա դրոշակ, որպէս ապարապետութեան նշան, Մարիամ Աստուածածինը՝ Յիսուսը գրկած, իսկ այդ պատկերի տակ՝ մեկնած բազուկ իրրև քաջութեան նշան և երեսի վրա դրած վահան ու նիզակ. աջ կողմից երկղլուխ արծուի կէսը *)։

*) Նկարը և բացատրութիւնը տես Ներսէս

Արղութեանների տոհմային կալուածքը հաչակաւոր Սանահինն է, հին Գուգարաց աշխարհում (այժմ Լոռի)։ Այդտեղ էլ ծնվեց Յովսէփը 1743 թուականի մարտի 23-ին. բայց կան աղբիւրներ էլ թէ նա ծնվել է Թիֆլիսում, ուր նրա հայր Շիրազ-բէկը պաշտօն ունէր վրաց արքունիքում։ Մօր անունն էր Քեթեվան։ Յովսէփը ունէր երեք եղբայր — Մովսէս *), Փարսադան, Բէժան և մի քոյր — Մարիամ։

Յովսէփի մանկութեան և պատանեկութեան մասին մենք համարեա ոչինչ տեղեկութիւն չունինք։ Յայտնի է միայն, որ նա տարրական կրթութիւն ստացաւ Սանահնի վանքում և ապա ուղարկվեց Էջմիածին։ Այդտեղ 1763 թուին կաթողիկոս զարձաւ Սիմէոն Երևանցին, իր դարի նշանաւոր հայ հոգևորականներից մէկը։ Յովսէփը իր դրութիւնների մէջ Սիմէոնին անուանում է իր ուսուցիչ։ Մենք չը գիտենք, նա ուսում ստացել է

1094
16980

Շնորհալու «Ընդհանրական» յիշատակարանում, տպված Պետերբուրգ, 1788-ին։

*) Մովսէսի որդին էր Զաքարիան, իսկ Զաքարիայի որդին էր Մովսէսը, Դաղստանի հռչակաւոր հերոսը, գեներալ-ադիւտանդ, զինուորական մի տաղանդ, որ անմահացրել է իր անունը ռուսաց զինուորական պատմութեան մէջ։

անմիջապէս Սիմէոնից՝ նախ քան սրա կաթողիկոսանալը, թէ աշակերտ է եղել կաթողիկոսի հիմնած ժառանգաւորաց դպրոցում։

Ինչպէս էլ եղած լինի, կարևորը այն է, որ Յովսէփը կրթվեց և զարգացաւ Սիմէոն Երևանցու պէս մի հոգևորականի ազդեցութեան տակ։ Սիմէոնը ուսումնասէր էր, ժամանակին նայած՝ լաւ կրթութիւն էր ստացել. ամենից գլխաւորը այն է, որ նա ունէր զորձելու մեծ եռանդ և ընդունակութիւն։ Նա էր, որ բարեկարգեց Էջմիածինը, կանոնաւորեց բաղմաթիւ կնճռոտ և դժուար հարցեր. նա առաջինը եղաւ, որ Հայաստանի հողի վրա տպարան և թղթի գործարան հիմնեց, յաղթելով մեծամեծ դժուարութիւնների։ Քաղաքական հանգամանքները շատ անեղատոտ էին. երկիրը հեծում էր թուրք խանների լծի տակ, պատերազմները, լեզգիների արշաւանքները յաջորդում էին իրար։ Բայց ժիր կաթողիկոսը աշխատում էր չը լսատանալով. բարեկարգութիւնները լաւ աջողվում էին նրան, Էջմիածնի հեղինակութիւնը նրա օրով շատ բարձրացաւ։ Մեծ նշանակութիւն ունէր այն հանգամանքը, որ նա, կաթողիկոսանալուց առաջ, երկար տարիներ նախիջևանի պաշտօնով շրջել էր Կ. Պոլսում, Երուսաղէմում,

Հնդկաստանում և ամեն տեղ առանձին աշխատութիւն էր դրսևել իր ընդունակութիւններով։ Այդ բարի համբաւը շատ էր օգնում նրան կաթողիկոսական աթոռի վրա. նա դիմումներ էր անում զանազան տեղերի հայերին, ստանում էր բարոյական և նիւթական աջակցութիւն, ստանց որի գլուխ չէին գալ շատ բարի դիտաւորութիւններ։

Յովսէփ Արղութեանը այս բարեխիղճ և ժիր գործիչի արժանաւոր աշակերտը հանդիսացաւ։ Սիմէոնը գնահատում էր նրա արժանաւորութիւնները և 1769 թուականին եպիսկոպոս ձեռնադրեց այդ 26 տարեկան վարդապետին։ Մի քանի յանձնարարութիւններ Յովսէփը կատարեց աջողութեամբ. այսպէս, կաթողիկոսը հրամանով նա գնաց Թիւրքաց Հայաստան և այնտեղ ժողովարարութիւն սկսեց Էջմիածնի նոր չինութիւնների համար։ Իրրև վարձատրութիւն՝ Սիմէոնը տուեց նրան արքեպիսկոպոսութեան աստիճան։

Նայելով այդ հազուագիւտ առաջադիմութեան, ժամանակակիցները, անկասկած, պիտի ասէին թէ բախտաւոր աստղի տակ է ծնվել այդ կրօնաւոր իշխանը։ 1773-ին, դեռ 30 տարեկան արքեպիսկոպոսը ստացաւ մի աւելի կարևոր պաշտօն. նա ուղարկվեց

Ռուսաստան՝ իբրև այնտեղի հայերի աստվածնորդ։

Քանանեթի տարի գործեց նա այդ տարբերվում։ Եւ գործեց, ինչպէս կը տեսնենք, շատ լաւ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԹԵՄԸ

Հայերը Ռուսաստանում։—Առևտուր, արտօնութիւններ։—Պետրոս Մեծի առևտրական քաղաքականութիւնը։—Գաղթականութիւններ դէպի Ռուսաստան։ Աստրախան։—Թեմի հարց։ Գանձասար և Էջմիածին։ Սիմէօն կաթողիկոսի Ջանքերը աջողված։ Արզումեանի պէս գործիչ էր հարկաւոր։—Ռուսաստանը Եկատերինայի ժամանակ, քաղաքական ծրագիրներ։—Յովհաննէս Լազարեան։—Ռուսաստանի թեմը մնծանում է։

Հայերը շատ վաղուց էին ճանաչել Ռուսաստանը։ Այն ժամանակ, երբ թաթարական լեզուները անխնայ քարուքանդ էին անում Հայաստանը և հայ ժողովուրդը այդ ահարկու նուաճողներին տեղ տալու համար ստիպված էր փրկութիւն որոնել օտար աշխարհներ փախչելով, Ռուսաստանն էլ դարձաւ մեկը այն տեղերից, դէպի ուր դիմում էր հայաստանցի գաղթականը։ Բացի այդ ազգաներից՝ հայերին Ռուսաստան տանում էին և այլ հանգամանքներ. այնտեղ առևտուր կար, և վերջապէս իրանք, սուտերն էին կանչում նրանց։

Դեռ տասներորդ դարում երևում են հայ գաղթականութիւններ Դնեպր և Վոլգա

գետերի վրա։ 1009 թվին Կիևվի իշխանաւորները հրաւիրեցին հայերին որ գան իրանց օգնելու Բոլեսլավ Խրոխոի դէմ մղվող պատերազմում։ 1062-ին Կիևվի իշխան Ֆէօդոր Դիմիտրիեվիչը նորից օգնութիւն խնդրեց հայերից և հայերը նրա թիկունքը դարձան ու մեծ օգնութիւններ հասցրին սկսած պատերազմի մէջ։ Իշխանը պատերազմից յետոյ համոզեց հայերին մնալ Ռուսաստանում և արտօնութիւններ չնորհեց նրանց։

Ֆանեերեքերրորդ դարի առաջին կէսում թաթարները առեցին Անի քաղաքը։ Դըժբախտ մայրաքաղաքից և Շիրակի զանազան կողմերից դուրս եկաւ մի բազմութիւն, բազկացած, ինչպէս ասում են, 40 հազար հոգուց. նա դիմեց դէպի հիւսիս-արևելք, բնակութիւն հաստատեց Ախտարայ քաղաքում, որ գտնվում էր Առարխանի և Կազանի մէջ տեղը։ Այդտեղ էլ թաթարական թագաւորութիւն էր և հայերը երկար չը կարողացան ապրել։ Նրանք մտածեցին գաղթել մի ուրիշ տեղ և այս անգամ ընտրեցին Ղրիմը։ Ֆարիկեան թերակղզու ծովափնեայ քաղաքներում վաղուց գոյութիւն ունէին հայ գաղթականութիւններ։ Թէև թերակղզու վրա դարձեալ թաթարական տիրապետութիւնն էր

տարածված, բայց Կաֆա կամ Թէոդոսիա քաղաքը լանձնված էր գենովացիներին, որոնք առևտրական պահեստներ ունէին այդտեղ։ Ստանալով Կաֆայի գենովացի իշխանի համաձայնութիւնը, Ախտարայի հայերը սկսեցին գաղթել դէպի այդտեղ։ Ախտարայի թաթարները ընդդիմացան այդ գաղթականութեան, որովհետև չէին կամենում զրկվել հայերի նման մի չինարար տարրից։ Բայց հայերը զէնք վերցրին և պատերազմելով ճեղքեցին թաթարների շարքերը ու գնացին Ղրիմ։

Այսպիսով կազմվեց Ղրիմի հայկական մեծ գաղութը։ Բայց Ախտարայում էլ մնացին հայեր. նրանց մի մասը տեղափոխվեց Կազան, իսկ միւս մասը—Առարխան։ Այդ երկու քաղաքներում նրանք եկեղեցիներ էլ ունէին։ Կազանի և Առարխանի առանձին թագաւորութիւնները նուաճեց ռուսաց Իվան Դրօզնի թագաւորը 1552—1556 թուականներին։ Կազանը առնելիս՝ Դրօզնին ինչ որ պատճառով կոտորել տուեց հայերին, կենդանի մնացածները տեղափոխվեցին Առարխան *)։

---

*) 1681 թուականին գրված մի Աւետարանի լիշատակարանում ասված է թէ այդ Աւետարանը գրված է Կազանում ապրող հայերի համար (Սարգիս

Այսպիսով Աստրախանը դառնում է Ռուսաստանի հայ գաղթականութեան կորիզը։ Տասնեօթերորդ դարից նա ունէր մեծ կարևորութիւն է ստանում հայերի համար իբրև առևտրական մի կենտրոն, որ գտնվում էր Պարսկաստանից Ռուսաստան տանող ամենայարմար ծովային ճանապարհի վրա։ Այդ դարում Սպահանի մօտ հիմնված Նոր-Ջուղան, հայ վաճառականութեան այս ամենանշանաւոր ներկայացուցիչը, առանձին ուշադրութիւն է դարձնում Ռուսաստանի վրա և գործեր է սկսում այնտեղ։

1660 թուականին Նոր-Ջուղայեցի վաճառական Զաքար Սահրատեանցը ռուսաց Ալէքսէյ Միխայլովիչ թագաւորին ընծայ մատուցեց թանգագին քարերով զարդարված մի զեղեցիկ գահ և յայտնեց, որ Պարսկաստանի հայ վաճառականները պատրաստ են մեծ յօժարութեամբ ծառայելու քրիստոնեայ թագաւորին։ Հարաւային երկիրների հարուստ վաճառքները, մանաւանդ մետաքսը Ռուսաստան մտցնելու օգուտները այնքան ակներև էին և մեծ, որ ռուսաց կառավարութիւնը առանձին բարեհաճութեամբ վերաբերվեց հայ վաճառականներին և սկսեց դրաւել նրանց զանազան արտօնութիւններով։ 1667-ին Գրիգոր Լուսիկեան և Սահակ Մովսէսեան առևտրական ընկերութիւնը գործեր է սկսում Ռուսաստանում և առևտրական ու քաղաքական բանակցութիւնների միջնորդ է հանդիսանում ռուսաց և պարսից կառավարութիւնների մէջ։ Հետզհետէ բազմանում է հայերի թիւը Ռուսաստանում։

Հայերի նշանակութիւնը բարձրանում է մանաւանդ Պետրոս Մեծի ժամանակ։ Ռուսաստանի այս հանճարեղ վերանորոգիչը, որ իր պետութիւնը ուժեղացնելու ու քաղաքակրթելու համար յանձն էր առել նոյն իսկ հասարակ հիւանի պէս աշխատել Հոլլանդիայի նաւաշինարանում, իր հողերի զլխաւոր առարկան էր դարձրել առևտրական գործերը։ Պետութիւնը զօրեղ է ոչ միայն իր զինուորական ոյժով, այլ և իր տնտեսական բարեկեցութեամբ։ Եւ Պետրոսի մշտական ձգտումն էր զարգացնել վաճառականութիւնը, արհեստները Ռուսաստանում։

Այդ մտքը հակակշիռ էր պահանջում։ Ռուսաստանը միայն երկու ծովային նաւահանգիստ ունէր—Արխանգելսկ հե-

---

եպիսկ. Ջալալեան—«Հանապարհորդութիւն», հատ. Բ. եր. 441)։

ում հիսխում, Սպիտակ ծովի վրա, և Աստրախան՝ Կասպից ծովի վրա։ Սպիտակ ծովը սարվալ մեծ մասը սառած է լինում, ուստի այդ միակ ճանապարհը, որով Ռուսաստանը հեշտ և էժան հաղորդակցութիւն էր պահպանում Եւրոպայի հետ, չէր կարող գոնացնել մի մեծ, լայնատարած երկրի պէտքերը։ Ուստի Պետրոսը, մեծ մարդուն յատուկ հեռատեսութեամբ, մեծ ծրագիրներ կազմեց։ Նա աչքը տնկել էր ուրիշ ծովերի վրա. մի կողմից նրան հրապուրում էր Բալտիկ ծովը, միւս կողմից կամենում էր հաստատել Սև ծովի ափին, իսկ Կասպից ծովը նրան երևում էր մի բնական ճանապարհ, որ տանում էր դէպի Պարսկական, հարաւային ծովերը, Հնդկաստան։

Հեշտ չէր այդ բոլոր իղձերին հասնելը. պէտք էր դէնքի ոյժով ճանապարհներ բաց անել դէպի այդ նուիրական կէտերը։ Մինչև որ ծրագրածի գոնէ մի մասը կիրագործվէր, Պետրոսը ամեն ջանք գործ դրեց, որ Ռուսաստանի գունները լայն բացվեն ներմուծվող վաճառքների համար։ Օտար երկրացի վաճառականներին նա հրապուրում էր դէպի Ռուսաստան, խրախուսում էր նրանց, թեթեւութիւններ էր տալիս, հովանաւորում էր։

Եւ որովհետև հայերը այդ ժամանակ ամենամեծ դերն էին կատարում Արևելքի վաճառականութեան մէջ, այդ պատճառով էլ Պետրոսը առանձնապէս նրանց վրա ուշադրութիւն դարձրեց։ Այսպէս, նա մի յատուկ դեսպանութիւն ուղարկեց պարսից Շահի մօտ, խնդրելով նրանից հրամայել, որ հայերը իրանց առևտրական յարաբերութիւնները Եւրոպայի հետ կատարեն Ռուսաստանի վրայով, որպէսզի ճանապարհ ընտրեն Աստրախանը, Արխանգելսկը։ Թողնելով բազմաթիւ այլ դեպքերը, լիշենք այստեղ և այն որ Պետրոսը, երբ գտնվում էր Ամստերդամում, ծանօթացաւ այդտեղ առևտրական գործեր վարող զմիւռնացի Պետրոս Ապրօհանի հետ, որին նշանաւոր արտօնութիւններ շնորհեց և այդպիսով դրաւեց Ռուսաստան՝ առևտրական գործեր սկսելու համար։

Բայց հայերին դրաւելու համար միայն արտօնութիւններ չէին հարկաւոր։ Իրանք հայերը դիմում էին Ռուսաստանին և ոչ միայն առևտրական նշանաւոր չոներ էին խոստանում, այլ և քաղաքական մեծամեծ օգուտներ։ Այդ կարևոր առաջարկութիւնները տարաւ իր հետ Իսրայէլ Օրիի պատգամաւորութիւնը, որ XVIII դարի սկզբում հաստ-

Մոսկվա։ Նա յայտնում էր, որ հայերը ազատում են ազատել իրանց պարսկական լուծից, Հայաստան ուղարկելով մի թեթև զորաբաժին։ Փոխարէնը հայերը պատրաստ էին մրտնել Ռուսաստանի հովանաւորութեան տակ։

Թէև Պետրոսը այդ միջոցին զբաղված էր շվեդական պատերազմով, որ աւելի կարևոր գործ էր, բայց նրա հեռատես ու խորաթափանց հայեացքից չը խուսափեցին այն բոլոր օգուտները, որոնք բղխում էին հայ պատգամաւորութեան առաջարկութիւններից։ Ուստի նա փայփայեց Իսրայէլ Օրիին, յուսադրեց նրան և վերջը հաստատ խոստումներ տուեց։ Այս բոլորը, ի հարկէ, աւելի ևս պիտի գրաւէր հայերին։ Եւ իրաւ, Ռուսաստանը XVIII դարում հայ ժողովրդի միակ յոյսն ու ապաւէնն էր։ Համարեա 10 տարի մնաց Օրին Մոսկվայում, ապատելով թէ երբ, վերջապէս, քաղաքական հանգամանքները թոյլ կը տան Պետրոսին ձեռք առնել հայերի ազատութեան գործը։ Մոսկվայի և Գանձասարի մէջ բաւական եռանդուն յարաբերութիւններ սկսվեցան. վերջապէս ինքը, Օրին, իբրև դեսպան երևաց Անդրկովկասում, աւելի վառեց հայոց յոյսերը և գնաց Սպահան՝ Շահի մօտ։

Բոլոր երթևեկութիւնը չարունակում էր

կատարվել Աստրախանի վրայով և այս քաղաքը աւելի ու աւելի կարևորութիւն էր ստանում հայերի համար։ Այդ ժամանակներն էլ Ռուսաստանի հայերը Գանձասարի թեմ ճանաչվեցին և Օրիի ընկեր Մինաս վարդապետը այդ թեմի առաջնորդ ընդունվեց։

Օրիի մահից յետոյ, նրա սկսած գործը չարունակվեց։ Ղարաբաղի հայերը անդադար յարաբերութիւններ էին պահպանում ուսաց արքունիքի հետ։ Վերջապէս եկաւ հատաւ վաղուց անհամբեր սպասվող ժամանակը։ Պետրոսը Աստրախանից արշաւանք սկսեց Պարսկաստանի դէմ։ Ղարաբաղը և Սիսիանը ապստամբութեան դրօշակ բարձրացրին։ Սակայն Պետրոսը չը չարունակեց իր արշաւանքը։ Սարսափահար դարձած պարսից կառավարութիւնը լոժար կամքով տուեց Պետրոսին այն, ինչ նա ուզում էր—Կասպից ծովի ափերը։ Պարսկաստանի, ապա և Թիւրքիայի հետ կատած դաշնադրութիւնների հիման վրա Պետրոսը հրաժարվեց Հայաստանն ազատելու մտքից, իսկ հայերին առաջարկեց գաղթել ու բնակվել Կասպից ծովի ափերում նոր ձեռք բերած ռուսական կալուածներում։ Հայերը չընդունեցին այդ հրաւէրը, որի նպատակն էր քրիստոնեայ աշխատասէր տարր

հաստատել Պարսկաստանից առած երկիրներում։

Բայց եթէ ընդհանուր գաղթականութիւնը դլուխ չեկաւ, հայերի առանձին ատանձին հատուածներ մասնաւոր գաղթականութիւն սկսեցին։ Նրանք դիմեցին Կասպից ծովի եզերքը, հիմնեցին Սուրբ Խաչ քաղաքը, ապա Թէրէք գետի վրա Ղզլար քաղաքը, ուր յաջող տոկունութեամբ կռուեցին կլիմայական և աշխարհագրական զժոխային պայմանների դէմ և ծաղկեցրին գիւնեզործութիւնն ու չերամապահութիւնը։

Այդ ժամանակից գաղթականութիւնների ճանապարհը դէպի Ռուսաստան երբէք չը փակվեց։ Պարսկաստանում տիրապետեց տարաբնակ Նադիրը, որ լեռ առաւ ռուսների գրաւած բոլոր պարսկական երկիրները։ Նրա դաժան անդթութիւնների պատճառով Պարսկաստանը դատարկվեց. տարաբնակութիւնը դէս ու դէն էր փախչում։ Հայերն էլ, գլխաւորապէս Նոր-Ջուղայի հայերը, սկսեցին փախչել։ Մեծ մասը գաղթեց Հընդկաստան, բայց կային և այնպիսիները, որոնք Ռուսաստանի ճանապարհն էին բռնում։ Այս վերջինների թիւն էր և նշանաւոր վաճառական Ազազարը կամ Եղիազարը, որ 1747-ին

իր չորս որդիների հետ (Յովհաննէս, Մինաս, Խաչատուր, Յովակիմ) գնաց բնակվեց Աստրախանում։ Բայց այստեղ նա միայն երկու տարի մնաց և գաղթեց Մոսկվա, ուր ընդ միշտ բնակութիւն հաստատեց։

Այս Ազազարն էր, որ Լազարեան հրաչակաւոր տոհմի նախահայր հանդիսացաւ։ Պարսկաստանից բերած իր մեծ հարստութիւնը նա գործի մէջ մտցրեց։ Մոսկվայի շրջակայքում բացեց դիպակի և կերպասի գործարաններ, որոնք մեծ հռչակ ստացան։ Բերել տալով Ասիայից և Եւրոպայից հմուտ վարպետներ, Լազարեանները այնքան բարեկարգեցին իրանց գործարանները, որ նրանք համարձակ մրցում էին ֆրանսիական գործարանների հետ։ Ռուսաստանում այդպիսի գործ դեռ գոյութիւն չունէր. Եկատերինայի պալատը Լազարեաններից էր գնում դիպակ և այլ ազնիւ գործուածքներ։ Խոշոր ծառայութիւններ էին մատուցանում այդ ջուղայեցի հայերը ռուսական արդիւնագործութեանը։ Նրանք գնեցին մի մեծ գիւղ Մոսկվայի մօտ, ուր փոխադրեցին իրանց գործարանները և բազմաթիւ ռուս բանուորներ այստեղ ոչ միայն լաւ գործ էին գտնում, այլ և սովորում էին այդ նոր արհեստը։ Եկատերինա կայսրուհին

գնահատեց Ազազարի ծառայութիւնները և ընդունեց նրան ու նրա տոհմը ռուսաց ազնուականութեան մէջ։

Բայց Լազարեանները միայն հարուստ վաճառականներ չէին։ Այդ տոհմին տուած էր հասարակական լայն գործունէութեան մի հաղուագիւտ, զարմանալի եռանդ։ Կարճ միջոցում յայտնի դառնալով ամբողջ Ռուսաստանին, հասնելով փառքի և բարեկեցութեան բարձր աստիճանին, նրանք չը մոռացան իրանց խեղճ ազգը, չը մոռացան և այն երկիրը, որ հիւրընկալել էր նրանց։ Լազարեանների համար կեանքի օրէնք, բնաւորութիւն է դառնում հասարակական բարի գործեր կատարելը։ Նրանք չեն խնայում իրանց ահագին հարստութիւնները, օգուտ են քաղում իրանց ազդեցիկ դիրքից՝ իրանց ազգակիցներին օգնելու, լուսաւորիչներ անելու համար։ Ռուսաստանի հայ գաղթականութիւնը, այս զարմանալի տոհմի շնորհիւ, ունի ևս դրաւիչ է դառնում մեզ տեղերի հայերի համար։ 1760-ական թուականներին հայկական մի նոր գաղութ էլ է ուեքանում հիւսիսային Կովկասում. դա Մոզդոկն էր։

Ահա մօտաւորապէս ինչ պատկեր էր ներկայացնում Ռուսաստանի հայ գաղթակա-

նութիւնը այն ժամանակ, երբ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը գնաց նրան հովանաւորելու։

Մենք տեսանք որ Ռուսաստանը, գոնէ Պետրոս Մեծի ժամանակ, Գանձասարի թեմն էր. տեսանք նոյնպէս, որ դա մի բնական դրութիւն էր, քանի որ Ղարաբաղի ազատամարտական շարժման պարագլուխները Գանձասարի կաթողիկոսի հետ էին գործում և նրա հետ էլ քաղաքական կարևոր դիմումներ էին անում ռուսաց արքունիքին։ Բայց Էջմիածինը միշտ պայքար ունէր Գանձասարի հետ թեմերի և իրաւասութեան պատճառով։ Ինչպէս երևում է, Պետրոսի մահից յետոյ Էջմիածինը կարողացաւ առ ժամանակ իր իրաւասութեան ենթարկել Ռուսաստանի հայերին։ Դա, երևի, այն ժամանակն էր, երբ քաղաքական շարժումը խլացել էր Ղարաբաղում։

Սիմէոն կաթողիկոսը, որ ամեն կերպ աշխատում էր փոքրացնել Գանձասարի կաթողիկոսութեան նշանակութիւնը և տալ նրան մատնաւոր, թեմական մի առաջնորդութեան կերպարանք, յանկարծ իմանում է որ Ատրպատականի հայերը դուրս են եկել Էջմիածնի իրաւասութեան տակից և հպատակ-

վել են Գանձասարին։ Ինչն էր դրա պատճառը,—մենք չը գիտենք։ Կարող ենք միայն ասել որ այդ ժամանակ Գանձասարում կաթողիկոս էր Յովհաննէս Հասան-Ջալալեանը, որ Նայլի կաթողիկոսի նման մեծ եռանդով աշխատում էր Ղարաբաղի ազատութեան համար *)։

Ռուսաստանի հայ դպրութեան ամենանշանաւոր մասի—Աստրախանի այդ վարմունքը հարկադրեց Էջմիածնի կաթողիկոսին աւելի ազդու միջոցների դիմել՝ այդ թեմը իր իրաւասութեան տակ պահելու համար։ Նա վճռեց դիմել Եկատերինա կայսրուհուն և խնդրել, որ ինքը միայն ճանաչվի կաթողիկոս Ռուսաստանի հայերի համար։ Պէտք է ասել որ Սիմէոնը իր նախորդների պէս չէր, որոնք անտարբերութեամբ էին վերաբերվում Ղարաբաղի քաղաքական շարժման և աշխատում էին առհասարակ հեռու մնալ նրանից։ Նա ոչինչ վատնդ և անդարմարութիւն չը տեսաւ, որ հայոց ընդհանրական կաթողիկոսը խնդրէ քրիստոնեայ պե-

*) Այդ ազատութեան գործի համար էլ Յովհաննէսը վերջը նահատակվեց Շուշու Իբրահիմ խանի ձեռքով։

ատութեան ուշադրութիւնը պարզական լուծիչ տակ հեծող իր հօտի վրա։

1766 թուականին Սիմէոն կաթողիկոսը Պետերբուրգ ուղարկեց Դաւիթ վարդապետին։ Վարդապետը պիտի ներկայացնէր կայսրուհուն նրա գրած մի կոնդակը, նոյնպէս և մի քանի տուրքերի մասունքներ։ Կոնդակի մէջ Սիմէոնը խնդրում էր, որ կայսրուհին մի հրովարտակով հաստատէ Էջմիածի իրաւասութիւնը Ռուսաստանում ապրող բոլոր հայերի վրա։ Բայց, ինչպէս երևում է, Դաւիթ վարդապետը ուրիշ յանձնարարութիւններ և խնդիրքներ էլ էր տարել, որոնք վերաբերվում էին հայերի դրութեան։ Այսպէս պիտի ենթադրենք մենք, դատելով Եկատերինայի պատասխանից։ Այդ պատասխանը ճիշտ այնպէս էր, ինչպէս խնդրել էր կաթողիկոսը. 1768 թուականի յուլիսի 30-ին էր նա գրված հրովարտակի ձևով, որ ոչ միայն Էջմիածնի թեմ էր հրատարակում Ռուսաստանի հայերին, այլ և վկայում էր թէ կայսրուհին իր հովանաւորութեան տակ է ընդունում կաթողիկոսին, հայ իշխաններին ու ամբողջ ազգը և յուսադրում է ամենքին իր ողորմածութեամբ։

Պետրոս Մեծի հրովարտակների կրկնու-

թիւնն էր դա և այդ յաւաղրութիւնը պարզապէս այն էր նշանակում թէ սուտաց կայսրութիւն ի նկատի ունի, որ հայերը ճնշված, սարկական դրութեան մէջ են գտնվում և ուզում են ազատվել այդ դրութիւնից։ Այս մեծ ուշադրութեան պատճառները հասկանալու համար պէտք է ի նկատի ունենալ, որ Եկատերինան ամեն բանի մէջ աշխատում էր հետևել Պետրոս Մեծին, իրագործել նրա դիտաւորութիւններն ու ձգտումները։ Այսքանն արդէն բաւական է, որ մենք բնական համարենք Եկատերինայի համակրանքը դէպի հայերը, որոնք Պետրոս Մեծի առանձին ուշադրութեան առարկան էին։

1768 թուականի ամառը, երբ վերոյիշեալ հրովարտակը գրվեց Սիմէոն կաթողիկոսի անունով, պատրաստվում էր ռուս-թիւրքական պատերազմը, առաջինը Եկատերինայի թագաւորութեան ժամանակ։ Թիւրքիան յաղթահարելը կեանքի և մահվան հարց էր Ռուսաստանի համար. դա նշանակում էր ապահովել հարաւային Ռուսաստանի տնտեսական բարեկեցութիւնը և հասատավել Սև ծովի հիւսիսային ափերում։ Եկատերինան, հետևելով Պետրոս Մեծին, մտածում էր Թիւրքիային մահացու հարուածներ տալ, ապատամ-

բեցնելով նրա դէմ նրա քրիստոնեայ հպատակներին։ Հայերը արևելքում աչքի ընկնող մի ժողովուրդ էին և ռուսաց կայսրութիւնն չէր կարող նրանց աչքաթող անել մի ամբողջի ժամանակ, երբ մահմեդական լուծի տակ հեծող քրիստոնէութիւնը կարող էր քարոզ անող ոչ հանդիսանալ նոյն մահմեդական աշխարհում։

Պատերազմը յայտարարելուց յետոյ ռուսաց զորքերի գործակալները յայտնվեցան Յունաստանում, Զերնոգորիայում, Սերբիայում, Վրաստանում և սկսեցին քարոզել մի ընդհանուր ապստամբութիւն։ Նրանք ունէին իրանց հետ Եկատերինայի ստորագրած թղթերը, որոնց մէջ ամենազրական խօսքերով խոստացվում էր ազատութիւն անհաւատների լուծից, եթէ քրիստոնեաները զէնք բարձրացնեն։ Այդ կոչերը գրվեցան 1769 թուականի սկզբում։

Արևելքը տրդնվում էր։ Արևելեան արիւնոտ հարցը կարծես իր արդարացի լուծումն էր ստանում։ Քրիստոնեաների ընդհանուր ապստամբութիւնը, միացած ռուս զօրքերի հետ, պիտի ջարդ ու փչուր անէր Թիւրքիան, վոնտէր Թիւրքերին Եւրոպայից։ Այսպէս էր մտածում և խոստանում Եկատերինան։ Եւ

նրա կոչերը արձագանք գտան. ազատամարտեան դրօշակ բարձրացրեց Յունուտանը, Զերնոզօրիան ոտքի կանգնեց, Վրաստանը, ուստաց մի զօրաբաժնի հետ միանալով, զէնքը դարձրեց թիւրքերի դէմ։

Յոյսերի, գեղեցիկ ակնկալութիւնների ժամանակ էր։ Հայերը չէին կարող անտարբեր մնալ այդ ընդհանուր ոգևորութեան մէջ։ Ռուս-թիւրքական պատերազմը աջող էր ռուսների համար. ամեն ինչ ցոյց էր տալիս որ հիւսիսի կայսրութիւն պիտի կարողանայ իրագործել իր մեծ միտքը։ 1771 թուականին արդէն հաշտութիւն կնքելու մասին էին խօսում, բայց թիւրքերը չէին կամենում մեծ զիջողութիւններ անել, ուստի պատերազմական գործողութիւնները նորից սկսվեցին. յաջորդ տարին երկու կողմերի լիազօրները նորից հաւաքվեցան հաշտութեան պայմանները որոշելու, բայց զարձեալ համաձայնութեան չեկան։ Պատերազմը և բանակցութիւնները շարունակվեցին մինչև 1774 թուականը։

Ահա այդ կարևոր միջոցներին, երբ ռուսների առաջարկած պայմանների մէջ տեղ էին բռնում վրացիները, լոլները և այլ քրիստոնեայ ազգութիւններ, Սիմէոն կաթողիկոսը

Ռուսաստանի հայերի հովիւ նշանակեց Յովսէփ Արղութեանին։ Հարկաւոր էր մի լաւ, հանգստացող մարդ ունենալ Ռուսաստանում, այն Ռուսաստանում, որ իր ձեռքն էր առել քրիստոնեաների ազատութեան հարցը։

Աւելի լաւ ընտրութիւն Սիմէոնը չէր կարող անել։ Յովսէփ արքեպիսկոպոսը հէնց այն մարդն էր, որ հարկաւոր էր այդ ժամանակ Ռուսաստանում։ Զէնք կարող ասել թէ Յովսէփը այդպիսի մի գործունէութեան համար լրակատար պատրաստված էր։ Ո՛չ, նա մինչև իսկ ռուսերէն լեզուից մի լաւ չը գիտէր։ Բայց բնական խելքը, ընդունակութիւնները վերացրին բոլոր պակասութիւնները և Յովսէփը դարձաւ Ռուսաստանում յայտնի մարդկանցից մէկը։

Նրա աթոռանիստ տեղը, իհարկէ, Աստրախանը պիտի լինէր, իբրև մի քաղաք, ուր հաւաքված էր հայերի մի խոշոր թիւ։ Սակայն Ռուսաստանի թեմը ինքն ըստ ինքեան շատ փոքրիկ էր. այդ կարելի է իմանալ հէնց նրանից, որ երբ Յովսէփը գնաց Աստրախան, այնտեղ կային 561 հայ ընտանիք։ Բացի Ղզլար և Մոզդոկ քաղաքներից, փոքրիկ գաղութներ կային և Պետերբուրգում ու Մոսկվայում։

Այս էր նոր առաջնորդի ամբողջ հասը։ Բայց Յոսեֆի ժամանակ և Յոսեֆի անխոնջ ջանքերով Ռուսաստանի հայոց թեմը չատ մեծացաւ նորանոր գաղթականութիւնների միջոցով։

ԿԱՅՍՐՈՒՀԻ ԵԿԱՏԵՐԻՆԱ II

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՂՐԻՄԻՑ

Ռուս-Թուրքական առաջին պատերազմի վերջը. Քիւչիւկ Կայնարջիի դաշնադրութիւնը — Ղրիմը անկախ. Պոտեմկին — Ռուսաց քաղաքականութիւնը Ղրիմի վերաբերմամբ — Քրիստոնեաներին գաղթեցնելը Ղրիմը թուլացնելու նպատակով — Յովհաննէս Լազարեան — Շահին-Գիրէյ և հայերը — Գաղթողների թիւը — Հայ գաղթականները Դոնի տափարակներում. զբաղմունքներ, կորուստներ — Արդարութեանը Պետերբուրգում — Նոր-Նախիջևանի հիմնարկութիւնը — Արտօնութիւններ — Ս. Խաչ վանքը. տպարան, դպրոցներ — Հայերի ինքնավարութիւնը։

1774 թուականի յուլիսի 21-ին Քիւչիւկ-Կայնարջի անուանով տեղում կնքվեց հաշտութիւն, որ վերջ էր տալիս ռուս-թուրքական առաջին պատերազմին։ Հաշտութեան պայմաններից միայն մէկի մասին կը խօսենք մենք, որովհետև անմիջապէս կապ ունի մեր պատմութեան հետ։ Դա Ղրիմի հարցն էր։

Ղրիմի թերակղզին թաթարական մի առանձին խանութիւն էր կազմում. բայց նա միանգամայն անկախ պետութիւն չէր, այլ

հաստատված էր Թիւրքիային։ Որքան որ Օսմանեան պետութիւնը Եւրոպայի համար մի տեղ զինուորական ոյժ էր ներկայացնում և աշխարհակալութիւններ անում, Ղրիմը, իբրև այդ անընկճելի պետութեան վասալ, այնքան ուժեղ էր և լանդուզն, որ մի կատարեալ պատուհաս էր հանդիսանում մանաւանդ թոյլ Ռուսաստանի համար։ Թաթարները անդադար արշաւանքներ էին գործում դէպի ռուսաց հողերը։ Հարաւային Ռուսաստանը անտեսական բարեկեցութեան մասին չէր էլ կարող մտածել, ունենալով այդպիսի անհանդիստ, կեղեքիչ հարևաններ։

Բայց տա ռուսաց պետութիւնը սկսում է կազմակերպվել, ուժեղանալ. նրա համար կենտրոնական անպակաս նշանակութիւն է ստանում թաթարներին զսպելը, Ղրիմի խանութիւնը անվնաս դարձնելը։ Այդ ուղղութեամբ սկսում է գործել Պետրոս Մեծը։ Բայց նրան չաջողվեց Սև ծովի ափում հաստատվել։ Եկատերինա Մեծը Պետրոսից աւելի բախտաւոր եղաւ։ Նրան աջողվեց զէնքի ոյժով հարկադրել Թիւրքիան, որ նա հրաժարվի Ղրիմի վրա ունեցած իր վենատական իրաւունքներից։ Սկզբում այդքանն էլ բաւական էր ռուսաց քաղաքականութեան համար. Եկա-

տերինան չէր ուզում միանգամից ձեռք դցել Ղրիմը. սկզբի համար բաւական էր և այն, որ Ղրիմը ճանաչվեր միանգամայն անկախ պետութիւն, այսինքն այլ ևս հպատակված չը լիներ Թիւրքիային։ Իբրև բոլորովին անկախ պետութիւն՝ թաթարական խանութիւնը չատ թոյլ կը լիներ և չէր կարող ընդդիմանալ Ռուսաստանին, որ այդ ժամանակ ամենայն եռանդով իւրացնում էր Եւրոպայի գինուորական կարգերը և արդէն չատ ուժեղ էր։

Թիւրքիան չատ լաւ էր հասկանում թէ ինչ նպատակով է Ռուսաստանը անկախութիւն պահանջում Ղրիմի համար։ Նա աշխատում էր չընդունել այդ պայմանը, բայց վերջ ի վերջոյ, իբրև յաղթված կողմ, ստիպված եղաւ ընդունել։ Քիւչիւկ-Կայնարջիի դաշնադրութեամբ ճանաչվում էր Ղրիմի անկախութիւնը, և բացի դրանից, Ռուսաստանը մի քանի տեղեր էր ստանում Սև ծովի վրա։

Բայց Ղրիմի անկախութիւնը չատ կարճ դիանք ունեցաւ։ Ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ անուն հանեց մի մարդ, որին վիճակված էր Եկատերինայի թագաւորութեան սիւնը դառնալ և հանել մի անօրինակ փառքի։ Այդ մարդը Գրիգորի Ալէք-

ասնդրօվիչ Պոտեմկինն էր, հայ ազգի հովանաւորը և Յովսէփ Արղութեանի բարեկամը։

Հին միջակ-ազնուական մի ընտանիքի որդի, Պոտեմկինը 1774 թուականից իր վրա է դարձնում Եկատերինայի առանձին ուշադրութիւնը և դառնում է նրան շատ մօտիկ, սիրելի մարդ։ Ռուսաց արքունիքում կային և ուրիշ բարձր պաշտօնեաներ, որոնք կայսրուհու սիրելիներն էին, բայց Պոտեմկինը ամենքին իր եռեռում թողեց. կարճ միջոցում նա ամենաուժեղ մարդն էր պետութեան մէջ և Եկատերինան ամեն կերպ վարձատրում ու փայփայում էր նրան։ Պետական բոլոր գործերը Պոտեմկինի ուղածի պէս էին զեկավարվում. արտաքին քաղաքականութիւնը նրա ձեռքումն էր և օտար պետութիւնների ներկայացուցիչները նրա ընդունարանումն էին խմբվում։ Եկատերինան նրա խորհուրդներով էր մինիստրներ նշանակում։

Շուտով Պոտեմկինը նշանակվեց հարաւային Ռուսաստանի կառավարիչ։ Հեռանալով Պետերբուրգից, նա [illegible] ուրկվեց առաջին մարդու իր դիրքից և հեռուից էր զեկավարում ընդհանուր պետական գործերը։ Փառքի և ոյժի զգաստնակիտին հասած մի մարդ, նա ունէր շատ սարսափելի կուրութիւն

ներ, շատ քմահաճութիւններ։ Հարաւային Ռուսաստանի փոխարքան ապրում էր իբրև արևելեան մի վեհապետ։ Նրա պալատում ապրում էին 200 զեղեցիկ կանայք, ծաղրածուներ, երաժիշտներ։ Նա կամ տենդային գործունեութիւն էր ցոյց տալիս, կամ անտարբերութեան էր մատնվում, ոչինչ չէր անում։ Կամ դուրս էր գալիս չքեղ հագուստով, որ ծածկված էր ոսկեղենով և չքանչաններով, կամ թէ ընդունում էր զեսպաններին՝ խալաթ ու հոգաթափեր հագած։ Փողի պակասութիւն, իհարկէ, չը կար. միլիոններ էին գտնվում նրա տրամադրութեան տակ և ոչ մի մեծ ծախսից նա չէր քաշվում*)։ Մեծամեծ ծրագիրները անդադար յաջորդում էին իրար այդ փառահեղ իշխանի գլխում։ Եւ այդ ծրագիրներից շատերը իրագործվում էին. հարաւային Ռուսաստանում քաղաքներ հիմնվեցին, կուլտուրական շատ գործեր սկսվեցին։ Պոտեմկինը Նովոռոսիյսկի բարօրութեան ստեղծողը հանդիսացաւ։

Իբրև Ղրիմի սահմանակից երկիրների

---

*) Շլոսսեր իր «Պատմութիւն տասնութերորդ դարի» աշխատութեան մէջ ասում է, որ Պոտեմկինի մահից յետոյ մնաց 40 միլիոնի կարողութիւն։

փոխարքայ, Պոտեմկինը սկսեց մտածել այդ խնդրութիւնը ոչնչացնելու մասին։ Նա անտես էր անում, որ տակ էր տալիս Քիւչիւկ-Կայնարջիի դաշնագրութեան պայմանները։ Եկատերինայի սիրելին շատ չէր հետաքրքրվում եւրոպական քաղաքականութեամբ, այլ ամենամեծ ուշադրութիւն նուիրում էր արեւելեան հարցին։ Ոչնչացնել խլում մի ազգ, սիրապետել հարաւին, ազատել քրիստոնեաներին—ահա ինչ էր նա ուզում։ Ամենից առաջ պէտք էր նուաճել Ղրիմը, և նա իր նամակների մէջ թախանձում էր Եկատերինային իրագործել այս միտքը։ Ժամանակը շատ յարմար էր։ Ղրիմի մէջ կազմվել էին երկու, իրար հակառակ կուսակցութիւն—թիւրքական և ռուսական։ Պոտեմկինը ամեն ջանք գործ էր դնում, որ սիրապետող հանդիսանայ ռուսական կուսակցութիւնը. երբ դրամական կաշառքները չէին կարողանում պատշաճաւոր ազդեցութիւն գործել, երկրի ներսն էին մտնում ռուսաց զօրքերը և պալքարը վճռվում էր սուիններով։ Թիւրքիան իր թուլութեան պատճառով չէր կարողանում ազգու բազմաներ ներկայացնել այդ միջամտութիւնների դէմ, որոնք Ղրիմի անկախութիւնը լոկ անուանական մի բան էին դարձ-

նում։ Ռուսաց կուսակցութիւնը զօրեղացաւ, Շահին-Գիրէյ, ռուսների թեկնածուն, խան դարձաւ ռուս զօրքի օգնութեամբ և Դէվլէթ-Գիրէյ խանը, թիւրքական թեկնածուն, փախաւ Թիւրքիա։

Բայց այդքանով չը բաւականացաւ Պոտեմկինը։ Պէտք էր միանգամայն թուլացնել Ղրիմի խանին, որպէս զի նա ինքը հարկադրված լինի դիմել ռուսներին և նրանց օգնութիւնը խնդրել։ Այդ քաղաքականութիւնն էլ աջողվեց։ 1778 թուականին Պոտեմկինը տեսնում էր, որ Ղրիմի անկախութեան վերջ տալու ամենայարմար ժամանակն է։ Եւ նա վճռեց մի նոր հարուած էլ տալ Շահին-Գիրէյ խանին, մի հարուած, որ վերջնականապէս պիտի ազատացնէր խանին և դնէր նրան մուրացկանի, ռուսներից ողորմութիւն խնդրողի դրութեան մէջ։

Այդպիսի դրութիւն ստեղծելու համար պէտք էր հանել Ղրիմից նրա քրիստոնեայ ազգաբնակութիւնը, այսինքն հայերին և յոյներին։ Այդ քրիստոնեաներն էին խանի եկամուտների գլխաւոր աղբիւրը. նրանց ձեռքումն էին գտնվում Ղրիմի լեռնային մասի արդիւնաբերութիւնը, այգեգործութիւնը և երկրագործութիւնը. հարկերի և տուրքերի

ամբողջ ծանրութիւնը նրանց վրա էր ընկած։ Քրիստոնեայ ազգաբնակութիւնը երկրից դուրս հանելուց լետոյ, Ղրիմի տնտեսական կացութիւնը պիտի շատ ընկներ և խանի եկամուտները պիտի պակասէին շատ զգալի կերպով։

Քրիստոնեաներին դաղթեցնելու ծրագիրը յանձնուեց Ղրիմի սահմաններում եղած ռուս զօրքերի հրամանատար, հռչակաւոր Սուվորովին։ Պատրաստակ էր ստեղծված այն, որ Ղրիմի քրիստոնեաներին վտանգ է սպառնում մահմեդականների կողմից, որոնք մի քանի անգամ ապստամբութիւն են յարուցել նրանց դէմ և ասել են թէ մի անգամ պիտի կոտորեն բոլոր քրիստոնեաներին։ Շահին-Գիրէյ խանի և նրա պաշտօնեաների կողմից Սուվորով դիմադրութեան հանդիպեց. բայց և այնպէս, այդ արդէլքը այնքան լուրջ չէր, որ ռուսաց զօրքերը չը կարողանային դլուխ բերել այդ գործը *)։

Ահա մի քանի մանրամասնութիւններ, որոնք պատկերացնում են այդ նշանաւոր դաղթականութիւնը։

*) Дубровинъ—«Присоединеніе Крыма», Спб., 1885, հատ. I, եր. V.

ԻՇԽԱՆ Գ. ՊՕՏԵՄԿԻՆ

Քրիստոնեաների թիւը հասնում էր 30 հազարի։ Գործի նախաձեռնողը և անմիջական ղեկավարը լոյների միտրոպոլիտ Իգնատիոսն էր, որին դիմեց ռուսաց կառավարութիւնը, տալով 6550 ռուբլի փող և խոստանալով մինչև մահ պահել նրան գաղթական լոյների առաջնորդի պաշտօնում։ Նոյն խոստումն ստացաւ հայերի առաջնորդ Պետրոս վարդապետ Մարկոսեան, որին տրվեց 2820 ռուբլի, իսկ հայ-կաթոլիկների առաջնորդ Յակոբ քահանան ստացաւ 1250 ռուբլի։

Հեշտ էր առաջնորդներին այսպէս կաշառելը. բայց այնքան հեշտ չէր գաղթող ժողովրդի լօժարութիւնը ձեռք բերելը։ Հայերը, ճիշտ է, օգնում էին ռուսներին, տեղեկութիւններ տալով այն ամենի մասին, ինչ կատարվում էր Ղրիմում *). բայց, ինչպէս երևում է պատմական բազմաթիւ գրքերից **), ռուսասէր կուսակցութիւնը շատ մեծ չէր հայերի մէջ. այդ կուսակցութիւնը միացաւ գաղթելու ցանկութիւն յայտնած լոյների հետ, իսկ մնացած մասը տատանվում

*) Այդպիսի հայերի մէջ շատ յայտնի դեր կատարել է մի ոմն հարիւրապետ Մարկոս։

**) Дубровинъ, հատոր II.

էր, վախենալով մի անծանօթ երկիր գնալու հեռանկարից։

Մենք տեսանք թէ երբ և ինչ հանգամանքների մէջ գրաւիչն ասացաւ Ղրիմի հայ գաղթականութիւնը։ 400 տարուց ի վեր Ղրիմի սքանչելի վայրերում ապրած հայ ժողովուրդը չէր կամենում թողնել իր տունն ու տեղը և գնալ օտար երկիր։ Համաձայն չէին և թաթարները, որոնք անդադար զիմում էին Շահին-Գիրէյին և թէ իրանց, թէ գաղթականների կողմից խնդրում էին ազատների մասգրութեան ուսմն ասնել։

Ահա ինչ էին գրում Ղրիմի տանուտէրերը խանին.

«Մեր գաւառում յոյն և հայ մի քանի հարստակներ ծանօթացան ռուս հրամանատարների հետ, որոնք համոզեցին նրանց ծախել իրանց կալուածները և պատրաստվել ճանապարհվելու։ Այս գործը սկսող հայերից ու յոյներից հարցնում էին միւս հայերն ու յոյները՝ թէ ինչ պատճառով ծախել, մենք մտադիր չենք այստեղից հեռանալ։ Այն ժամանակ յոյների այդ զվարճարները, չը կամեցողներին վախեցնելու համար, պատասխանեցին թէ մեզ, բոլոր հարստակներիս, Ղրիմի խանը զիջել է ռուսաց կառավարութեան։ Այս գործի տեսիլով

մեզ զազանի կերպով խնայ տուին հայ քահանաներից մի քանիսը թէ ռուսաց գեներալը և զեսպանը չանք են գործ դնում՝ այստեղի հարստակներին ռուսաց հողը փոխադրելու և հարստակները վրաստացած խնդրում են մեզ, որ այդ փորձանքից նրանց պաշտպանենք» *)։

Հայերն էլ հետևեալ ագերագիրը ներկայացրին Շահին-Գիրէյին.

«Մենք երեք հարիւր տարուց ի վեր ձեր ծառաներն ու հարստակներն ենք և զոհ կերպով ընակվում ենք ձեր պատութեան մէջ, երբէք անհանգստութիւն չենք կրել. այժմ մեզ ուզում են այստեղից հանել ու քշել։ Աստուծու, մարգարէի և ձեր նախնիքների անունով պաղատում ենք, այդ բռնութիւնից ազատեցէք մեզ, ձեր տարուկներին. մենք միշտ ձեր կեանքի համար աղօթող պիտի լինենք Աստուծուն» **)։

Շահին-Գիրէյը իր կողմից տրաւ ինչ կարող էր. հրամաններ արձակեց, որ ձերբակալվեն ժողովրդի մէջ զաղթելու միտք տարածողները, զնամներ տրաւ Սուվորովին, խնդրեց չը զրկել իրան այդքան հարստակներից,

*) Дубровинъ, հատ. II, եր. 561.

**) Պուշնէրեան — «Պատմ. գաղթ. Խրիմու հայոց», Վենետիկ, 1895, եր. 19։

մինչև իսկ պատգամաւորներ ուղարկեց Պետերբուրգ՝ Եկատերինային խնդրելու համար։ Բայց ոչ ոք կառավարութիւնը անլսողդդ մնաց. նա իւրաքանչիւր դէպքում յայտնում էր խանի կառավարութեան, թէ քրիստոնեաների դաղթականութիւնը կատարվում է նրանց ցանկութեան համաձայն, թէ Ռուսաստանը չէ կարող այդ քրիստոնեաներին թողնել վանդի մէջ։

Գործը պէտք էր կատարել արագութեամբ, որպէս զի թէ դաղթող ազգաբնակութեան և թէ Ղրիմի թաթարների անհամաձայնութիւնը նոր դժուարութիւններ չը յարուցանէր։ Պէտք էր նոյնպէս աղել հալերի վրա, որ նրանք չը յամառեն երկար։ Ահա այսպէս Պոտեմկինին օգնեց Յովհաննէս Լազարեանը, որի խորհրդով Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը, Պետրոս վարդապետի միջոցով, դիմում արաւ Ղրիմի հալերին, յորդորելով նրանց դաղթել Ռուսաստան։

Քրիստոնեաներին ոչ կառավարութիւնը խոստանում էր տալ նրանց այն դոյքերի արժէքը, որոնց չէր կարելի փոխադրել. բայց դրանից, Ռուսաստանում նրանք պիտի ստանային զանազան առանձնաշնորհումներ և արտօնութիւններ։ Եւ դաղթականութիւնը,

կամայ թէ ակամայ, սկսվեց 1778-ի յուլիսին։

Դաղթականներին Ղրիմից դուրս տանողները Սուվորովի զօրքերն էին, որոնք շատ դէպքերում դիմում էին ընտանիների, այնպէս որ դլխաւոր հրամանատար կոմս Բամանցեվ հարկաւոր համարեց հրամանագրել Սուվորովին, որ ոչնի կերպով հարկադրական միջոցներ չը գործադրվեն *)։ Դաղթականութեան համար պատրաստված էին 6000 սայլեր։ Ժողովուրդը հեռանում էր իր երկրից խմբերով. վերջին խումբը սեպտեմբերի վերջին դուրս եկաւ, և հոկտեմբերի վերջերին դեռ չէր դադարել դաղթականների հոսանքը։ Շահին-Գիրէյը շատ հաշվեց իրաւութեան հետ, մանաւանդ երբ ստացաւ ռուսաց կառավարութիւնից 50,000 ռուբլի։ Խանի եղբայրները և թաթար պաշտօնեաներն էլ ճիշտ այդքան ստացան իրանց ընտանեան համար։ Իսկ Բամանցեվ գրում էր Եկատերինային. «Քրիստոնեաներին դուրս բերելը կարելի է համարել մի նշանաւոր նահանգի նուաճում»։ Դաղթականութեան բոլոր ծախսերը 130 հազար ռուբլուց աւել չէին։

Իւրաքանչիւր ազգութիւն առանձին տեղ

*) Дубровинъ, հատ. II, եր. 698.

պիսի սաստիկ և ապրիր անխնայն օտարների հետ։ Հայ-լուսաւորչականների համար տեղ նշանակվեց Գոն գետի ափին, Թոսսով քաղաքի մօտ, իսկ հայ-կաթոլիկները տարվեցան Եկատերինոսլավ քաղաքը, որ նոր էր հիմնել Պոտեմկինը ի պատիւ Եկատերինայի։

Այստեղ դնում ենք գաղթական հայերի թիւը, ինչպէս նշանակված է ռուսաց այն ժամանակվայ պաշտօնական թղթերում.

Գաղթել են.

Կաֆայից (Թէոդոսիա)	5511	հոգի
Բաղչիսարայից	1375	»
Դարասուբազարից	2809	»
Գէօզլովից	1304	»
Ակմէչէթից (Սիմֆերոպոլ)	259	»
Հին Դրիմից	160	»
	11,418	քաղաքացի

Գիւղերից.

Թաթլի	22	հոգի
Մէլեք	72	»
Կամիշլակ	121	»
Սարա	224	»
Զուրուկսու	40	»
Թոփչակ	10	»
Սուլթան-Սարա	57	»
Ուրթալակ	406	»
	952	գիւղացի

Այս բազմութիւնը թափվեց Գոնի սափարակ ափը և ներկայացնում էր իւրաքանչիւր բազմամարդ գաղթականութիւնն ցաւալի պատկերը։ Մի ժողովուրդ էր դա, կարված իր հողից ու ջրից, ընկած բոլորովին օտար, անծանօթ երկիր, կլիմայական և աշխարհագրական անսովոր պայմանների մէջ։ Տեղաւորել այդքան բազմութիւնը, հոգի ու կենդանութիւն ներշնչել նրան, հաստատել նրա մէջ կարգ ու կանոն և ստեղծել ամենքի համար մի լաւ վիճակ—այս բոլոր հոգները վերապահված էին Արդութեանին։

Գաղթականները երկար ժամանակ մնացին ուստից հաստատուն օթեանի։ Նրանք ապրում էին վրանների մէջ Եկատերինոսլավ և Սամար քաղաքներում ու շրջականներում։ Դառն ու մահարեր էր այդ ապրուստը։ Տարածվեցին հիւանդութիւններ, ինչպէս վկայում է ինքը, Յովսէփ արքեպիսկոպոսը *), ժողովուրդը կոտորվում էր արևից, անձրևից ու ձիւնից։

Սաստիկ, անմոռանալի ցաւ էր մանաւանդ թողած հայրենիքի կորիծը։ Դրիմը չէր դուրս գալիս Ազովեան միանման սափարակ-

*) «Գուսանք» ամսագիր, 1863, մայիս։

ներում ցրված մարդկանց մոքից. նրա կարծրը մաշում, գերեզման էր տանում շատերին։ Շատերը ազաչում, պաղատում էին, որ իրանց թողլ տան վերադառնալ Ղրիմ, շատերը փորձում էին դիշերով փախչել գնալ։ Բայց իզուր. կոզակները չէին թողլ տալիս։ Գաղթականությունը, բացի Ղրիմի խանին մնանկացնելուց, ռուսական այն ահագին նշանակությունն ունէր Ռուսաստանի համար, որ նրա հարաւային մասերի սակաւամարդ, անմշակ անապատներում բնակություն էր հաստատում մի աշխատասէր ժողովուրդ, բաղկացած վաճառական, արհեստաւոր և երկրագործ տարրերից։ Նրա համար այլ ևս վերադարձի ճանապարհ չը կար։ Ինչպէս պատմում են, կարծած մարդիկ, տեսնելով խոտերի մէջ «զաթիկ» կոչված փոքրիկ միջատները, առնում էին նրանց իրանց տրի մէջ և հարցնում էին. «Ղրիմու ճամբան որն է» *)։

Այնքան ցաւերն ու դժբախտությունները փարատելու համար հարկաւոր էր սիրաշահել գաղթականների սիրտը։ Եւ ռուս կառավարությունը շատ ուսաստաձևն էր այդ կողմից։ Այնքան ջանքերից ու ծախսերից

*) Փուշնէրեան, եր. 33.

լեռոյ այժմ պէտք էր գաղթականների նոր հայրենիքը այնպիսի պարմանների մէջ դնել, որ ամենքը սկսեն մոռանալ Ղրիմի կլիմայական սքանչելի լատկությունները։ Ահա այդ բանի մէջ մեծ ջանքեր է գործ դնում Յովսեփ Արղությեանը և հանդիսանում է գաղթական բազմությեան խնամատար հայր։

Պատմական ճշմարտությեան դէմ շատ մեղանչած կը լինենք, եթէ այստեղ, նախքան Արղությեանի գործերին դիմելը, չը լիշատակենք մի շատ նշանաւոր հայի անունը։ Դա Յովհաննէս Լազարեանն է, Աղազար Լազարեանի աւագ որդին։ Յովհաննէսը, ինչպէս և Աղազարի միւս որդիները, ծնվել էր Ջուղայում (1735)։ Նա ունէր բնական մեծ խելք, իսկ Ռուսաստան անցնելուց լեռոյ ստացաւ կրթություն։ Մոսկվայում, իր հոր ընտանիքում ապրելը չէր կարող բաւարարություն տալ նրա սրտին։ Ուստի նա տեղափոխվեց Պետերբուրգ, մշտական բնակություն հաստատեց այդտեղ և միանգամից մուտքաւ պետական բարձր շրջաններին։ Մեծ հարստություն տէր էր Յովհաննէսը, բայց և այնպէս, մասաւ պետական ծառայության մէջ, ստացաւ բարձր աստիճաններ։ Նա պետական բանկի վարչության անդամներից մէկն էր և իրրև հա-

բուսաս ֆինանսագէտ՝ նշանաւոր ծառայութիւններ է մատուցել ռուսաց կառավարութեան։

Լազարեանը մի խոշոր կալուածատէր դառաւ։ Եկատերինայի ամենամօտիկ մարդկանցից մէկի, կոմս Գրիգորի Օրլովի առաջարկութեամբ նա դնեց զանձարանից Բօշչա անունով կալուածը, Պետերբուրգի շրջակայքում։ Դա կայսերական առոմի սեփականութիւնն էր. այնտեղ կառուցված էր և առանձին պալատ *)։ Բացի դրանից Լազարեանը դնեց բարձր Սարօպանօվների անապին կալուածները, որոնք գտնվում էին Պերմի նահանգի զանազան գաւառներում։ Այդ կալուածներում կային երկաթի, թանձի մեծ գործարաններ, հարուստ ապահանքեր. գիւղերում ապրող ճորտերի (արտաքին սեռի) թիւը հասնում էր 20 հազարի։

Հարուստ, փարթամ հայ ազնուականը այնպիսի աստիճանի հասաւ, որ այլ ևս ոչինչ չէր կարող պահանջել բախտից։ Ոչինչ չէր պակասում նրան։ Եկատերինայի թագաւորութեան բոլոր փայլուն աստղերը, բոլոր հռչակաւոր պետական մարդիկ նրա մօտիկ ծանօթներն ու բարեկամներն էին. այսպէս էին Օրլով եղբայրները, իշխան Պոտեմկին, Բեղբօրոդկօ, Վեազեմսկի, Բուտուրլին, իշխան և կոմս Զուբովներ, իշխան Սուվօրով, Կուրակին և ուրիշ շատեր։ Բօշչա կալուածը մի նշանաւոր տեղ էր, ուր յաճախ հիւր էին գալիս կայսերական ընտանիքի անդամները և Պետերբուրգը այցելող եւրոպական թագակիր անձինք ու թագաւորական տների անդամները։ Յովհաննէս Լազարեանը, իբրև սիրալիր տանտէր, ընդունում էր այդ բարձրատիճան հիւրերին արքայական ճոխութեամբ։ Եկատերինա կայսրուհին, նրա որդին ու թոռները նոյնպէս սիրում էին այցելել Բօշչան և փոխադարձաբար, Յովհաննէս Լազարեանն էլ յաճախ հրաւիրվում էր կայսերական պալատ։ Աստրխանի կայսրը չնորհեց նրան կոմսի տիտղոս։

Սակայն, այսքան փառքն ու բարեկցութիւնը Յովհաննէս Լազարեանին չը գարձրին մի անմատչելի, հպարտ իշխանաւոր, մանաւանդ մատացնել չը տուին նրան, որ նա խեղճ, ցիրուցան մի ազգի զաւակ է։ Այդ ազգի բարօրութիւնը նրա միտքն հոգսերի ա-

*) 1762 թվականին Եկատերինան, գահընկեց անելով իր ամուսին Պետրոս III կայսրին, ուղարկեց նրան Բօշչա։ Հարս օր միայն ապրեց այդ պալատում գահազուրկ կայսրը. նա այդտեղ էլ մեռաւ։

ռարկան էր։ և պերճ իշխանաւորը իր բարձր դիրքով, իր մեծ հարստութեամբ աշխատում էր ամեն կերպ օգտակար լինել իր ազգակիցներին։ Նա էր, որ հաղորդում էր կառավարութեան տեղեկութիւններ արևելեան գործերի մասին, պաշտպանում էր հայերի դատը, խնդրում էր նրանց համար շնորհներ և արտօնութիւններ։ Նա էր, որ հայերին Ռուսաստան գաղթեցնելու միտքն էր արծարծում պետական բարձր շրջաններում, համոզված լինելով որ իր ազգակիցները այդ ճանապարհով կազատվեն ասիական ընտակալների ճանկերից և խնայող ու ազատով կեանք կը գտնեն։ Հայրենիքում մնացող հայութեան մասին էլ նա մտածում էր և, ինչպէս կը տեսնենք, եռանդուն կերպով աշխատում էր որ հայերը քաղաքական ազատութիւն գտնեն։

Յովհաննէս Լազարեանը նշանաւոր է և իր լայն ու զեղեցիկ բարեգործութիւններով։ Զրկվածների, չունեորների մասւոր և նիւթական պակասութիւնները հնար եղածին չափ վերացնելու գործում նա զբաղվարվում էր լայն մարդասիրական հակայզութիւններով։ Միայն իր ազգին չէր նա նուիրաբերութիւններ անում։ Առանձնապէս պատիւ է բերում նրա անուան ու սրտին այն հանգամանքը, որ նա իր դիրքերում և գործարաններում առատաց եկեղեցիներ էր կառուցանում, դպրոցներ էր բաց անում։ Գիւղացիներին նա չէր ծանրաբեռնում զանազան տուրքերով, այլ, խնայելով նրանց, աշխատում էր խելացի անտեսութեամբ բարեկարգել իր կալուածները։

Ահա այս երևելի մարդն էր, որ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի աջակիցը դարձաւ այն բոլոր գործերում, որոնք վերաբերվում էին հայերին։ Լազարեանը հայ առաջնորդին մատրեց իր բարձրատիճան ծանօթների շրջանը. նրա միջոցով Արղութեանը ծանօթացաւ և բարեկամացաւ վերոյիշեալ պետական մարդկանց հետ, ընդունվեց կայսերական պալատում, ուր արժանացաւ Եկատերինայի առանձին բարեհաճութեան և ուշադրութեան։

Յովսէփ արքեպիսկոպոսի համար մի առանձին բախտ էր, որ իր հօտի մէջ ունէր Յովհաննէս Լազարեանի պէս մի նշանաւոր և հայրենասէր հայ։ Առանց այդ հայի աջակցութեան նա չէր կարող այնքան առաջ գնալ, այնքան աչքի ընկնող դիրք գրաւել։ Իսկապէս, եթէ Արղութեանը չունենար իր մէջ ընտիր ձիրք, ընդունակութիւններ, Լազարեանի ծա-

նոթութիւնները ոչինչ օգնութիւն չէին տալիս նրան։ Յովսէփին հարկաւոր էին նպաստաւոր հանգամանքներ, շրջան. մնացածը նա ինքը պիտէր, թէև այս էլ պէտք է ասել, որ Լազարեանը հոմարեա ամէն մի գործի մէջ նրա հետ էր։

Դրիմի գաղթականութեան ընջրջ սարին, 1779-ին, Արղութեանը գնաց Պետերբուրգ։ Յովհաննէս Լազարեանը իր ծախսով հայոց եկեղեցի էր կառուցել մայրաքաղաքի ամենանշանաւոր փողոցի, Նեվսկի պրոսպեկտի վրա, և Ռուսաստանի հայոց առաջնորդը պիտի օծէր այդ եկեղեցին։ Յովսէփը մի փառաւոր եկեղեցական հանդէս սարքեց։ Օծման ներկայ էին բազմաթիւ բարձրաստիճան անձինք։ Արղութեանը վաղօրօք պատրաստել էր քարոզ, թարգմանել էր ասել, տպագրել։ Այդ թարգմանութիւնները բաժանվեցին հանդիսական ասողներին, իսկ մի հատը, դեղեցիկ կազմի մէջ, ներկայացվեց Եկատերինային։ Կայսրուհին փոխարէնը չտարաւ նրան պնակ և պարանոցի մեծ խաչ, զարդարված ակունքներով։

Պետերբուրգ էին գնացել և Դրիմի գաղթականների ներկայացուցիչները։ Թէև այդ գաղթականները ունէին իրանց առանձին առաջնորդը, որ Պետրոս վարդապետ Մարկոսեանն էր և պիտի մնար այդ պաշտօնում մինչև մահ, բայց Յովսէփ արքեպիսկոպոսը գարձաւ գաղթականների համար միջնորդութիւններ անողը և համեստ վարդապետը ամենեին մոռացութիւն չտնէր այդ ասիթով որ և է դժգոհութիւն լայտնել։ Արղութեանը և Լազարեանը երկար աշխատեցին Պետերբուրգում գաղթականների համար։ 1779 թուականի նոյեմբերի 14-ին Եկատերինան ստորագրեց մի հրովարտակ, որ գրված էր Պետրոս վարդապետի անունով և որի մէջ հետևեալ շնորհները էր տալիս հայերին.—Ռոստով քաղաքի մօտ, ցոյց տուած սահմաններում, հայերը ստանում են 12 հազար դեսեատին հող. նրանք ազատվում են ամէն տեսակ հարկատութիւնից 10 տարի ժամանակով, ստանում են ազատ կերպով տեսակ անելու, եկեղեցիներ կառուցանելու իրաւունք։ Նշանաւոր էր մանաւանդ այն, որ հայերին տրվեց ներքին ինքնավարութիւն. նրանք հիմնում են Մագիստրատ անունով մի դատարան և կառավարվում են իրանց հին օրէնքներով ու սովորութիւններով։ Այդպիսի մի իրաւունք էլ Եկատերինան տուել էր Աստրախանի և Մոզդոկի հայերին։

Հրովարտակը և ուրիշ հարկաւոր հրամանագրերը ուղարկելով զաղթական հայերին, Յովսէփը կարգադրում է, որ նրանք սկսեն շինութիւններ կառուցանել։ Բայց ամեն ինչ դեռ վերջացած չէր. պէտք էին նոր միջնորդութիւններ, նոր աշխատութիւն՝ զանազան հարցեր կարգաւորելու համար։ Յովսէփը, ինչպէս ինքն է ասում, «երկու տարի տեղերելով ռուսաց արքունիքի դռանը», կարողացաւ վերջացնել զաղթականներին վերաբերված գործերը, իսկ 1781-ին գնում է անձամբ վերադառնալ Լինելու, անձամբ տեղաւորելու զաղթականներին։ Հանդիսաւոր կերպով օրհնում է նոր քաղաքի հիմքը և տալիս է նրան Նոր-Նախիջևան անունը։ Այդտեղ տեղաւորվեցին քաղաքացի զաղթականները։ Իսկ գիւղացիների համար հիմնվեցին հինգ գիւղեր— Զալիթը, Մեծ-Սալա, Սուլթան-Սալա, Թոփալ և Նիսվիթա։ Եկեղեցիներ հիմնվեցին նոր քաղաքում. Յովսէփը կրօնական չքեղ հանդէսներ էր կատարում, ամեն ջանք գործ էր դնում, որ ժողովուրդը հաստատ նստէ իր տեղը։ Միևնոյն ժամանակ, նա բաց արաւ Նախիջևանում դատարան, որի համար գրեց 126 յօդուածներից բաղկացած մի կանոնադրութիւն, քաղելով նրան հին հոգևոր գրքերից և ուսումնասիրելով քաղաքացիական օրէնքներ էլ։

Նոր-Նախիջևանի հիմնարկութիւնից հազիւ էր երկու տարի անցել, երբ Պոտեմկինը հասաւ իր նպատակին, միացնելով Ղրիմը Ռուսաստանին։ Այժմ, երբ թաթարական խանութիւնը ոչնչացել էր և նրա հողերը զբաղել էին ռուսների սեփականութիւն, ըստ երևոյթին, այլ ևս արգելք չը պիտի լինէր, որ Նոր-Նախիջևանի օդի և ջրի հետ չը հաշտվող հայերը վերադառնային այն տեղերը, որ թողել էին մի հինգ տարի առաջ։ Բայց այդպէս չեղաւ. Յովսէփը թոյլ չը տուեց, որ իր հիմնած քաղաքը ամայանայ։ Իսկ զաղթականները, ինչպէս հին ժամանակները Եգիպտոսից դուրս եկած հրէաները, չարունակ տրտնջում էին, որ թողել են Ղրիմի գեղեցիկ երկիրը, անուշահամ ջրերը, կանաչ լեռները ու անտառները և բնակվել են այս անալի անապատում։

Արդարացի էին այդ բողոքները։ Բայց Յովսէփը, ինչպէս երևում է, հրաման չունէր վերացնել այդ տրտունջները բնական արդար միջոցով, այլ ինքն թոյլ տալով որ ցանկացողները վերադառնան Ղրիմ։ Դրա փոխարէն, նա ամեն ջանք գործ էր դնում, որ

ժողովուրդը մոռանալ Ղրիմը և հրեաների պես Եգիպտոսի սոխի ու սխտորի համար չը հառաչէ։

Այսպէս, գաղթական ջերմեռանդ ժողովուրդը մոռանալով Ղրիմի Ս. Խաչ վանքի կարօտն էր քաշում, և Յովսէփը հիմնեց Նոր-Նախիջևանի մօտ մի վանք, որին տուեց նոյն Ս. Խաչ անունը, որպէս զի ժողովուրդը մոռանայ իր վաղեմի ուխտատեղին։ Բայց Արղութեանը միայն հարկից ազատված ընդօրինակող, կարկատող չէր. նա ունէր իր ինքնուրոյնութիւնը, իր անկախ ծրագիրները։ Ղրիմի Ս. Խաչը լոկ մի ուխտատեղի էր. իսկ Նոր-Նախիջևանի Ս. Խաչը, բացի դրանից, գարձաւ և մնաւոր առաջնորդութեան մի կենտրոն։ Պետերբուրգում ջուզալեցի Գրիգոր Խալդարեան անունով մի բարեսէր հայ տարիներից ի վեր բաց էր արել մի հայերէն ազատարան, ուր բաւական թւով հայերէն զբաղեր էին տալիս։ 1789 թուականին Արղութեանը գնեց այդ ազատարանը և փոխադրեց Նոր-Նախիջևան. երբ տարավեց Ս. Խաչի չինութիւնը, ազատարանը բացվեց այդ վանքում և սկսեց բաւական եռանդուն մի հրատարակչական գործունէութիւն։ Նոյն վանքումն էլ բացվեց դպրոց։ Թէ ազատարանը և

թէ դպրոցը բարեկարգ էին պահվում, քանի որ նրանց վրա հսկում էր Արղութեանը։

Նոր-Նախիջևանում էլ Արղութեանը բացեց Սահակեան և Մեսրոպեան դպրոցները։ Պէտք է իմանալ որ գաղթական ժողովուրդը հարուստ չէր, բաղկացած էր մեծ մասամբ արհեստաւորներից, իսկ վաճառականները առանձնապէս աչքի ընկնող հարստութիւններ չէին ստեղծել իրանց հետ Ղրիմից։ Տեղական միջոցներով անկարելի էր եկեղեցիների, դպրոցների, ազատարանի բարեկարգութիւնը ապահովել։ Ուստի Յովսէփը մի քահանայ ուղարկեց Հնդկաստան, ուր հարուստ և բարեսէր հայեր շատ կային։ Նրա լսողները արձագանք գտան այդ հարուստների սրտում։ Սուրաթում ապրող Յոհաննէս աղա Գէրապետեանը այնքան փող ուղարկեց Յովսէփին, որ նա կարողացաւ վճարել Խալդարեանի ազատարանի արժէքը և չինութիւն կառուցանել Սահակեան և Մեսրոպեան դպրոցի համար։ Ուրիշ բարեգործ հնդկաստանցիներ էլ (Մասէհ Բարաջանեան, Եղիա Մատեսի-Յակոբեան և այլն) գումարներ կտակեցին Նախիջևանի եկեղեցիներին և դպրոցին։

Չը պէտք է կարծել թէ Յովսէփ արքեպիսկոպոսը ամբողջ ժամանակ Նոր-Նախի-

ջնանումն էր ապրում։ Նա շարունակ ճանապարհորդութիւններ էր կատարում. գնում Պետերբուրգ, Աստրախան, նորից վերադարձաւ Նախիջևան։ Զբաղած այդ երկար ճանապարհորդութիւններին, նա կարողանում էր ժամանակին կարգադրել իր թեմի հայաբնակ տեղերի գործերը, կարգ ու կանոն հաստատել, նորանոր ձեռնարկութիւններ սկսել և առաջ տանել։ Իսկ Նոր-Նախիջևանը և շրջակայ հայ գաղութները, Պետրոս վարդապետ Կիրակոսեանի մահից լսում, նույնպէս մնան նրա թեմի մէջ։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՆՈՐԻՑ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Եկատերինայի ճանապարհորդութիւնը։ Արղութեանը Դրիմում. տաթարների թողած տպաւորութիւնը։ — Ռուս-Թիւրքական երկրորդ պատերազմ։ — Արղութեանը ռուսաց բանակում։ — Բենդեր քաղաքը։ — Փոքշանի և Սուչավայի հայերը։ — Հայ զօրաբաժին։ — Կիլիա բերդի անձնատուր լինելը և այնտեղի հայերի դրութիւնը։ — Իզմայիլ. տեղ պատերազմ, հայերի կրած սոսկալի տառապանքները։ — Արղութեանի եռանդուն գործունէութիւնը։ — Պետերբուրգում. Ցարութիւն Լազարեանի մահը։ — Նոր գաղթականութեան համար պատրաստութիւններ։ — Պոտեմկինի մահը։ — Գրիգորիոպոլ, նոր հոգսեր, նոր արտօնութիւններ։ — Եկատերինայի շնորհները։ — Մի քանի հայկական հնութիւններ։

Իշխան Պոտեմկին որքան էլ ուժեղ մարդ էր, բայց ունէր բազմաթիւ հակառակորդներ, որոնք Պետերբուրգում զանազան անհոգուտ բաներ էին պատմում նրա մասին։ Հարաւային Ռուսաստանը և Դրիմը պաշտպանելու համար փարթամ իշխանը ոչինչ զոհողութիւն չէր խնայում. նա անապին գումարներ էր վատնում նոր քաղաքներ

հիմնելու համար, ծրագրում էր հակայական ձեռնարկութիւններ, չինել էր տալիս ճանապարհներ։ Ամեն ինչ կատարվում էր շտապով. միանգամից անպէտ չափեր էին տուած այդ վերանորոգչական տենդային գործունէութեան։ Կային, իհարկէ, և խոշոր սխալներ. շատ բան դեռ միայն թղթի վրա էր, շատ բան երևակայութեան մէջ գոյութիւն ունէր։ Եւ այդ պակասութիւնները տուած նիւթ էին տալիս նրա հակառակորդներին, որոնք և աշխատում էին կորել նրա անունը Եկատերինայի մօտ։

Կամենալով ցոյց տալ կայսրուհուն թէ ինչպէս է ինքը կառավարում հարուստին Ռուսաստանը և որքան անհիմն են իր մասին տարածվող ասէկոսէները, Պոտեմկինը հմտացրեց Եկատերինային մի ճանապարհորդութիւն կատարել դէպի Սև ծովի ափերը։ Կայսրուհու ճանապարհորդութիւնը, բացի զբաղեցնելից, ունէր և քաղաքական խոշոր նշանակութիւն։ Թիւրքիան չէր ուզում մոռանալ, որ Ղրիմը Ռուսաստանի սեփականութիւն է դարձել։ Նա հանդգնում պատրաստվում էր նոր պատերազմի և դաշնակիցներ էր որոնում Եւրոպական պետութիւնների մէջ։ Թիւրք պաշտօնեաներին սաստիկ զրգռում էր Ռուսաստանի իւրաքանչիւր քայլը։ Այդ կողմից Եկատերինայի ճանապարհորդութիւնը լցրեց դառնութեան բաժակը և համարեա անխուսափելի դարձրեց նոր արիւնահեղ ընդհարումը։

«Հիւսիսային Շամիրամի» ուղևորութիւնը դէպի Ղրիմ մի լաղթական գնացք էր, փառահեղ տեսարանների մի անընդհատ շարք։ Պոտեմկինը կարողացել էր զարմանալի պատրաստութիւններ տեսնել իր ոգևորած կայսրուհուն խորին բաւականութիւն պատճառելու համար։ Եւ զարմանալի չէ որ իշխանը այնքան մեծ աջողութիւն ունեցաւ. իր պատրաստութիւնները նա դեռ 1784 թուին էր սկսել, մինչդեռ Եկատերինան սկսեց հանապարհորդութիւնը 1787-ին։ Ճանապարհին կայսրուհին մի օր ու գիշեր մնաց Յովակիմ Լաղարևանին պատկանող Պոկրովսկոյ գիւղում, Տուլա քաղաքից 45 վերստ հեռու. այդտեղ նա ներկայ էր պատարագին, կամեցաւ տեսնել Լաղարևանի ընտանիքը և ընծաներ տուաց նրան։ Ճանապարհը մեծ պատիւներով ընդունեց կայսրուհուն և նրա բազմաթիւ, փայլուն շքախումբը։

Կրեմենչուգ քաղաքում Եկատերինային սպասում էր աւստրիական կայսր Յովսէփ II։

Երկու վեհապետները այցելցին Ղրիմը և այնտեղ կայսրուհին տեսաւ թէ ինչ մարդարիտ է ձեռք բերել առաց պետութիւնը Պոտեմկինի *) ջանքերով։ Ընդունելով Ղրիմն էլ իր կառավարութեան յանձնված երկիրների թւում, Պոտեմկինը եռանդով սկսել էր բարեկարգել ու շէնացնել այդ թերակղզին։ Արդէն Սեվաստոպոլը մի ահեղ ամրոց էր դարձել և Եկատերինան հրամայեց գրել նրա գոնների վրա. «Ճանապարհ դէպի Կ. Պոլիս»։

Նոր Նախիջևանն էլ պատրաստվել էր ընդունել կայսրուհուն։ Բայց Եկատերինան փոխեց ճանապարհը, և Յոսէֆ արքեպիսկոպոսը գնաց նրան ճանապարհին զիմաւորելու։ Կրէմէնչուգ քաղաքում Պոտեմկինը մեծ պատիւներով ընդունեց Արղութեանին և տարաւ նրան կայսրուհու մօտ։ Արղութեանը համբուրեց Եկատերինայի ձեռքը, խոստացութիւն ունեցաւ նրա հետ։ Կայսրուհին ուղևորվեց Պետերբուրգ, իսկ Պոտեմկինը պահեց Յոսէֆին իր մօտ, որպէս զի միասին գնան Ղրիմ։ Բայց իշխանը չը կարողացաւ

*) Ղրիմի խաղաղ նուաճման համար Եկատերինան շնորհեց Պոտեմկինին Տաւրիկեան պայծառափայլ իշխանի տիտղոս։

այցելել Ղրիմը։ Թիւրքիայի վարմունքը չափազանց կասկածելի էր դարձել, ամեն ժամ կարելի էր սպասել պատերազմի յայտարարութեան։ Եկատերինան Պոտեմկինին նշանակեց զօրքերի գլխաւոր հրամանատար և մեծամեծ լիազօրութիւններ տուեց նրան, մինչև իսկ պատերազմ հրատարակելու իրաւունք։ Եւ Պոտեմկինը ուղղակի գնաց զօրքերի գլխաւոր բանակը, իսկ Արղութեանին ուղարկեց Ղրիմ ճանապարհորդելու, չը մոռանալով, իհարկէ, նախօրօք կարգադրութիւններ անել որ իր բարեկամին լաւ ընդունեն ամեն տեղ։

Այդ ճանապարհորդութիւնը տեսեց մօտ ամիս ու կէս, բայց զուարճութիւն շատ չը պատճառեց Արղութեանին։ Ամեն տեղ պատիւներ էին անում նրան, բայց ամեն տեղ էլ պատահում էին աւերակներ, որոնք վկայում էին թէ մի ժողովուրդ է եղել այստեղ, ունեցել է իր բարեկեցութիւնը, իր եկեղեցիներն ու վանքերը, իր պապերի գերեզմանները, իսկ այժմ չը կայ։ Դա հայ ժողովուրդն էր, որին դաղթեցնելու մէջ խաւն էլ և այդ ճանապարհորդի մասը։ Գոնէ այժմ Արղութեանը կը հասկանար, որ Նախիջևանի ժողովուրդը իրաւունք ունէր չը մոռանալ իր «Եղիսաւսի սոխն ու սխտորը»։

Տխուր ու տրտում նա վերադարձաւ Նախիջևան, ուղարկեց Թադէոս վարդապետին Պետերբուրգ՝ Խալդարեանի տպարանը գնելու, իսկ ինքը ճանապարհվեց Մօզդօկ ու Դղլար՝ ժողովրդին այցելելու համար։ Այնտեղից գնաց Աստրախան և մինչդեռ պատրաստվում էր նորից վերադառնալ Նախիջևան, հարկաւոր եղաւ Յովհաննէս Լազարեանի հետ ուղևորվել Պետերբուրգ։

Նորից արևելքը հրդեհվում էր։ 1788 թուականի փետրվարին Ռուսաստանը և Աւստրիան միասին, իրրև դաշնակիցներ, պատերազմ հրատարակեցին Թուրքիայի դէմ։ Թուրքերը սկզբում մի քանի անգամ ջարդեցին աւստրիացիներին, բայց պատերազմը, դլխաւորապէս շնորհիւ Սուվորովի փայլուն յաղթութիւնների, շուտով բարեւաջող ընթացք ստացաւ դաշնակիցների համար։ Այնուամենայնիւ, պատերազմական գործողութիւնները զանդաղ էին առաջ գնում և տևեցին երեք տարի։

Պատերազմի դլխաւոր բեմը Բեսարաբիայի և Մոլդավիայի այն կողմերն էին, ուր վաղուց ապրում էին և հայեր։ Արղութեանը պատճառ դարձաւ, որ այդ հայերից էլ մի նոր գաղթականութիւն կազմվի։

Վերադառնալով Պետերբուրգից Աստրախան, նա 1789 թուականի դարնանը ճանապարհ ընկաւ դէպի Նոր-Նախիջևան։ Ինչպէս տեսանք, Եկատերինա կայսրուհին գաղթականներին ազատել էր հարկերից 10 տարի ժամանակով։ Այդ ժամանակը լրանում էր հէնց նոյն այդ 1789 թուին։ Նախիջևանի հասարակութիւնը խնդրեց Արղութեանին դիմում անել ռուսաց կառավարութեան՝ նոր ժամանակամիջոց խնդրելու համար։ Եւ որովհետև այդպիսի գործերը հայոց ազգի խնամակալ Պոտեմկինի ձեռքով միայն կարելի էր դլուխ բերել, ուստի Արղութեանը, վերցնելով իր հետ Նոր-Նախիջևանի հասարակութեան կողմից ընտրված երեք պատգամաւորներին, ճանապարհ ընկաւ դէպի Բիչինև։ Այդտեղ էր եկել Պոտեմկինը՝ Ակերմանի մոտ լաղթութիւն տանելուց յետոյ։

Յովսէփը Պոտեմկինին շատ էր հարկաւոր և երկար մնաց ռուսաց դլխաւոր բանակում, ուր պէտք էր վճռվելին մի շարք կարևոր հարցեր։

Ռուսաց բանակում հայ արքեպիսկոպոսը Պոտեմկինի պատուաւոր հիւրն էր և ապրում էր նրա վրանում։ Տաբիկեան սիրտ իշխանը ոչինչ չէր խնայում Արղութեանին,

Իրրև հայ ազգի ներկայացուցչին, առատ կերպով բարերարելու համար. նրան նշանակեց Բեսարաբիայի և Մոլդավո-Վլախիայի (այժմեան Ռումինիայի) հայերի հովիւ և գրեց կայսրուհուն, որ նրան վեղարի իսչ և մանտիա պարգևէ։ Այդպէս էլ Արզումեանը ներկայացրեց իշխանին վրաց Հերակլ թագաւորի վկայականը, որով հաստատվում էր թէ արքեպիսկոպոսը հէն իշխանական ասնից է. Պոտեմկինը խոստացաւ իր միջնորդութիւնը որ ռուսաց կառավարութիւնն էլ նրան իշխան ճանաչէ։

1789-ի նոյեմբերին Պոտեմկինը վերցրեց Բենդէր ամրոցը. թիւրքերը հեռացան այնտեղից և նրանց մզկիթներից մէկը, Ադաջամիսի անունով, Յովսէփը մեծ հանդէսով օծեց ու եկեղեցի դարձրեց։ Պատերազմից վնասված ու չարչարված հայերին նա հաւաքեց, ընակեցրեց Լատաւրիչ եկեղեցու շուրջը ու աներ, պանդոկներ, արհանոցներ և բաղնիքներ առաւ, վարձով տուեց ու նրանց եկամուտներով ապահովեց ժողովրդի դրութիւնը։

Բենդէրից Յովսէփը տեղափոխվեց Նոչ քաղաքը, ուր գտնվում էր և Պոտեմկինը։ Նա լաւախ կատարում էր եկեղեցական հան-

դիսաւոր արարողութիւններ, որոնց ներկայ էին լինում ռուս բարձրաստիճան պաշտօնեաները. հանդէսների ժամանակ քարոզներ էր ասում, վաղօրօք պատրաստելով նրանց ռուսերէն թարգմանութիւնները և բաժանելով ներկաներին։ Փոթոչան և Սուչավա քաղաքների հայերը, լսելով ռուսաց բանակում գտնվող հայ արքեպիսկոպոսի համբաւը, պատգամաւորներ ուղարկեցին և խնդրեցին նրա այցելութիւնը։ Արզումեանը գնաց և երկու քաղաքներումն էլ փառաւոր հանդէսներով ընդունվեց. աստիճանական զօրքերը զինուորական պատիւներ էին տալիս նրան, միշտ պատուաւոր պահնակ էր կանգնած նրա ընակարանի մուտքի մօտ։

Իրրև նուրբ քաղաքագէտ, Արզումեանը ձեռքից չէր տալիս ոչ մի յարմար միջոց, երբ կարելի էր արժանաւոր կերպով ներկայացնել հայ ազգը։ Այսպէս, երբ 1790 թ. մարտ ամսին Ռոման քաղաքում սոսկվեց աստիճանական Յովսէփ կայսրի մահվան լուրը, նա հանդիսաւոր պատարագ մատուցեց, արտասվելով մի քարոզ ասաց և շատ լացացրեց աստիճանական հրամանատարներին, որոնք հաւաքված էին եկեղեցում։ Այդ քարոզի թարգմանութիւնն էլ նա ներկայացրեց ուր հարկն է,

իսկ լրագիրները նկարագրեցին հանդէսը, որ հաճելի էր ոչ միայն առարիացիներին, այլ և ռուսներին, որովհետև Յովսէփ կայսրը նկատելինալի դաշնակիցն ու բարեկամն էր։

Մայիս ամսին Արզումեանը շատ ծանր հիւանդութիւն ստացաւ և մեռնելու վրա էր։ Պատեօմկինը շատ բժիշկներ ուղարկեց նրա մօտ, զրանց օգնութեամբ առողջանալով, նա նորից գնաց Փօթուշան՝ օգափոխութեան համար։ Ռուսաց բանակում Յովսէփը միայն քարոզներ ասելու և տեղացի հայերին օգնութիւն հասցնելու համար չէր մնում։ Նա հարկաւոր էր Պատեօմկինին իբրև մի մարդ, որ շատ լաւ տեղեակ էր Թիւրքիայի հանդամանքներին և կարող էր քաղաքական ծառայութիւններ մատուցանել Ռուսաստանին մանաւանդ չնորհիւ այն հանդամանքի, որ պատերազմի բեմում, ինչպէս նաև Թիւրքիայում, ապրում էին լաղմաթիւ հայեր, որոնց աչքում մեծ հեղինակութիւն պիտի ունենար ռուսաց կայսրուհու այնքան առատ չնորհներին արժանացած հայ արքեպիսկոպոսը։ Ռուսաց զօրքերի մէջ ծառայում էին հայ օֆիցերներ, որոնց թուումն էր և Յովհաննէս Լազարեանի միակ որդի Յարութիւնը, 23 տարեկան մի երիտասարդ։ Ինքը, Յովհաննէս Լազարեանն

էլ օգնում էր Պատեօմկինին իր տեղեկութիւններով և խորհուրդներով։ Կար և ուրիշ նշանաւոր հանդամանք. պատերազմին ռուսաց զօրքերի շարքում մատակարում էր հայ կամաւորներից կազմված մի զօրախումբ։ Պատերազմական գործերը չէին խանդարում որ Արզումեանը խորհրդակցութիւններ ունենայ Պատեօմկինի հետ հայկական գործերի մասին. և նա արտօնութիւններ էր ստանում Նախիջևանի, Ատարատեանի և այլ տեղերի հայերի համար։ Այդտեղ էլ արծարծվում էր Անդրկովկասում մի հայկական անկախ իշխանութիւն հաստատելու հարցը, որի մասին լեռսյ կը խօսենք։

Թիւրքաց բերդերը մինմանց հաջից անցնում էին ռուսների ձեռքը։ Հոկտեմբերի 16-ին անձնատուր եղաւ Կիլիա բերդը։ Նրա մէջ ապրող հայերը ստատիկ նեղութիւններ կրեցին. ռուսաց եղեր զօրքը յարձակումների ժամանակ ոչնչեց երեք հայ քահանայ և ժողովրդից շատերին. հայերի մի մասը գերի էր տարվել Բենդէր, իսկ մնացածները ողբալի դրութեան մէջ էին։ Նրանց օգնութեան է շտապում Յովսէփ արքեպիսկոպոսը, ունենալով իր հետ Պատեօմկինի հրամանը։ Հաւաքում է տարտափտար ժողովուրդը, եկեղեցու

վիզերով հայ է առնում, բաժանում քաղցած մարդկանց։ Բերդի ռուս իշխանաւորները ամեն կերպ աջակցում են նրան, և նոյեմբերի սկզբին Արզուբեանը, հանելով Կիլիկիից հայ ժողովուրդը (116 տուն, 668 հոգի), տանում է Բենդէր։

Աւելի մեծ ազէտ սպասում էր Իզմայիլ անուանով թիւրքական բերդի մէջ ապրող հայերին։ Ամբողջ Դունայ գետի վրա միայն այդ բերդն էր մնում, որ թիւրքերի համար պիտի դիմաւոր լինարան դառնար. դա մի առաջնակարգ բերդ էր, սաստիկ ամրացրած, և այնտեղ հաւաքված էր թիւրքական մի խոշոր բանակ։ Գեկտեմբերի սկզբում Իզմայիլը վերցնելու գործը յանձնվեց Սուվորովին։ Ռուս զօրքերը յարձակվեցին բերդի վրա, յաղթեցին, ներս թափվեցին։ Բայց պաշարվածները անձնատուր չեղան և բերդի իւրաքանչիւր փողոցը դարձաւ պատերազմի դաշտ։ Արիւնահեղութիւնը սոսկալի էր։ Թիւրքերը կռւում էին հերոսաբար, ապշեցնող յամառութեամբ. նրանց օգնում էին նոյն իսկ կանայք։ Դիմադրութիւնը յամառ էր մանաւանդ հայոց եկեղեցու մօտ, որի պարիսպների ետևից կռւում էին թիւրքերը։ Բայց Սուվորով հարուած հարուածի ետևից էր հասցնում և Իզմայիլի փողոցները,

այդ զարհուրելի սպանդանոցները, անցնում էին ռուսների ձեռքը։ Թիւրքերից կոտորվեցին 23000 հոգի, ռուսները կորցրին 4000 սպանված, 6000 վիրաւորված։ Բերդին տիրանալուց յետոյ, Սուվորով, համաձայն իր խոստման, թոյլ տուեց որ իր զօրքերը երեք օր կողոպտեն քաղաքը։ Եւ զօրքերի ձեռքը անգին հարստութիւն ընկաւ։

Այդ անաւոր կոտորածների ու կողոպտի մէջ Իզմայիլի հայերն էլ մեծ կորուստներ ունեցան։ Նրանցից սպանվեցին 60 հոգի և մի քանիներն էլ գերի ընկան թիւրքերի ձեռքը։ Ռուսները, տիրելով բերդին, վեց օր շարունակ թաղում էին դիակները, մաքրում էին փողոցները։ Բերդը վերցնելուց 12 օր յետոյ այնտեղ մնաց Արզուբեանը։ Նրա ներկայութիւնը շատ հարկաւոր էր. 322 տուն հայեր (1650 հոգի) մնացել էին երկնքի տակ, մերկ, քաղցած, յուսահատ։ Պէտք էր հաւաքել նրանց, սփոփել, ամոքել նրանց սարսափելի դժբախտութիւնը։ Եւ այս անդամ էլ Արզուբեանը պատասխան հրեշտակ հանդիսացաւ խեղճ ժողովրդի համար։

Այս անդամ հարկաւոր էին աւելի մեծ միջոցներ՝ այդ բազմութիւնը պատսպարելու, կերակրելու, հագցնելու համար։ Բայց Ցով-

սեփ արքեպիսկոպոսը չէ վճռում. նա թռչում է Նաչ, լաց ու կոծով պատմում է ժողովրդի աղէտալի դրութիւնը, իսկոյն սկսում է փող և հագուստներ հաւաքել և ուղարկել Իզմայիլ. նամակներ է գրում Մօլդաւօ-Վալախիայի հայերին, հրաւիրում է նրանց օգնել իրանց դժբախտ եղբայրակիցներին։ Այդ եռանդուն գործունէութիւնը, իհարկէ, ապարդիւն չէ մնում։ Բոլոր տեղերից օգնութիւն են ուղարկում և Իզմայիլի հայ ժողովուրդը ազատվում է վերջնական կորստից։ Յովսէփ արքեպիսկոպոսը Իզմայիլից 30 հայ տղայ է ուղարկում Նոր-Նախիջևան, իր հիմնած Ս. Խաչ վանքը՝ այնտեղի դպրոցում ուսում առնելու համար։

Մինչև նա այդ գործով էր զբաղված, յանկարծ նրան կանչեցին այլ պարտաւորութիւններ, որոնք ակամայ մոռացնել պիտի տային Իզմայիլի խեղճերին։ 1791 թուականի փետրվարին Պոտեմկինը գնաց Պետերբուրգ, առաջարկելով Արզումեանին հետևել իրան, որպէս զի կարելի լինի Պետերբուրգում տնօրինել հայկական գործերը։ Յովսէփը իսկոյն ճանապարհվում է, իզմայիլցիների հոգը յանձնելով Կարապետ վարդապետին։ Սառատիկ տանջվելով ցրտերից, մարտ ամսին նա

հասնում է հիւսիսային մայրաքաղաքը։ Բայց այստեղ անաջողութեան է հանդիպում։

Նոյն տարվայ յունվարին վախճանվել էր Յարութիւն Լազարեանը, այն երիտասարդ օֆիցերը, որ ծառայում էր Պոտեմկինի մօտ։ Նրա հայրը, վշտից ու յուսահատութիւնից հիւանդացած, չէր կարող առաջվայ պէս աջակցել Արզումեանին։ Տեղ հասնելուն պէս, արքեպիսկոպոսը հայոց եկեղեցում հոգեհանգիստ է կատարում Յարութիւնի համար։ Եկեղեցում հանդուցեալի մայրն է ներկայ։ Յովսէփը սկսում է մխիթարական խօսք, բայց չէ կարողանում շարունակել և եկեղեցու մէջ ամենքը սկսում են գոռում-գոչումով լաց լինել...

Հինգ ամսի չափ մնաց Արզումեանը Պետերբուրգում, բայց շատ գործ կատարել չը կարողացաւ։ Միայն օրհնեց հայոց երկրորդ եկեղեցու հիմքը, որ շինել էր տալիս Յովհաննէս Լազարեանը, Յարութիւնի մարմինը այնտեղ թաղելու համար *)։

---

*) Յարութիւն Լազարեանի վաղաժամ մահը հայ ազգի համար մի խոշոր բարերարութեան ասիթ դարձաւ։ Կորցնելով իր մին ու հար որդուն, Յովհաննէս Լազարեանը կտակեց իր եղբայր Յովակիմին 200 հազար բուբլի, որպէս զի այդ գումարով մի

Յուլիսին Պոտեմկինը վերադարձաւ Նաչ։ Արզուբեանն էլ գնալի այնտեղ ուղեւորվեց, բայց ճանապարհին մտաւ Նախիջեւան։ Երկար ժամանակ նա այնտեղ չէր եղել, իսկ կատարելու գործեր շատ կային։ Մանաւանդ ուզում էր նա տեսնել տպարանը և գրքերը։ Սեպտեմբերին նա նորից Նաչումն էր։ Պոտեմկինը հիւանդ էր և շատ ուրախացաւ, տեսնելով իր բարեկամին։

Ռուս-թիւրքական պատերազմը վերջանալու վրա էր, արդէն խօսում էին հաշտութիւն կնքելու մասին։ Պոտեմկինը, որ, իհարկէ, լաւ գիտէր թէ ինչ տեղեր պէտք է վերադարձնել Թիւրքիային, յանձնարարեց Արզուբեանին գաղթեցնել ռուսաց զօրքերի գրաւած քաղաքներում գտնվող հայերին դէպի Ռուսաստանի սահմանները։ Նա արդէն որոշել էլ էր թէ որտեղ պիտի հիմնվի քաղաք այդ հայերի համար, ուստի և ցոյց տուեց թէ դէպի որ կողմը պէտք էր ուղղել գաղթականներին. դա Դուբոսարի քաղաքն էր՝ Դնեպր գետի վրա. այդ կողմերում էլ պիտի բնակվէին գաղթականները։

Լաւ գոյրոց բացվի հայերի համար՝ ի յիշատակ Յարութիւնի։ Այդ գոյրոցը բացվեց և այժմ էլ կայ— Աղաբեան հաշակատար ճեմարանը։

Արզուբեանը յանձն առաւ գլուխ բերել այդ բանը, միայն նախ և առաջ խնդրեց արտօնութիւններ այս նոր գաղթականների համար։ Յուլիսեան իշխանը այդպիսի բաների մէջ ժլատ չէր. նա համաձայնվեց, և Յուլիսը ներկայացրեց նրան արտօնութիւնների ծրագիրը։

Բայց Պոտեմկինը չը կարողացաւ կատարել իր խոստումը։ Նրա հիւանդութիւնը գնալով սաստկանում էր. բանակցութիւնները թիւրքերի հետ շարունակվում էին, պատերազմի կամ հաշտութեան հարցը դեռ չէր վճռված, և ահա հէնց այդ միջոցին իշխանը ստիպված էր հրամայել, որ իրան Նաչից տանեն Նիկոլաեվի կողմերը։ Նա լաւ գիտէր, որ օդափոխութիւնը կօգնէ։ Բայց Նաչից 40 վերստ չը հեռացած՝ նրա դրութիւնը այնքան վատացաւ, որ շարունակել ճանապարհը այլ ևս կարելի չեղաւ։ Պոտեմկինին պատկեցրին գաչառում և այդտեղ 1791 թուականի հոկտեմբերի 5-ին վախճանվեց այն մարդը, որ ապրում էր ռուսաց բանակում ոչ թէ իբրև զլխաւոր հրամանատար, այլ իբրև մի ամենակարող սատրապ, նոյն իսկ իբրև մի թագաւոր. դա այն մարդն էր, որ իր խիստ պահանջներով

չատ անդամ էր լացացրել Եկատերինա կայսրուհուն *)։

Հասկանալի է թէ Յովսէփ Արղութեանի վրա ինչ ցնցող ազդեցութիւն արած պիտի լինի այդ մահը։ Իր յիշատակարանում նա գրում է. «Մեք կորուսաք անգին խնամակալն մեր և զաստակ բարերարն. այժմ ձեռն ի ծնօտի, նստեալ կամք մերալին ազգօք ակն ունելով վերին օգնականութեանն ու այցելութեանն Աստուծոյ»։

Սակայն Պոտեմկինի մահով միանգամայն չէր աշնչանում հայերի գործը։ Եկատերինան ինքն էր փայփայում այն մտքերը, որոնք արծարծվում էին նրա աշխատակիցների ծրագիրներում և որոնց նայելով, արևելեան քրիստոնեաները մեծ լոյսեր և ակնկալութիւններ էին ստանում։ Եւ Արղութեանը միայն Պոտեմկինի հետ չէր ծանօթ և բարեկամ։ Իշխանի մահից յետոյ նաչ ազարկվեց, հաշտութեան պայմանները վերջնականապէս որոշելու համար, կոմս Բեզբորոդկո, իսկ զորքերի հրամանատար նշանակվեց զինուորական Կախովսկի. «այս երկուսը, ասում է Արղութեանը, մեր վաղեմի բարեկամներն էին»։

*) Брикнеръ—«Потемкинъ», Спб., 1891, էջ. 196.

Եւ անխոնջ ու ժիր արքեպիսկոպոսը վերանորոգում է իր միջնորդութիւնները։ Իզմայիլից, Կիլիայից, Ակքերմանից, Քովչանից և Բենդէրից հասած հայերը արդէն ժողովված էին Դուբոսսարի քաղաքում. նրանց կառավարում էր Ատեփան Դաւթեանը, որ կոչվում էր Արարատեան դեսպան, որովհետև, ինչպէս կը տեսնենք, ուղարկված էր արարատեան հայերի կողմից իբրև ներկայացուցիչ։ Գաղթականների համար Արղութեանը խնդրում էր նշանակել առանձին տեղ քաղաք չինելու համար. քաղաքը պիտի ստանար Գրիգորիոպոլ անունը ի յիշատակ Գրիգոր Լուսաւորչի և Գրիգորի Պոտեմկինի. ռուսաց կառավարութիւնը տալիս է հայերին դրամական օժանդակութիւն քաղաք չինելու համար, ազատում է նրանց ամեն տեսակ հարկերից տասը տարվայ ընթացքում, իրաւունք է տալիս նրանց կառավարվելու իրանց սեփական օրէնքներով և սովորութիւններով։ Միևնոյն ժամանակ Արղութեանը վերանորոգում է իր խնդիրքները Աստրախանի, Ղզլարի, Մոզդոկի հայերին էլ արտօնութիւններ չնորհելու մասին, իսկ Նոր-Նախիջևանի համար խնդրում է նորից տասը տարվայ ընթացքում հարկ չը պահանջել և նոր հողեր

տալ այնտեղի հայերին։ Կոմս Բեղբորոդկո ուրախութեամբ ընդունեց այդ խնդիրքները, ուղարկեց Եկատերինային, իր կողմից էլ խնդրելով, որ կայսրուհին քաղցրութեամբ նայէ հայոց արքեպիսկոպոսին և նրա գործ դրած աշխատանքներին։ Թիւրքերի հետ հաշտութեան վերջնական դաշնագիր կապելուց յետոյ Բեղբորոդկո գնաց Պետերբուրգ, պատուիրելով Արղութեանին նաշում սպասել կայսրուհու պատասխանին։

Այդ պատասխանը այնպէս էր, ինչպէս կամենում էր Յովսէփը։ Եւ 1792 թուականին նա սկսեց տեղաւորել հայ գաղթականներին։

Դուբոսարի քաղաքից 12 վերստ հեռաւորութեան վրա Արղութեան արքեպիսկոպոսը, տեղական նահանգապետի հետ, ընտրեց մի գեղեցիկ տեղ՝ հատկապէս քաղաք չինելու համար։ Կազմվեց մակարդակ, որ Յովսէփի եղբօրորդի Բարսեղի հետ ուղարկվեց Պետերբուրգ՝ կայսրուհուն ներկայացնելու և նրա վաւերացումը խնդրելու համար։

Բայց հայ ժողովուրդը չէր կամենում հեռանալ Դուբոսարիից. նոր տեղ չենացնելը, նոր բնակութիւն հաստատելը, բնականաբար, շատ դժուար ու ծանր էր թուում այնքան զրկանքներ տեսած ու այս օտար հողը բեր-

ված գաղթականներին։ Բայց Յովսէփը գիտէր համոզել ամբոխը։ Զատիկ օրը նա հաւաքեց հայերին Դուբոսարիի հայոց ժամանակաւոր եկեղեցին, պատարագ արաւ և ապա խօսեց իր սաք քարոզներից մէկը։ Թիւրքական լուծի տակից դուրս եկած հայերին նա նմանեցրեց Եգիպտոսի գերութիւնից ազատված հրէաներին, չնորհաւորեց Ռուսաստանի հովանաւորութեան տակ մտնելը, լաց եղաւ, լացացրեց շատերին։ Ամբոխը ընկճվեց։

Կայսերական հրամանը, գրված յունիսի 17-ից, լայտնվեց Արղութեանին յուլիսի 17-ին։ Այլ ևս ժամանակ չը կորցնելով, նա նոյն ամսի 25-ին մեծ հանդէսով օրհնեց նոր քաղաքի հիմքը. այդ օրվանից գոյութիւն ստացաւ հայոց Գրիգորիոպոլ քաղաքը։ Բայց հեշտ չէր մի ամբողջ քաղաք ստեղծելը, մանաւանդ երբ ժողովուրդը, ինչպէս տեսանք, բոլորովին մերկացած էր, ապրում էր ուրիշների տուած ողորմութեամբ։ Դա պիտի լինէր մուրացկանների մի դժբախտ քաղաք, եթէ ժողովուրդը Արղութեանի պէս մի եռանդուն, բարձր գիրք գրաւած հոգևոր հայր չունենար։ Նրա միջնորդութիւնների չնորհիւ, ռուսաց կառավարութիւնը յանձն առաւ ոչ միայն քաղաքի չինութեան, այլ և ժողովուր-

գին ապրուստի միջոցներ տալու ծախսերը։ Պետական գանձարանը տուեց 46,781 ռուբլի 72 կոպեկ՝ 325 տուն չինելու համար, 37,000 ռուբլի եկեղեցի և վանք, 15,000 ռ. էլ առաջնորդարան չինելու համար. բացի 'ղրանից, տասը տարվայ ժամանակով փոխ տրվեց 10,000 ռուբլի խանութներ և շուկայ չինելու, 2000 ռուբլի՝ սրճարաններ և բաղնիքներ չինելու, 25,000 ռուբլի՝ տաւար և այլ հարկաւոր բաներ գնելու և 50,000 ռուբլի էլ՝ տնտեսությունը ծաղկեցնելու համար։ Այդ գումարների մի մասը Արղութեանին էր յանձնված. նա էր կարգադրում, ցուցմունքներ տալիս, կարգ ու կանոն սահմանում։ Բացի Գրիգորիոպոլ քաղաքից՝ նա հիմնեց և գիւղեր, որոնցից մէկը Խոսիֆովկա՝ իր անունով, միւսը Վասիլեվկա՝ իր եղբօրորդու անունով։

Ամեն կարգադրութիւններ անելուց յետոյ, Արղութեանը տարվայ վերջում ճանապարհվեց Պետերբուրգ. Գրիգորիոպոլի և Նորնախիջևանի գործերը այդպէս էին պահանջում։ Պետերբուրգում նրան շատ լաւ ընդունեցին։ Եկատերինան, Ռուսաստանի հողագործությունը և առևտրական գիւղատնտեսությունը լաւացնելու և զարգացնելու համար, 1765 թ. հիմնել էր «Ազատ Տնտեսական Ընկերութիւնը», որ գտնվում էր նրա բարձր հովանաւորութեան տակ և որի վարիչները պետական բարձր պաշտօնի տէր անձինք էին։ Այդ ընկերութիւնը, գնահատելով Արղութեանի գործունէութիւնը, երկիրը շէնացնելու ջանքերը, ընտրեց նրան իր անդամ, մի բան, որ մեծ պատիւ էր համարվում։ Բայց նրան աւելի բարձր պատիւներ էին սպասում։

Եկատերինան զարմացրեց ամենքին իր առատաձեռնութեամբ և առանձին ուշադրութեամբ։ Նա շնորհեց Յովսէփին ոսկեմանեակ խաչ վեղարի համար և մանտիա, որ յատկացրած է ռուսաց բարձրատիճան հոգևորականներին միայն։ Թէ ինչ նշանակութիւն ունէին այդ պարգևները, կարելի է իմանալ նրանից, որ, ինչպէս ասում է Յովսէփը, այդ ժամանակ ամբողջ կայսրութեան մէջ միայն երեք երեսի հոգևորականներ կային, որոնք խաչ էին կրում վեղարի վրա։ Յափշտակված, հիացած արքեպիսկոպոսը միւս օրը ներկայացաւ Եկատերինային, համբուրեց նրա ձեռքը, և ապա գնաց թագաժառանգ Պաւելի և նրա որդիների մօտ և այստեղ էլ ուշադրութեան արժանացաւ։

Հաղուագէպ, բարձր պարգևները աւելի նս բարձրացրին Յովսէփի դիրքը Պետերբուր-

գում և առնտարակ Ռուսաստանում։ Եւ Յովսէփը, ինչպէս և գրեթէ ամենքը, ընդունեց այդ պարգևները իբրև մի առանձին, ստրմած ուշադրութեան նշան զէպի ամբողջ հայ ազգը։ Մատուցանելով Պետերբուրգի եկեղեցում իր չքեղ պատարագներից մէկը, Արզումեանը քարոզ ասաց, որի մէջ պերճ խօսքերով հրաւէր էր կարդում ամբողջ «Յարութեան սերունդին և Արամեան ազգին» հրճուել, զարմանալ այս անբաւ մարդասիրութեան վրա, որ ցոյց էր տալիս Եկատերինան *)։ Իր լիշատակարանում էլ նա նոյն այդ առիթով գրում էր. «Ահա ոսկէ դար, ահա անսպառելի լոյս մեր ազգի համար՝ Լուսաւորչից սկսած, ահա անհամեմատ և գերազանց պարգև, ահա Աստուծու ողորմութիւն մեր ազգին»։ Պատարագից լետոյ հանդիսաւոր ճաշ տեղի ունեցաւ Յովհաննէս Լազարեանի տանը։

Արզումեանը հասել էր երջանկութեան

*) Այս պարգևատրութիւնը և նրա նշանակութիւնը ամբողջ Հայութեան համար չափազանցուցած գոյներով ճոռոմաբան և ուռուցիկ ոճով նկարագրել է Մարգար Խոջէնց Երևանցի 1794 թվին տպված «Պատմութիւն Թէլեմաքի» իր թարգմանութեան լիշատակարանում։ Բացի դրանից, նա գրել է և «Փոքր ողորմութեան» անունով մի գիրք, որի մէջ նոյն կերպով նկարագրել է Գրիգորիոպոլի և Նոր-Նախիջևանի հիմնարկութիւնը։

և փառքի գագաթնակէտին։ Բայց այդ ոսնելի և հրճուանքների մէջ էլ նա չէր մոռանում իր գաղթականներին։ Գրիգորիոպոլի և Նախիջևանի համար միջնորդութիւններ էր անում և, ի հարկէ, միանգամայն գոհ մնաց. նրա խնդիրքները անտես չարին։

Պետերբուրգից նա վերադարձաւ Գրիգորիոպոլ Նոր-Նախիջևանի վրայով։ Ճանապարհին չնորհաւորութիւններ էր ընդունում կայսերական պարգևների համար՝ նոյն իսկ բարձրաստիճան հոգևորականներից։ Աւելորդ է ասել թէ որքան ուրախացան Նոր-Նախիջևանի հայերը, տեսնելով իրանց առաջնորդի վերադարձի խաչը և մանտիան։ Մեծ հանդէսով Յովսէփը մտաւ Գրիգորիոպոլ։ Ժողովուրդը երկու թանգագին հնութիւններ մատուցեց իր երախտաւոր առաջնորդին. մի գաչոյն և մի թուր, որոնք մի ժամանակ պատկանում էին հայոց թագաւորներին։ Դաչոյնի վրա արծաթէ տառերով գրված էր. «Ռուբէն որդի Գագկայ, սաքօք եղիցի առնուլ զԿայն Կոսիր. կարողութեամբ Աստուծոյ՝ առի. ի մերոյս թուին ՇԻԸ, 1265 յամի Տեառն»։ Իսկ թրի վրա նոյն տեսակ տառերով գրված էր. «Զսոյ ելերուք թագաւորին հայոց Արշակայ, և հօրն իմոյ Վասակայ. ՆԺԲ թուին։ Ստացեալ

եղէ ես Աչոտս երկրորդ՝ որդի Ապասայ, ձեռամբ կայսերացն՝ մեծի Վասիլի և Յոհաննէս Զմսկակայ, թուին հայոց ՆԿԶ»։

Երբև զարգացած մարդ, Արզուբեանը առանձին ուշադրութիւն դարձրեց հնութիւններ հաւաքելու վրա։ Նա կազմեց և հին հռոմէական, հայոց և պարսից դրամների մի հարուստ հաւաքածու։ Թէ ինչ եղան վերոյիշեալ գաշտնն ու թուրը—յայտնի չէ. բայց դրամների հաւաքածուն Յովսէփը նուիրեց Պաւել կայսրին և նրանից շնորհակալութիւն ստացաւ։

Գրիգորիոպոլից Արզուբեանը ճանապարհորդեց Ղրիմ, յատկապէս այնտեղի Ս. Խաչ վանքի համար։ Ղրիմը գրաւելուց յետոյ իշխան Պոտեմկինը այդ վանքը, որ յայտնի է իր գրաւած տեղի գեղեցկութեամբ, նուիրեց Յովհաննէս Լազարեանցին։ Բայց Լազարեանը այնքան ջերմեռանդ հայ էր, որ չը կամեցաւ սեփականացնել այդ եկեղեցական կալուածը, ուստի իր կողմից նուիրեց Յովսէփ արքեպիսկոպոսին։ Ս. Խաչը, ինչպէս գիտենք, գաղթականութիւնից յետոյ ամայի ու անտապատ դրութեան մէջ էր։ Արզուբեանը բարեկարգեց նրան. միաբանութիւն հաստատեց, կալուածներ, անասուններ գնեց և տուեց

վանքին։ Ապա նորից վերադարձաւ Գրիգորիոպոլ։ Իր այդ ձեռակերտը նա շատ էր սիրում և երկար մնում էր այնտեղ՝ բարեկարգելու, ընակիչներին օգնելու համար։ Այդ հայրական խնամքների շնորհիւ էր, որ խեղճ գաղթականները կարողացան տաքացնել իրանց ոչնը և ապրել իրանց աշխատանքով։

Այսպէս ահա, Յովսէփի առաջնորդութեան օրով ընդարձակվեց Ռուսաստանի հայոց թեմը։ Ատրախանը շարունակեց մնալ առաջնորդական քաղաք. նրան ենթարկվում էին Նոր-Նախիջևանը, Ղրիմը և Բեսարաբիան։ Այժմ, ինչպէս յայտնի է, այդ տեղերը առանձին առաջնորդութիւն են կազմում։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐ

Յունական նախագիծը։—Գահեր ստեղծելու մտքերը։—Դէպի Հնդկաստան։—Արղութեան և Պոտեմկինի։—1780-ի յունվար ամիսը —Հայաստանի աղատութիւնը վճռված է։—Սուվորովը Առաբախանում։—Հայ մելիքների գործերը։—Գեներալ Պոտեմկինի ստացած հրահանգները։ — Արարատեան դեսպանը իշխան Պոտեմկինի մոտ։—Հայկական անկախութեան ծրագիրները։—Ռուսաց զօրքը Անդրկովկասում։—Ղարաբաղի դեպքերը։—Արղութեանի բանակցութիւնները Եաշում 1790 թուականին։—Նրա դրած թղթերը։—Քաղաքական ծրագիրները Պոտեմկինի մահից յետոյ. կոմս Պատոն Զուբով և ամբողջ Արևելքը նուաճելու ծրագիր։—Ագա Մահմեդ խանի արշաւանքը և Թիֆլիսի աւերումը։ Արղութեան և Հերակլ։—Արշաւանք դէպի Պարսկաստան։—Արղութեան ռուսաց բանակում։—Արշաւանքի պարզ նպատակը։ — Արղութեանի մատուցած ծառայութիւնները։—Եկատերինայի մահը. ամեն ինչ կերպարանափոխվում է։—Պաւել կայսրը և հայերը։—Արղութեանը Պետերբուրգում։

Պետրոս Մեծը դեռ Հոլլանդիայում հիւանդութիւն ստանալիս, պատրաստել էր տուել մի մեդալ, որի վրա իր պատկերն էր և շուրջը գրված էր՝ «յունաց թագաւոր»։ Յունաստանի ազատութիւնը ռուսների համար մի նուիրա-

կան միտք դարձաւ այն ժամանակվից, երբ թիւրքերը նուաճեցին Կ. Պոլիսը և ս. Սոֆիայի հռչակաւոր եկեղեցին մզկիթ դարձրին։ Ռուս թագաւորները համարվում էին Բիւզանդիայի ժառանգ։ Բայց քանի որ Ռուսաստանը թոյլ էր, իսկ Թիւրքիան սաստիկ ուժեղ, այդ ժառանգութեան մասին բացարձակ պահանջներ չէին լսվում։ Երբ քրիստոնեայ աշխարհի համար պարզվեց, որ Թիւրքիան «հիւանդ մարդ» է, Ռուսաստանը սկսեց իր վաղեմի նուիրական միտքը արտաբերել աւելի և աւելի ինքնավստահ կերպով։

Պետրոս Մեծը չէր էլ ուզում թաղցնել իր դիտաւորութիւնները՝ Թիւրքիայի ունեցածների վրա յունական պետութիւնը վերականգնելու մասին։ Առաջին անգամ նա էր որ գործակալներ ուղարկեց յոյների ու բալկանեան սլաւոնների մոտ՝ քարոզելու թէ պէտք է զինվել անօրէն թշնամու դէմ և միանալով Ռուսաստանի հետ, վերջ դնել Օսմանեան պետութեան։

Եկատերինան հետևում էր Պետրոսին. մենք տեսանք որ նա էլ նոյն հրաւէրն էր կարդում արևելեան քրիստոնեաներին։ Գրանցից միայն յոյները զէնք բարձրացրին, թէև անաջող էր այդ փորձը և նրանք սաստիկ

վնասվեցին իրանց այդ առաջին ապստամբութեան համար։ Այդ բանը տեղի ունեցաւ ռուս-թիւրքական առաջին պատերազմի ժամանակ։ Նոյն պատերազմի միջոցին Պոտեմկինը յղացաւ մի ծրագիր, որ յայտնի է պատմութեան մէջ «յունական նախագիծ» անունով և որի միտքը պարզապէս այն էր թէ պէտք է թիւրքերին վռնտել Եւրոպայից, նրանց եւրոպական կալուածներից ստեղծել յունական մի պետութիւն, որի գլուխը կը մինէր ռուսաց կայսերական ընտանիքի մի անդամը։

Այդպիսի մի չքեղ մեծապրծութիւն, մանաւանդ երբ նրան ծրագրողն էր Ռուսաստանի առաջին մարդը, չէր կարող պարապ միտք համարվել։ Ընդհակառակն, նա միանգամայն համապատասխանում էր Եկատերինայի ձգտումներին, ուստի և «յունական նախագիծը» դարձաւ ռուսաց արտաքին քաղաքականութեան հիմնաւոր և լուրջ հարցերից մէկը։ 1777 թուականին Պետերբուրգում բացվեց զինուորական դպրոց յատկապէս Ղրիմի յոյների համար։ 1779 թուին ծնվեց Եկատերինայի երկրորդ թոռը։ Կայսրուհին նրան նշանակեց յունական վերականգնած գահի վրա նստելու և այդ պատճառով էլ տուեց նրան

Կոնստանտին անունը, որ բիւզանդական վերջին կայսրի անունն էր։ Պոտեմկինը մեծ հանդէս սարքեց մեծ իշխանի ծննդեան առիթով. հանդէսին հրաւիրված կանանց առջևը դրված էին աղամանդներով լիքը բաժակներ. կարդացվում էին յունական ստանաւորներ, իսկ այն մեդալի վրա, որ յատկապէս այդ օրվայ համար էր պատրաստված, նկարված էին Կ. Պօլսի Սոֆիայի տաճարը, Սև ծովը, հրդեհված մզկիթ, որի քանդվող մինարէթի վրա փայլում է խաչը։ Կայսրուհին խօսակցութեան մէջ յայտնեց անդլիական դեսպանին, որ յոյներին մեծ ու գեղեցիկ ապագայ է սպասում։ Մեծ իշխան Կոնստանտինի համար խաղընկերներ ընտրվում էին յունական դպրոցի աշակերտներից. նրան սովորեցրին յունարէն լեզուն *)։

Սրանք բոլորը դեռ անմեղ ցոյցեր էին և Եկատերինայի կառավարութիւնը, իհարկէ, չէր բաւականանում այդքանով։ Թիւրքերին պէտք էր վռնտել Եւրոպայից և ապա միայն յունական թագաւորութիւն ստեղծել։ Բայց ինչ կասէր Եւրոպան։ Եկատերինան և նրան

*) Брикнеръ—«Исторія Екатерины Второй», Спб., 1885, т. II, եր. 390։

շրջապատողները համոզված էին որ Եւրոպայի մասին կարելի է միանգամայն ապահով լինել, եթէ Ռուսաստանին աջողվի դաշնակցութիւն կապել Աւստրիայի հետ։ Այս ուղղութեամբ էլ սկսեց գործել ռուսաց դիպլոմատիան։ Բանակցութիւնների հիմքը Թիւրքիան ոչնչացնելն էր։ Եթէ աջողվեր այդ գործը, լուսական պետութիւնն էր ստեղծվում. բայց վերանորոգված Յունաստանին չէին տրվում Թիւրքիայի Եւրոպական բոլոր հողերը. մի քանի կտորներ անցնում էին Աւստրիային, իսկ Մոլդավիայից, Վալաքիայից և Բեսսարաբիայից կազմվում է մի առանձին անկախ պետութիւն, որ ստանում է իր հին Դակիա անունը և որի համար թագաւոր է ընտրվում Ռուսաստանի վստահութիւնը վայելող մէկը, լուսական դաստութեան պատկանող։

Ուրեմն, մի նոր դահ էլ, մի նոր անկախութիւն էլ։ Դահեր և անկախութիւններ ստեղծելու ձգտումները միայն լուսերին և քրիստոնեաներին չէին ժպտում։ Այդպիսի ծրագիրներ կազմվում էին հանրաժամն մի գէպքում, երբ Եկատերինան տեսնում էր Պետրոս Մեծի քաղաքական իդէաների իրագործման նշոյլները։ Պոտեմկինը մի առանձին սիրով զբաղվում էր այդ ծրագիրներով։ Մի անկախ դահ էլ նա մտադիր էր ստեղծել Լիֆլեանդիայում։ Այդ բանի մէջ նրան ոգեւորում էր և սեփական փառասիրութիւնը։ Հասնելով փառքի և տիրապետութեան գագաթնակէտին, տիրանալով անհուն հարստութիւնների, Տաւրիկեան փառահեղչխանը ուրիշ մի բան չէր կարող ապասել այս աշխարհից, բայց միայն մի դահ։ Եւ այդ պատճառով հէնց որ առաջ էր գալիս որ և է անկախութիւն ստեղծելու միտքը (լացի, իմարիէ, լուսական), տարածվում էր լուր թէ Պոտեմկինը աշխատում է իր համար։ Դակիայի թագաւորութիւնը նրա համար էր. Լիֆլեանդիայի դահի վրա նա էր ուզում նստել։ Ահա այդ անկախութիւնների շարքում աւելացաւ և մէկը—հայոց դահը։

Յովսէփ Արղութեանը Ռուսաստանի մէջ դիրք և նշանակութիւն ստանալով մի ամսվայի ժամանակ, երբ արևելեան հարստահարված ազգութիւնները բարի ուշադրութեան և խրախուսանքի էին հանդիպում ռուսաց կայսերական դահի մօտ, իր հայրենակիցների քաղաքական դատի ներկայացուցիչ հանդիսացաւ։ Նրան թէ տուողը, նրա համար բոլոր լարմարութիւններ ստեղծողը, նրա խոր-

հրդատուն Յովհաննէս Լազարեանն էր։ Զը պէտք է մոռանալ այս անունը. պէտք է միշտ աչքի առաջ ունենալ, որ Արղութեանը, ինչպէս վկայում է ժամանակակիցներից մէկը (Մարդար Խոջէնց Երևանցի), մի քայլ անդամ չէր անում առանց Լազարեանի։ Այս երկու անձնատրութիւնները կատարելապէս լրիչտակված, անխոնջ եռանդով նուիրվում են պարսկական Հայաստանի ազատութեան գործին։ Խօսողը, պաշտօնական ներկայացուցիչը Յովսէփ արքեպիսկոպոսն էր։ Իբրև քաղաքական մի գործիչ, որի ձեռքի տակ բանակներ չը կան, նա անդադար բանակցութիւններ էր վարում, ճանապարհորդութիւններ էր կատարում, գրաւոր թէ բերանացի դիմումներ էր անում, օգուտ քաղելով ամեն մի բարեյաջող դէպքից։

Այսպէս գործեց նա համարեա քսան տարի։ Հէշտ է քաղաքական ծրագիրներ կազմելը, բայց հէշտ չէ նրանց իրագործելը. մանաւանդ մի այնպիսի ծրագիր, ինչպիսին է նոր, առանձին անկախութիւն ստեղծելը մի ազգի համար, որ շրջապատված է բազմաթիւ անհպատ հանգամանքներով, որ ինքն ըստ ինքեան մեծ չէ, ոչ էլ ուժեղ, կազմակերպված, պատրաստ և որի ազատութեան գործը աւելի բարեսիրական մի ձգտում է համար-

վում քան քաղաքական անհրաժեշտութիւն։ Թուաստանը նոյն իսկ Ղրիմի նուաճումը, որ այնքան կարևոր կենսական հարց էր նրա համար, կարողացաւ իրագործել տասնեակ տարիների մի երկար շարքի ընթացքում։ Իսկ լուսական, դակիական, լիթվեանդական կամ հայկական անկախութիւնները այդքան կենսական անհրաժեշտութիւն չէին ներկայացնում և կարող էին իրագործվել լոկ իբրև բարեսիրական, իդէալական գործեր, որոնք, սակայն, անդրին զոհողութիւններ էին պահանջում։ Ուստի միանգամայն հասկանալի է, որ Արղութեանն ու Լազարեանը այդ քսան տարիների ընթացքում միշտ միատեսակ վերաբերմունք չէին տեսնում դէպի իրանց պաշտպանած դասը.— կամ մօտիկ իրագործման յոյսերն էին դալիս նրանց աչքի առաջ, կամ փոփոխվող հանգամանքներն ու հասանքները ցոյց էին տալիս նրանց որ պէտք է դեռ սպասել, սպասել շատ անդամ համարեա առանց որ և է յոյսի։

Որքան գիտենք, լուրջ և ծանրակշիռ բանակցութիւններ ռուսաց կառավարութեան հետ սկսվեցին նոյն 1779 թուականին, երբ Յովսէփ Արղութեանը գնաց Պետերբուրգ՝ հայոց եկեղեցին օգնելու համար և երբ ղրիմցի

դաղթականների ներկայացուցիչը պատնաշով, արտոնութիւններ էր խնդրում նրանց համար։ Այդ ժամանակներում Եկատերինայի կառավարութիւնը Պետրոս Մեծի մի ալ ծրագիրն ունէր իր առջև—Հնդկաստանի հարցը։ Հնդկաստանում անգլիացիների և ֆրանսիացիների մէջ տեղի ունեցած երկարատև պատերազմները շատ վատ ազդեցութիւն էին արել առևտրի վրա. ծովային ճանապարհը դէպի Եւրոպա վտանգված էր այդ պատերազմների պատճառով, ուստի մի քանի խոշոր վաճառականներ իրանց ապրանքները ցամաքային ճանապարհով էին ուղարկում, այն է՝ Պարսկաստանի վրայով դէպի Կասպից ծովը և Ռուսաստան։ Ռուս կառավարութիւնը որոշեց օգտվել այդ հանգամանքից և ստեղծել այնպիսի յարմարութիւններ, որ այդ առևտրական ճանապարհը միշտ բաց լինի ու ապահով և Հնդկաստանի ապրանքները Կասպից ծովի հարաւային ափերից ջրի ճանապարհով ուղղվեն մինչև Պետերբուրգ, այնտեղից էլ Եւրոպա։

Այս նպատակը իրագործելու համար հարկաւոր էր նախ և առաջ մի ապահով դրութիւն ստեղծել Կասպից ծովի այն ափերում, որոնք պատկանում էին Պարսկաստանին, ուրիշ խօսքերով՝ նուաճել այդ ափերը, հպա-



ԿՈՄՍ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԼԱԶԱՐԵԱՆ

տակեցնել ռուսաց իշխանութեան, քանի որ Պարսկաստանը անվերջ խառնակութիւնների էր մատնված և չէր կարող մի ապահով կացութիւն հաստատել այդ տեղերում։ Ինչպէս յայտնի է, Պետրոս Մեծն էլ նոյն այդ հայեացքն ունէր Կասպից ծովի վրա և կարողացաւ խաղաղ միջոցներով ձեռք բերել նրա արևմտեան և հարաւային ափերը։ Բայց Պետրոսի ժառանգները չը կարողացան պահել այդ երկիրները և Նադիր-Շահի ժամանակ Պարսկաստանը նորից տիրացաւ կասպիական ափերին։ Այժմ կրկնվում էր նոյն քաղաքական ծրագիրը։

1779 թուականի վերջերում գեներալ Սուվորով կանչվեց Պետերբուրգ։ Եկատերինան մի առանձին բարեհաճութեամբ ընդունեց այդ նշանաւոր զինուորականին և նրան յանձնեց կասպիական ծրագրի իրագործումը։ Պոտեմկինը մանրամասն հրահանգներ տուեց Սուվորովին, որին առաջարկվեց գնալ Աստրախան և այնտեղ ուսումնասիրել հարցը ու գործադրութեան միջոցներ մշակել։

Կասպիական ափերի նուաճման հետ այս անգամ էլ, ինչպէս և Պետրոս Մեծի ժամանակ, կապված էր Անդրկովկասի քրիստոնեաների ազատութեան հարցը։ Ռուսաս-

տանը կարող էր հաստատվել կասպիական ափերում և ծաղկեցնել նրանց՝ քրիստոնեայ տարրի աջակցութեամբ։ Մի անկախ հայկական պետութիւն, որ ենթարկված կը լինէր ռուսաց պետութեան, կարող կը լինէր պատուար հանդիսանալ Պարսկաստանի և Թիւրքիայի դէմ։ Վրաստանը արդէն ունէր անկախութիւն, մնում էր նրան ուժեղացնել, ենթարկելով Ռուսաստանի ազդեցութեան։ Այդ մտքով բանակցութիւններ արդէն սկսվել էին վրացիների հետ։ Ուրեմն, Սուվորովի առջև կար և Հայաստանը ազատելու ծրագիրը։ Նախ քան Ատրպատական ուղևորվելը նա կարևոր համարեց ծանօթանալ այդ հարցի հետ Պետերբուրգում։

1780 թուականի յունվարին Պետերբուրգում հայերի համար ոսկէ յոյսեր էին պատրաստվում։ Յովհաննէս Լազարեանի տանը կարևոր խորհրդակցութիւններ էին տեղի ունենում։ Ինքը, Յովսէփ Արղութեանը, այսպէս է պատմում այդ խորհրդակցութիւնները։

Յունվարի առաջին օրը Արղութեանի մօտ գնաց գեներալ Իվան Պետրովիչ Գօրիչը, որ կովկասեան լեռնականներից էր և յայտնելով Սուվորովին տուած յանձնարարութեան մանրամասնութիւնները, հարց ու փորձ արեց

պարսից երկրի մասին, թէ ինչ հեռաւորութիւն ունին մի քանի քաղաքներ և գաւառներ, որքան հայ և թիւրք զօրքեր կան և այլն։ Արղութեանը պատմեց ինչ գիտէր, իսկ Գօրիչը գրի առաւ այդ բոլորը։

Հետևեալ օրը Արղութեանի տեսութեան եկաւ ինքը, Սուվորովը, Յովհաննէս Լազարեանի հետ։ Ամբողջ երկու ժամ Սուվորովը հարցեր էր տալիս Արղութեանին Անդրկովկասի հանգամանքների մասին։ Մանրամասն էր զեներալը հարց ու փորձը մանաւանդ Էջմիածնի և նրա կաթողիկոսների մասին։ Ապա Սուվորովը պարզ տուաց որ հայերը կը ստանան անկախ իշխանութիւն։ Այդտեղից Սուվորովը գնաց Պոտեմկինի մօտ՝ զեկուցանելու իր ըսածների մասին։

Յունվարի 3-ին ուրիշ ևս փայլուն կերպարանք ընդունեցին հայկական յոյսերը։ Սուվորովը իր մօտ էր կանչել Արղութեանին և Լազարեանին։ Խօսակցութիւնը, իհարկէ, միևնոյն առարկայի մասին էր։ Յովհաննէս Լազարեանը երկար ու մանրամասն պատմեց իրերի դրութիւնը Անդրկովկասում և հայերին մի քարտէզի վրա ցոյց տուեց Հայաստանի գաւառներն ու երևելի քաղաքները։ Արղութեանը խնդրեց որ հայկական անկախու-

թիւնը վերանորոգվի Երևան քաղաքում, այսինքն որ դա լինի հայոց մայրաքաղաքը։ Եւ Սուվորովը պատասխանեց թէ կարելի է, բայց պէտք է որ հայոց կաթողիկոսը մի քանի իշխաններով խնդիրք ներկայացնէ հայերի ազատութեան մասին։ Հարց եղաւ և վրաց թագաւորի մասին և Յովհաննէս Լազարեանը պատմեց ինչ գիտէր։ Այնուհետև Սուվորովը յանձնարարեց Լազարեանին նամակ գրել Զուզայ Էմին ազային որ գալ Ռուսաստան։ Զուզայ Էմին Էմին Յովսէփեանն էր, որ 1760 թուականին Լոնդոնից եկաւ Պետերբուրգ և առաջարկեց ռուս կառավարութեան ազատել Հայաստանը պարսկական լուծից։ Արղութեանն ու Լազարեանը մեծ յոյս ստացան այդ տեսակցութեան ժամանակ։ «Ուրախութեամբ դուրս եկանք— ասում է Յովսէփը—և նոյն լուսովն էլ մնում ենք այժմ թէ պիտի ստանանք խոստացածը իր ժամանակին»։

Երրորդ և վերջին տեսակցութիւնը Սուվորովի հետ տեղի ունեցաւ յունվարի 13-ին և ամբողջապէս նուիրված էր Ղարաբաղի մելիքներին։ Ռուսների համար ամենից հետաքրքրականն ու կարևորը այդ հարցն էր։ Միակ պատերազմող տարրը ամբողջ պարսկական Հայաստանի մեջ Ղարաբաղի ժողո-

վուրդն էր։ Արղութեանը մանրամասն կերպով պատմեց մելիքութիւնների անցեալն ու ներկան, թէ ինչ տեսակ կազմակերպութիւն ունին նրանք, ինչ տեսակ տարաձայնութիւններ են ծագել նրանց մէջ։ Պարզ է, որ Ղարաբաղի մելիքութիւնների ոչնչացման գլխաւոր պատճառը Ղարադաղի Մելիք-Շահնազարն էր, որ միւս մելիքներին դիմադրելու համար իր կալուածներում տեղ տուեց Փանահ անունով մի թուրքի։ Սա հիմնեց Շուշի բերդը, խանութեան աստիճանին հասաւ և ճարպիկ ու նուրբ քաղաքականութեամբ այնքան թուլացրեց մելիքներին, որ կամաց կամաց հպատակեցրեց նրանց իրան, փառաւոր կերպով օգտվելով հայերի ընտանի խռովութիւններից։ Փանահի քաղաքականութիւնը աւելի մեծ ճարպիկութեամբ առաջ տարաւ նրա որդի Իբրահիմը, այնպէս որ այն ժամանակներում, երբ Արղութեանը Սուվորովին իր զեկուցումն էր տալիս, Ղարաբաղի մելիքութիւնները համարեա օրհասի մէջ էին։

Պատմելով այդ եղելութիւնները, Արղութեանը հետևեալ տեղեկութիւններն էր տալիս այն ժամանակվայ մելիքների մասին. 1) Մելիք-Յովսէփ Իգիրմիզօրդի (Դիզբոնի) հազար պատերազմող մարդկանց կարողու-

թիւն ունի, այսինքն կարող է հազար զինուոր հանել պատերազմի դաշտ. 2) Մէլիք-Ադամ (Հաթամ) Զրարերդի—հազար մարդ։ Այս երկու մէլիքները միարան են իրար հետ և մեծ մասամբ անկախ են, թէև գանվում են Շուշու խանի իշխանութեան տակ. 3) Մէլիք-Եսայի Դիզակի, նոյնպէս կարող է հազար զինուոր հանել, բայց չատ նեղվածէ Մէլիք-Շահնազարից. 4) Մէլիք-Շահնազար Վարանդայի. սա էր պատճառ որ թուրքերը մտան Ղարաբաղ և զօրեղացան այնտեղ. հազար զինուորների կարողութիւն ունի. 5) Խաչէնում երկու մէլիք—Միրզախան ու նրա որդին և Մէլիք-Այլահվերդի. վերջինս զգեհիկ է և խղճաբարոյ, ունի հինգ հարիւր պատերազմողներ։ Նոյն Խաչէնից է և Ադուանից (Գանձասար) Յովհաննէս կաթողիկոսը։ Բացի այդ մէլիքութիւններից կան և Սիսիանի ու Ղափանի հայերը, որոնք պատերազմի ժամանակ կարող են հանդէս հանել հազար մարդ։

Յովհաննէս Լազարեանը այդ ամիսով պատմեց Սուվորովին և հայերի անցեալի մասին, թէ ինչպէս ընկաւ նրանց թագաւորութիւնը, ինչպէս Դաւիթ-բէկը Սիւնիքում պատերազմներ մղեց և ինչ վախճան ունեցան այդ պատերազմները։ Երեք օր առաջ, յունվարի 10-ին, Լազարեանը ներկայացրել

էր Սուվորովին իր կազմած մի դրաւոր յիշատակագիրը հայ ազգի և նրա իշխանութիւնը վերականգնելու մասին։ Ահա այդ կարևոր թղթի *) բովանդակութիւնը.

«Հայաստանը—այսպէս է սկսվում յիշատակագիրը—մի քանի դար է, ինչ զրկվել է իր թագաւորից և առանձին կառավարութիւնից. շատ տեղերի տիրել են թուրքերը և պարսիկները, իսկ մի փոքրիկ մասը, այսինքն Ղարաբաղը, այժմ էլ մնում է անկախութեան մէջ։ Բայց եթէ ազգից մի որ և է զլխաւոր դուրս գայ, շատ հեշտ միջոցով կարող է Հայաստանը նորից վերականգնել և մի կարճ միջոցում տեղի կունենայ ժողովրդի մի ոչ փոքր հոսանք դէպի Հայաստան։ Բնութիւնից ամուր տեղերը բաւական լաւ միջոց կարող են դառ-

*) Տպված է „Собраніе актовъ, относящихся къ исторіи армян. народа“ ժողովածուի II հատորում (Մոսկվա, 1838, եր. 68)։ Այդտեղ չէ յիշատակված թէ ով է գրել թուղթը, միայն ասված է թէ նա ներկայացրված է Սուվորովին 1780 թ. յունվարի 10-ին։ Բայց հաւանական է, որ դա նոյն թուղթն է, որ յիշված է Սուվորովի գործերի մէջ «Յիշատակագիր պ. Յովհաննէս Լազարեանի՝ Հայաստանի ներկայ դրութեան և նրան վերականգնելու միջոցների մասին» անունով (տ. Бутковъ—„Матеріалы по исторіи Кавказа“, ч. III, Спб. 1869, եր. 152։

նալ ինքնապաշտպանութեան համար. հողի յատկութիւնը և կլիման, առանց որ և է պակասութեան, կարող են տալ բոլոր հարկաւոր մթերքները. նոյն իսկ սեփական վառօղ, երկաթ և արճիճ էլ կարող են ունենալ։ Ղարաբաղի մէլիքները թէև ոչ ոքից կախում չունեն, բայց իրանց անհամաձայնութեամբ պատճառ են դարձել, որ նրանց ոյժերը չլաւվել են։ Բայի դրանից, ազգ հայ տիրողների ազիսութիւնը բոլորովին անպէտք է դարձնում նրանց թէ իրանց և թէ ամբողջ ազգի համար։ Միւս տեղերի հայերը, լինելով պարսիկ խաների իշխանութեան տակ, հարստահարված են և նրանց մեծ մասը փախել է Թիւրքիա»։ Եթէ ժողովրդի ընտրութեամբ կամ Բարձրագոյն (կայսրուհու) բարեհաճութեամբ ազգից մի գլխաւոր դուրս գար, առաջին անգամի համար բաւական կը լինէր որ նա կարողանար հասատավել Դեսպենասում և նրան օգնութիւն տրվէր տիրելու Շամախուն և Գանձակին. «այն ժամանակ Ղարաբաղից և Աղնախից, որոնք անկախած կը մնան, բաւականաչափ զօրք հաւաքելով, կարող է Երևանն ու ուրիշ քաղաքները գրաւել»։ Դրա համար հարկաւոր է երկու կամ երեք հազարից ոչ աւել զօրք երկու տարվայ ընթացքում, մինչև որ ազգ գլխաւորը կը գրաւէ Երևանը. գրաւելուց վերայ, հայկական գաւառների եկամուտներով առանց որ և է պակասութեան կարելի է պահել զօրքերի մի մեծ քանակութիւն։ Բայց հայոց գլխաւորը սկզբում պիտի ունենայ մի քիչ թնդանօթաձիգ և հեռակ զօրք, որպէսզի կարողանայ պաշտպանվել և ապահով լինել, մինչև որ ազգային զօրքը կը սովորէ կանոնաւոր կրթութիւն և այնուհետև նա ինքը կարող կը լինի ամրացնել իր սահմանները և պաշտպանվել Թիւրքիայի ու Պարսկաստանի յարձակումներից։

«Այսպիսի մի ձեռնարկութիւն—աւելացնում է լիչատակագիրը,— կարող է կայսերական մի խօսքով և ամենահեշտ միջոցով, առանց ամենափոքր կասկածի անցամ, գլուխ գալ և նրա (կայսրուհու) հովանաւորութեամբ մի կարճ միջոցում ոչ միայն կամրապնդվի ի յաւիտենական փառս Ռուսաստանի, այլ և ապագայում կարող է ծառայել Թիւրքիան և Պարսկաստանը ճնշելու համար. որովհետև երբ հայ ժողովուրդը կը համախմբվի իր կառավարութեան իշխանութեան տակ և մի քիչ էլ կը տարածէ իր սահմանները, այն ժամանակ կը ստանայ աւելի մեծ եկամուտներ, քանի որ կունենայ առատ բերքեր տուող շատ տեղեր և ընդ միշտ կը պահէ 15-ից մինչև 20 հազար զօրք, իսկ Թիւրքերի կամ

Պարսկաստանի դէմ պատերազմ լինելու դէպքում ժամանակով կարող կը լինի գործ ածել մինչև վեթուն հազար և աւել։ Բացի դրանից նոյն ազգը պարտաւորվել կարող է, հարկաւոր դէպքերում, Ռուսաստանին տալ զօրք այնքան, որքան կարող կը լինի իւրաքանչիւր ժամանակ, և մինչև երախտապարտ կը լինի Ռուսաստանին իր փրկութեան և վերականգնման համար, իսկ թիւրքաց պետութիւնը ժամանակով այս փոփոխութիւնից առաջացած մեծ վնաս կը նկատէ թէ իր ժողովրդի և թէ իր եկամուտների մէջ»։

Հայաստանի ազատութեան այս ծրագիրը համարեա ոչնչով չէ տարբերվում այն ծրագրից, որ մօտ ութսուն տարի առաջ Իսրայէլ Օրին ներկայացրել էր Պետրոս Մեծին *)։ Այժմ էլ, ինչպէս և ութսուն տարի առաջ, հայերը իրանց ազատութիւնը ամենից առաջ իրանց սեփական ոյժի վրա էին հիմնում։ Նրանք միայն խնդրում էին, որ գործի սկզբում ռուսաց կառավարութիւնը մի փոքրիկ օգնական զօրաբաժին տայ։ Դա հարկաւոր էր ոտքի կանգնելու համար, հարկաւոր էր՝ ի-

*) Իսրայէլ Օրիի քաղաքական գործունէութեան մանրամասնութիւնները տես իմ «Հայկական Տպագրութիւն», առաջին և երկրորդ հատորներ։

բանց կանոնաւոր եւրոպական զինուորութիւն ստեղծելու համար։ Այնուհետև, երբ հայերի մէջ եղած ռազմիկ ոյժերը կը կրթվէին կանոնաւոր կերպով, հայկական անկախ իշխանութիւնը ոչ միայն կը կարողանար ինքն իրան պաշտպանել, այլ և կօգնէր Ռուսաստանին, իբրև իրան ազատողին, Թիւրքիայի և Պարսկաստանի դէմ պատերազմ եղած ժամանակը։ Յովհաննէս Լազարեանը շատ հեշտ իրագործելի էր համարում հայկական ազատութիւնը. բաւական էր ռուսաց կայսրուհու մի խօսքը—այսպէս էր նա հաւատացած։ Միհենոյնը ասում էր և Իսրայէլ Օրին։ Եւ դա, ընդհանուր առմամբ, ճիշտ էր, զոնէ այդպէս էին ցոյց տալիս դէպքերը Պարսկաստանում, ուր տիրում էր անիշխանութիւն և ամեն մի ուժեղ խան կարողանում էր տիրապետել, համարեա ոչինչ ընդդիմութեան չը հանդիպելով։

Գալով Ատրախան, Սուվորովը մնաց այնտեղ մօտ երկու տարի և համոզվեց որ հնդկական ծրագիրը անիրագործելի է։ Բայց և այդպէս, նա հաւաքեց տեղեկութիւններ Պարսկաստանի, Անդրկովկասի, Բուխարայի և այլ տեղերի մասին և առանձին առանձին զեկուցումներ գրեց Պոտեմկինին ուղարկելու համար։ Այդ զեկուցումների մէջ գլխաւոր

տեղը բանում են զանազան ճանապարհների նկարագրութիւնները. այսպէս, նկարագրված է այն ճանապարհը, որ տանում է դէպի Պարսից ծովը և այն ճանապարհը, որ Ռաշտից տանում է դէպի Երևան։ Կայ և մի տանձին զեկուցում Ղարաբաղի մելիքների մասին։ Սուվորովը Աստրախանից յարաբերութիւններ ունեց այդ մելիքների հետ *)։ Ղարաբաղում նորից արծարծվեցին ազատութեան յոյսերը։

Սուվորովի տեղ 1781 թուականի վերջերում Աստրախան ուղարկվեց կոմս Վոյնովիչ։ Սա իր նախորդի պէս անզուրկ չը մնաց. կապիտան նաւատորմի դլուխն անցած՝ արշաւանք գործեց դէպի հարաւային ափերը։ Բայց նրա գործունէութիւնը ոչ մի արդիւնք չառաջացրեց։ Աստրաբադի մօտ մի գիւղ հիմնեց նա և կառուցեց մի ամրութիւն։ Գիւղն ու ամրութիւնը, նրա կարծիքով, պիտի անդին նշանակութիւն ունենային առևտրական յարաբերութիւնների մէջ։ Սակայն պարսիկները մի լաւ խաղ խաղացին Վոյնովիչի դլխին։ Հրաւիրելով նրան մի խնճոյքի, նրանք կաչառեցին նրան և խոստացան ազատել

*) Акты Кавказ. Археогр. Коммисіи, т. I, № 871.

միայն այն դէպքում, երբ նա քանդել կը տայ իր չինած ամրութիւնը։ Վոյնովիչ հարկադրված եղաւ այնպէս էլ անել և ազատ իր նաւատորմով վերադարձաւ Աստրախան։

Զը նայած ձեռնարկութեան այսպիսի հետևանքին, հայերը դեռ իրանց յոյսը կորցնելու հիմք չունէին։ Պատեմկինը իր ծրագրից ձեռք չէր վերցրել։ 1782 թուին նա հիւսիսային Կովկասի կառավարիչ նշանակեց իր ազգական գեներալ Պաւել Պատեմկինին և յանձնարարեց նրան սերտ յարաբերութիւններ ունել Անդրկովկասի քրիստոնեաների հետ։ Գեներալ Պատեմկինը մեծ եռանդով և հմտութեամբ կատարեց իր հռչակաւոր ազգականի այդ յանձնարարութիւնը։ Շնորհիւ նրա անխոնջ գործունէութեան, Անդրկովկասում տեղի ունեցան մի շարք շատ նշանաւոր դէպքեր, որոնք առաջացրին ահեղ հետևանքներ, կերպարանափոխելով ամբողջ երկրի վիճակը և բաց անելով ճանապարհ ռուսաց տիրապետութիւնը Անդրկովկասում հաստատելու համար։

Այդ կարևոր գործերից առաջինն էր Վրաստանի հարցը։ Վրաց թագաւոր Հերակլ, տեսնելով որ ուրիշ մի յոյս չունի իր քայքայվող պետութիւնը պահպանելու համար,

դիմից ռուսներին և լայնի պայմաններով Ռուսաստանի հպատակությունն ընդունելու պատրաստականություն լայտնեց։ Այսպիսով ռուսների համար ցանկալի լուծում էր տտանում արևելքի վերաբերմամբ կազմած ծրագրի մի մասը։ 1783 թվին Գիորգևսկ քաղաքում ստորագրվեց դաշնագրություն, որով Վրաստանը մտնում էր Ռուսաստանի հովանավորության տակ։ Ռուս կառավարության ներկայացուցիչը գեներալ Պոտեմկինն էր, իսկ Հերակլ թագավորը ուղարկել էր երկու լիազորներ։ Ներկայ էր և Յովսեփ արքեպիսկոպոս Արզությանը։ Դաշնագրության հիմքն այն էր, որ Վրաստանը այնուհետև չը պիտի հպատակվեր Պարսկաստանին կամ մի այլ պետության, այլ միմիայն պիտի ճանաչեր Ռուսաստանի հպատակությունը։ Իր կողմից Ռուսաստանը խոստանում էր հովանավորություն և աջակցություն, որ Վրաստանը պահպանել իր պետության սահմանները և նույն իսկ ընդարձակել նրանց։ Այդ նպատակով ռուսաց մի զորաբաժին պիտի մնար Վրաստանում։ Վրաց թագավորները իրանց հաստատությունը ստանում են ռուսաց թագավորից։ Մի խոսքով, այդ թուականից Ռուսաստանն էր բռնում այն դիրքը Վրաստանի վերաբերմամբ, որ

դարերից ի վեր բռնել էր Պարսկաստանը։

Դա մի մեծ աջողություն էր թողլ, ներքին երկպառակությունների կեղեքվող Վրաստանի համար. մահմեդական բռնապետության փոխարէն նա քրիստոնեայ պետության հովանավորությունն ու խնամքներն էր ստանում։ Բայց այդ ազատությունը մեծ ազէտ և աւերում էր ստեղծում նրա համար. տարիներից լետոյ Աղա-Մամէդ-խանը եկաւ Վրաստան՝ Գիորգևսկի դաշնագրությունը ջնջել տալու համար և վերջնական մահացու հարուածը հասցրեց Վրաստանին, որ այնուհետև չը կարողացաւ ապրել նույն իսկ Ռուսաստանի հովանավորության տակ։

Նույն տեսակ ազէտալի հետևանքներ ունեցան գեներալ Պաւել Պոտեմկինի լարաբերությունները Ղարաբաղի մելիքների հետ։ Ռուսաստանի դրական խոստումները, լուրջ պատրաստությունները առաջացրին մեծ ոգևորություն, որ և մելիքությունների վերջնական քայքայման պատճառ դարձաւ։

Դեռ մինչև Գիորգևսկի դաշնագրությունը, դեռ այն ժամանակ երբ ռուսաց յատուկ գործակալը գնում էր Թիֆլիս համոզելու Հերակլին ընդունել ռուսաց հպատակությունը, գրագրություն սկսվեց գեներալ Պաւել

Պոտեմկինի, Ցավլէվ արքեպիսկոպոսի ու Ղարաբաղի մելիքների մէջ։

Գեներալ Պաւել Պոտեմկինի միջոցով իշխան Պոտեմկինը հետևեալ հարցերն առաջարկեց Արդուլհամիդին. «1) Մեծ Հայաստանի երկիրը, ընկնելով օրէնքով անմաքուր թիւրքերի և պարսիկների ձեռքը, այնքան երկար դերութիւնից լեռսյ էլ պահում է արդեօք ոգու ոյժ, որ կարևոր է ազատ հոգու համար։ Դերութիւնը և զանազան ճնշումները արդեօք չէն ոչնչացրել սրտերի մէջ ազնիւ զգացմունքները։ Բանականութեան ոյժը, օրէնքը և հաւատի ամրութիւնը այնքան արդեօք ներգործութիւն ունին, որ սրտերի ներքին արամադրութիւնը հակված լինէր խորտակելու նրանց ճնշող լուծը։ 2) Հաւատը ուժեղ կերպով է արդեօք ազդում հայ ժողովրդի վրա և բարեպաշտութիւնը կարող է ժողովուրդը դրդելու սուրբ դառնալ։ Կաթողիկոսի աստիճանը ինչ յարգանք ունի հայերի մէջ։ Մելիքները մատուցանում են պատշաճաւոր յարգանք նրա սրբազան աստիճանին, իսկ ժողովուրդը հնազանդ է մելիքներին. և վերջապէս, ինչ միջոցներ կան ժողովրդին հաճոյանալու, մելիքների հաւատարմութիւնը միացնելու և հոգևորականութիւնը դրաւելու

համար։ 3) Հայերին պատկանող հողը այժմ ում տիրապետութեան տակ է։ Քանի մելիքներ կան Ղարաբաղի նահանգում և որքան ժողովուրդ կարելի է հաշվել այնտեղ»։

Ստանալով այդ հարցերի պատասխանը, իշխան Պոտեմկինը Եկատերինա կայսրուհուանունից առաջարկեց Արդուլհամիդին լուսաղրել Ղարաբաղի մելիքներին և նա, իհարկէ, առանձին հաճութեամբ կատարեց այդ առաջարկութիւնը։ Գեներալ Պոտեմկինի լանձնարարութեամբ Ցավլէվը դրեց մելիքներին, որ պէտք է պատրաստ լինել ռուսաց ազատարար զօրաբաժնին միանալու համար։ Գրութիւնները ուղարկվում էին Ղարաբաղի քաղաքական շարժման կենտրոնը, որ Գանձասարի հռչակաւոր վանքն էր։ Ցավհաննէս կաթողիկոսը ժողովի կանչեց հայ մելիքներին։ Հրաւէր չուղարկվեց միայն Վարանդայի Մելիք-Շահնազարին, այն դաւաճանին, որ միացած էր Շուշու խանի հետ։ Ջրաբերդի Մելիք-Մէժլումը, Գիւլստանի Մելիք-Աբովը, Դիզակի Մելիք-Բախտամը, հոգևորականութեան և ժողովրդի ղեկավարների ներկայութեամբ, հանդիսաւոր կերպով լսանեցին իրանց հպատակութիւնը Ռուսաստանին, իրանց հաւատարմութիւնը հաստատեցին համբուրելով խաչն

ու աւեստարանը, ստորագրեցին իրանց գրաւոր խոստումը։ Այնուհետև ժողովը Ռուսաստանում իր ներկայացուցիչ ընդունեց Յովսէփ Արղութեանին։ Յատկապէս մի առանձին թուղթ գրուեց իշխան Դրիգորի Պոտեմկինին, իբրև այս գործի գլխաւոր սկզբնապատճառին, որին հայերը յայտնում էին իրանց շնորհակալութիւնը։ Մի և նոյն ժամանակ մէլիքները խնդրում էին որ ռուսների խոստացած արշաւանքը չուտ սկսուի, որպէս զի իրանք էլ միանան նրան և ազատուին լեռնականական լուծից։

Բանակցութիւնները այն ժամանակների համար մի անսովոր արագութեամբ էին կատարուում։ Բոլոր գրագրութիւնները Յովսէփ Արղութեանի միջոցով էին լինում։ 1783 թ. մարտի 5-ին գրւում է Գանձասարի ժողովի կողմից առաջին հաւաքական աղերսագիրը. այդտեղ Ղարաբաղի հետ մենք միացած ենք տեսնում նաև հարեան Ղարադաղը. աղերսագիրը ստորագրում են Յովհաննէս կաթողիկոսը, վեց եպիսկոպոսներ, վեց մէլիքներ։ Իսկ ապրիլի 6-ին իշխան Պոտեմկինը արդէն հրամանագրում է գեներալ Պոտեմկինին սերտ կապ հաստատել Հերակլ թագաւորի հետ, պաշտօնական անել Շուշու Իբրահիմ-խա-

նին և հաստատել Ղարաբաղում հայկական անկախ իշխանութիւն. պէտք էր նաև գրաւել Դերբենտը, ձերբակալելով այնտեղի խանին։

Այս բոլորը հայկական ծրագրի, այսպէս ասած, միջուկն էր կազմում։ Վճռած էր Ղարաբաղից և Ղարադաղից կազմել մի հայկական իշխանութիւն, ապահովել նրա գրութիւնը, տալ մի լաւ ժողովրդական կառավարութիւն, որպէս զի միւս տեղերի հայերն էլ գրաւուին և հետզհետէ միանան այդ իշխանութեան, մինչև որ այդպիսով կը գոյանայ մի ուժեղ հայկական պետութիւն Ասիայում։ «Այսպիսով — գրում էր իշխան Պոտեմկինը Եկատերինային — Ասիայում կը վերանորոգուի մի քրիստոնէական պետութիւն համաձայն Ձեր Կայսերական Մեծութիւն խոստումներին, որոնք իմ միջոցով հաղորդուած են հայոց մէլիքներին»։

Եւ այսպէս, գործը սկսուած էր չատ հիմնաւոր կերպով. նա հիմնուած էր ռուսաց կայսրուհու հաստատ խոստումների վրա, նրան իր ձեռքն էր առել Ռուսաստանի ամենազօրեղ և ամենաուժեղ մարդը։ Հօրիզոնի վրա չը կար մի փոքրիկ ամպ էլ, որ մթնացնէր հայերի վառուռն յոյսերը։ Ղարաբաղի մէլիքները, Իբրահիմ-խանի դէմ երկար մաքա

ռելոց և այդ մաքառումների մէջ իրանց ոյժերը բաւական չլսուելոց լեռոյ, տեսնում էին հայրենիքի գործը ապահովված, իսկ իրանց թշնամուն՝ ոչնչացած։

Բայց պէտք է արդար լինել և այդ թշնամու վերաբերմամբ։ Իբրահիմ-խանը ուժեղ մարդ էր. ուժեղ մանաւանդ իր ճարպիկութեամբ, իր նուրբ քաղաքականութեամբ։ Կարելի է համարձակ ասել, որ հայ մէլիքները, միասին վերցրած, չէին հասնում այդ խանին իրանց խելքով և ընդունակութիւններով։ Ուր հարկաւոր էր, Իբրահիմը բռնի ոյժ էր գործադրում արևելեան իշխանի ամբողջ անզգամութեամբ. գալիս էին և այնպիսի դէպքեր, երբ հարկաւոր էր դէն դնել բռնութիւնը, ոյժը, գործել զգուշութեամբ, խաղաղ միջոցներով, մանաւանդ խորամանկութեամբ։ Ամենագլխաւորն այն էր, որ նա ամենայն ուշադրութեամբ հետևում էր բոլոր անցքերին թէ Ղարաբաղում և թէ առհասարակ Անդրկովկասում ու Պարսկաստանում և միշտ յարմարեցնում էր իր գործողութիւնները այդ անցքերին։ Երբէք նա չէր արհամարհում իր դիմացինի ոյժը, երբ զգում էր իր թուլութիւնը։ Տեսնելով Հերակլի ուժեղանալը, տեսնելով թէ ինչպէս նա ազատեց Գանձակին և Երևանին, Իբրահիմ-խանը չսպասեց դաշնակցութիւն կապել նրա հետ։ Այդ միջոցով նա անվնաս դարձրեց իր համար ոչ միայն Վրաստանը, այլ և Ղարաբաղի հայ մէլիքներին, որոնք չէին կարող միանալ վրաց թագաւորի հետ և նրանից աջակցութիւն ստանալ՝ իր դէմ կռուելու համար։

Այժմ, նստած իր Շուշի բերդում, մշուշապատ ժայռերի գլխին, խանը կարողացաւ մեղմացնել իշխան Պատուհիլինի թափը և մի յայտնի աստիճան նուազեցնել նրա երկու բարեկամների — Յովհաննէս Լազարևանի և Յովսէփ Արղութեանի եռանդուն միջնորդութիւնների նշանակութիւնը։ Ի՞նչպէս այդ բանը գլուխ բերեց ասիացի ճարպիկ քաղաքագէտը։ Նրան յայտնի էր ամեն ինչ։ Նա գիտէր, որ Հերակլը ընդունում է ռուսաց հպատակութիւն և շատով ռուս զօրքեր երևան կը գան Վրաստանում. դաւաճան հայերի միջոցով իմացաւ և այն բանակցութիւնները, որ վարում էր Գանձասարը գեներալ Պատուհիլինի հետ։ Ամեն ինչ ցույց էր տալիս որ եկել հասել է Ռուսաստանի առաջ արշաւելու ժամանակը։ Եւ ով պիտի դիմադրէր նրան։ Աւելորդ էր այդ մասին մտածել անգամ. յամենայն դէպս, մտածողը Ղարաբաղի խանը

չը պիտի լինէր։ Եւ Իբրահիմը մի շատ ճարպիկ խաղ սկսեց։ Նա խնդրեց պատգամաւոր ուղարկեց գենեռալ Պոտեմկինի մօտ և յայտնեց նրան թէ պատրաստ է հպատակվել Ռուսաստանին և հարկ տալ նրան։

Իշխան Պոտեմկինը, որքան էլ ոգեորված լինէր Ախալցում մի ուժեղ քրիստոնեայ պետութիւն ստեղծելու մտքով, չէր կարող կամայ թէ ակամայ կանգ չառնել, չը մտածել այդ ինքնայօժար հպատակութեան, այդ կամաւոր հարկատուութեան վրա։ Եւ նա սկսում է տարուբերվել. հէնց առաջին թղթում, մայիսի 19-ին, նա գրում է Պոտեմկինին, որ Շուշու խանի յայտնած հնազանդութիւնը հարկադրում է հրաժարվել նրան պաշտօնանկ անելու դիտաւորութիւնից, եթէ խանը կը յօժարվի կատարել կայսրուհու բոլոր հրամանները։ Բայց հարցը միանգամից, փութկոտութեամբ վճռած չը լինելու համար նա չոր ու ցամաք մի պատասխան է տալիս Իբրահիմին, իսկ Պաւել Պոտեմկինին մի և նոյն թղթում յանձնարարում է «փաղաքշել հայերին, որպէս զի նրանք պատրաստ լինեն աջակցելու Ռուսաստանի ձեռնարկութիւններին Հայաստանում և Ղարաբաղում, ձեռնարկութիւններ, որոնց նպատակն է կազմել այդ տեղերից մի ուժեղ քրիստոնեայ պետութիւն Ախալցում՝ Ռուսաստանի հովանաւորութեան տակ»։ Իսկ կայսերական դրան ուղարկած իր թղթում իշխան Պոտեմկինն ասում էր թէ Իբրահիմ-խանի առաջարկութիւնը ինքը ընդունում է, քայց և այդպէս պէտք է, յարմար դէպքում, խանի տեղ դնել հայ ազգութեան պատկանող մի կառավարիչ, քանի որ ռուսաց կառավարութիւնը մտադիր է Ախալցում մի քրիստոնեայ պետութիւն ստեղծել։

Անկարելի է ենթադրել թէ հայերը չը գիտէին Իբրահիմ-խանի սկսած խաղը։ Երևի հէնց նրանք էին, որ խմաց էին տալիս ռուսաց կառավարութեան թէ որքան անկեղծութիւն և շիտակութիւն կայ խանի արած առաջարկութեան մէջ։ Եւ այդ պատճառով էլ ռուսաց կառավարութիւնը շարունակեց իր պատրաստութիւնները՝ դէպի Դերբենտ և այնտեղից Անդրկովկաս արշաւելու համար։ Դերբենտի գրաւումը ամենից շատ հարկաւոր էր այն պատճառով, որ նա, իբրև Ռուսաստանին ամենամօտիկ քաղաք, դառնար հայերի համար մի ապահով ցենակէտ։ Իշխան Պոտեմկինը դրամական հարկաւոր միջոցները հասցրեց Պաւել Պոտեմկինին, որ Աստրախանում երկու տարվայ պաշարներ էր պատրաս-

տում և մի և նույն ժամանակ մանրամասն կերպով մշակում էր ապագայ արշաւանքի ծրագիրը։

Պատրաստվում էին և հայերը, և այդ պատրաստութիւնները չատ էլ դաղտնի չէին Իբրահիմ-խանի համար։ Բանը այնտեղին հասաւ, որ Էջմիածնի և Գանձասարի կաթողիկոսներն էլ միացան հայոց գործի համար։ 1783-ի օգոստոսին զեներալ Պոտեմկինը գրում էր իշխանին թէ երկու կաթողիկոսները պայմանաւորվել են իրար հետ տեսակցութիւն ունենալ՝ ռուսաց զօրքին, նրա Հայաստան մտնելուց յետոյ, բոլոր հարկաւոր պաշարները հասցնելու համար։ Արշաւանքը դէպի Հայաստան ենթադրվում էր սկսել 1784 թուականի ամառը։ Զեներալ Պոտեմկինը հաւանում կերպով էր առաջարկում կազմակերպել արշաւանքը. բաժանել ռուսաց զօրքը երկու մասի. մի մասը առաջ է խաղում Ղըզլարից դէպի Դերբենտ, Կասպից ծովափը գրաւելու համար, իսկ միւս մասը Մոզդոկից Կովկասեան սարերով գնում է Թիֆլիս և այստեղից դէպի Ղարաբաղ և Ղարադաղ։ Նոյեմբերին նա հարցնում էր իշխան Պոտեմկինից. «Պատրաստութեան ինչ ձև տալ նոր պետութեան, որ կազմվում է Ղարաբաղից և Ղա-

րադաղից. Երևանի նահանգը պէտք է արդեօք մտցնել այդ նոր պետութեան մէջ, թէ պէտք է թողնել Վրաստանին»։ Նոյեմբերին ռուսաց երկու բատալիոն զօրք մտան Թիֆլիս։ Գէորգեվսկի դաշնագրութեան համաձայն՝ այդ զօրքը պիտի մնար Հերակլի տրամադրութեան տակ։ Հրամանատարն էր գնդապետ Բուրնաշով։

Իսկ ինչ էր անում Իբրահիմ-խանը։ Տեսնում էր նա որ ռուսները հանգիստ չեն անում. տեսնում էր մանաւանդ, որ հայերը ռուսների համար աւելի մեծ նշանակութիւն ունին, քան ինքը։ Եւ սկսեց չտապով ամրացնել իր Շուշի քաղաքը. պաշտպանվելու միջոցներ էր հնարում։ Իսկ պաշտպանվելու մի միջոցն էլ հայերից ազատվելն էր. և նա սկսում է միաժամանակ սատանի նեղել ու կողոպտել նշանաւոր հայերին։ Բայց նա մի զարմանալի համբերատարութեամբ դեռ փորձում է քաղաքագիտական հնարքներով առնել պատրաստվող փոթորիկի առաջը։ Նորից նա դիմում է ռուսաց կառավարութեան, նորից առաջարկում է իր հնազանդութիւնը, խնդրելով որ ռուսները չը խառնվեն իր ներքին գործերի մէջ։ Այս անգամ նա մենակ չէ։ Նրա բարեկամն ու դաշնակիցը, Խոյի Ամիդ-խանը,

նոյնպէս խնդրում է ռուսներին ընդունել իրան Ռուսաստանի հովանաւորութեան տակ։ Իշխան Պատեմկինը կարեւորութիւն է տալիս այս խանի առաջարկութեան և յուսադրում է նրան։ Մի և նոյն ժամանակ դիմումներ են անում ռուսաց կառավարութեան և Գիլանի խանը, Ուրմիայի սարդարները։ Բայց բոլոր այդ դիմողներից աւելի կարեւոր էր Ալի-Մուրադ-խանը։

Պարսկաստանի անվերջ խռովութիւնների մէջ սա մէկն էր այն սրատես և արիւ զօրավարներից, որոնց համար այնքան հեշտ էր հասնել թագաւորական գահին։ Եւ Ալի-Մուրադ-խանը մի քանի պատերազմներից յետոյ կարողացաւ թագաւորել Սպահանում։ 1784 թուականի սկզբում այս Ալի-Մուրադ-խանը մարդ ուղարկեց իշխան Պատեմկինի մօտ մի շատ ճեռնտու առաջարկութեամբ. նա խնդրում էր ռուսներից ճանաչել իրան Պարսկաստանի Շահ և փոխարէնը խոստանում էր վերադարձնել Ռուսաստանին նրա նախկին կալուածները Պարսկաստանում, այսինքն Կասպից ծովի ափերը և բայի դրանից Դարբաղը, Դարագաղը, Նախիջևանի և Երեւանի նահանգները։ Այդպիսով ահա ռուսներին աջողվում էր միանգամից, խաղաղ մի-

ջոցով, առանց մի կաթիլ արիւն թափելու, ստանալ այն բոլորը, ինչ նախատեսված էր ստանել պատերազմով։ Իշխան Պատեմկինը վճռում է անմիջապէս բանակցութիւններ սկսել Ալի-Մուրադ-խանի հետ մի դեսպանի միջոցով։ Դեսպանութիւն ուղարկելը ձգձգվում է, 1784-ի ամառը գալիս էլ է անցնում է, բայց ռուսաց զօրքի արշաւանք չէ սկսվում դէպի Հայաստան։ Տարվայ վերջին միայն՝ Պատեմկինի դեսպանը ճանապարհվում է դէպի Սպահան, բայց ճանապարհին լսում է որ Ալի-Մուրադ-խանը մեռել է և, ի տարբերութիւն այլ ևս չէ շարունակում ճանապարհը։

1784-ի դէպքերի լիշատակութիւնը վերջացնելու համար ասենք և այն, որ փոխանակ հայերի սպասած արշաւանքի՝ Իշխան Պատեմկինից հրաման է ստացվում Յովսէփ արքեպիսկոպոսի անունով, որ մի այնպիսի հայ մարդ ուղարկէ իր մօտ, որ լաւ տեղեակ լինէր Հայաստանի գործերին։ Յովսէփը դիմում է հայերին և նրանք ընտրում են Ստեփան Դաւթեանին, որ և գնում է Իշխան Պատեմկինի մօտ և ստանում է «Արարատեան դեսպան» անունը։ Իշխանը հարկաւոր է համարում, որ դիմում անէ նաև հայոց ընդհանրական կաթողիկոսը։ Այդ էլ կատարվում է։

Ղումբաս կաթողիկոսը գրում է թուղթ ու աղաչում է որ հայերը աղատվեն մահմեդական լուծից։

Անցան 1783—1784 նշանաւոր թուականները։ Մեծ լոյսերի, իրականացման այնքան մօտիկացած ակնկալութիւնների տարիներ էին դրանք։ Բայց անցան։ Ակամեց ուրիշ տեսակ ժամանակ։ Քաղաքական հանգամանքները փոխվում են, ռուսները հարկադրված են մոռացութեան տալ «ուժեղ քրիստոնէական պետութեան» ծրագիրը և աղատութիւն որոնող հայութիւնը անպէտ կրուատներ է կրում։ Արձակվում են Իբրահիմ-խանի կապանքները. և նա չտապում է վերջին չէչտակի հարուածները տալ այն երկրի հայ իշխանութեան, ուր թուրքական խանութիւն էր հաստատել հայ դատաստանը։

Մենք տեսանք որ նրա բարեկամն ու դաշնակիցը, Խոյի խանը, դիմեց ռուսներին և իշխան Պոտեմկինի առանձին ուշադրութեան արժանացաւ։ Բայց այս անգամ լուռ չը մնաց Թիւրքիան։ Չը կամենալով որ իր սահմանակից երկրի իշխողը հիւսիսային մեծ պետութեան հարկատուն դառնալ և այդպիսով ռուսաց ղէնքի համար ճանապարհ բաց անել դէպի Փոքր Ասիա, Թիւրքաց կառավարութիւնը չտապեց Խոյի խանին իր հավանաւորութեան տակ ընդունել. նրա օգնութեամբ խանը պարսից կառավարութիւնից անկախ դիրք ստացաւ և այնքան ուժեղացաւ, որ նոյն իսկ սիրեց Թավրիզին։

Իբրահիմ-խանի համար այդ եղելութիւնը մեծ նշանակութիւն ստացաւ. նա էլ աչքերը դարձրեց դէպի Թիւրքիա և առ ժամանակ թողեց ռուսներին իր հպատակութեամբ խաբելու քաղաքականութիւնը։ Մահմեդական տարրը այնպիսի շարժումներ էր սկսել, որ ռուսաց սուլթանները այլ ևս անմիջական, մօտալուտ վախ չէին ազդում։ Կովկասեան լեռներում երևացել էր Շեյխ-Մանսուրը, որ կրօնական պատերազմ էր քարոզում. նա սկսեց արշաւանքներ գործել հիւսիսային Կովկասում գտնվող ռուս զօրքերի դէմ։ Գեներալ Պոտեմկինը հարկադրված էր իր ամբողջ ուշադրութիւնը նուիրել լեռնականների այդ շարժման. պէտք էր գիմադրել նրան, ռուս զօրքերի պակասութիւն էր զգացվում։ Հասկանալի է, որ նա այլ ևս չէր կարող հետաքրքրվել թէ ինչ է կատարվում Անդրկովկասում։

Իսկ այստեղ կարևոր դէպքեր էին տեղի ունենում։ Դաղստանի Օմար-խանը, լեզգի-

ների մեծ բազմութեան դլուխ անցած, արշաւեց Վրաստանի վրա։ Հերակլը, թէև ունէր երկու բատալիոն ռուս զօրք, չը կարողացաւ այդ արշաւանքի առաջն առնել։ Օմարը յաղթող էլ մնաց։ Թէ որքան նեղված էր Հերակլը, երևում է նրանից, որ նա խնդրում էր ռուսներից 10 հազար օգնական զօրք կամ 300 հազար ռուբլու մի դումար իբրև փոխառութիւն։ Վերջը նա ստիպված եղաւ հաշտութիւն կնքել Օմար-խանի հետ, խոստանալով նրան տարին 6000 ռուբլի հարկ տալ։ Ռուսները, ուրիշ ճար չունենալով, համաձայնութիւն տուին։

Իբրահիմ-խանը չտարաց այս նոր հանդէս եկած ոյժից էլ օգտվելու։ Օմար-խանը գնաց Շուշի, ամուսնացաւ Իբրահիմ-խանի քրոջ հետ։ Երևանն ու Գանձակը հրաժարվեցան Հերակլին հարկ վճարելուց։ Թիւրքիան Իբրահիմ-խանին էլ ուղարկեց ընծաներ ու գրդում էր նրան էլ, միւս մահմեդական իշխողների հետ, զէնք բարձրացնել ռուսների դէմ։

Ահա այսքան յարմար դէպքից օգուտ քաղելով, Շուշու խանը վճռեց վերջ տալ հարկ հարցին։ Հարկաւոր էլ չէր դրա համար մեծ ցնցումներ առաջացնել երկրի մէջ։ Իբ-

րահիմը չատ լաւ էր ճանաչում իր հակառակորդներին. քաջ էին դրանք, ոգևորված իրանց արդար դատով, բայց և միամիտ էին, հեռատեսութիւնից զուրկ։ Բաւական էր մի ծուղակ պատրաստել նրանց համար։ Որոշի դլուխ անցած երեք մէլիքներին—Մէժլումին, Արովին և Բախտամին նա հրաւիրեց քաղցր խոստումներով և հրաւիրեց իր մօտ՝ բարեկամաբար վերջացնելու իրանց վէճերը։ Մէլիքները գնացին Շուշի. ազատեղ առաջին երկուսին սպատում էր բանտը, իսկ Երրորդին, Մէլիք-Բախտամին, աքսոր Պարսկաստան։ Այնուհետև Իբրահիմ-խանը ձեռք առաւ հայոց քաղաքական շարժման օջախը — Գանձասարի վանքը։ Նրա մարդիկը կողոպտեցին վանքը, իսկ Յովհաննէս կաթողիկոսին և նրա ազգականներին կալանաւորելով, տարան Շուշի։ Կաթողիկոսը մնաց բանտի մէջ. նրան թունաւորեցին խանի հրամանով (1786)։

Իսկ Յովսէփ արքեպիսկոպոսը անդադար աշխատում էր, որ ռուսները կատարեն իրանց խոստումները։ Նա գնաց զեներալ Պոտեմկինի մօտ, նամակներ էր գրում իշխան Պոտեմկինին, խնդրում էր օգնել և հաւատացնում էր թէ Ղարաբաղում ամեն ինչ պատ-

բաստ է՝ ռուսաց զորքերը ընդունելու և կերակրելու համար։ Նա մինչև իսկ պատրաստ էր անձամբ գնալ Ղարաբաղ և կարգադրել գործերը։

Իզուր էին այդ թախանձանքները. ռուսները չէին կարող այդ ժամանակ գործ սկսել Անդրկովկասում։ Միայն 1787 թուականի երկրորդ կէսում Հերակլ թագաւորը վրաց և ռուսաց զորքերով արշաւեց դէպի Գանձակ, որ այլ ևս չէր հպատակվում նրան։ Գանձակից յետոյ նա մտադիր էր Ղարաբաղ գնալ՝ Իբրահիմ-խանի, իր նախկին դաշնակցի դէմ։ Այս արշաւանքի նպատակը ուրիշ բան չէր, բայց միայն վերադարձնել Ղարաբաղ փախած բարձրաստիճան թուրք ընտանիքները, որոնք Հերակլի հպատակներն էին և որոնց հեռանալովը վրաց, առանց այդ էլ սաստիկ աղքատ, գանձարանը մեծ վնասներ էր կրում։

Մէլիք-Մէժլումը և Մէլիք-Արովը փախել էին Իբրահիմ-խանի բանտից։ Լսելով Բուրնաչովի զորաբաժնի Գանձակ հասնելը, նրանք կարծեցին թէ այդ երկու բատալիոնները հէնց այն արշաւանքն են սկսել, որի մասին խօսվում էր վերջին տարիների ընթացքում։ Մէլիքները դիմեցին նրան և Հերակլին։ Վրաց զորքերից մի մեծ հատուած

ուղարկվեց Իբրահիմ-խանի դէմ. մէլիքներն էլ միացան և լաւ ջարդ տուին խանի զորքերին։ Ամեն ինչ աջողութիւն էր խոստանում. յաղթութիւնը աւելի քան ապահովված էր։ Բայց յանկարծ գնդապետ Բուրնաչովը հրաման է ստանում իշխան Պոտեմկինից՝ անյապաղ վերադառնալ, զօրաբաժնի հետ, Ռուսաստան։ Իզուր Հերակլը և մէլիքները թախանձում էին Բուրնաչովին սպասել գոնէ մի 12 օր էլ. մէլիքները, տեսնելով իրանց անօգնական երեսի վրա թողած, ուզում էին գոնէ իրանց հպատակներին զուրս հանել Ղարաբաղից, գաղթեցնել Վրաստան։ Ռուս հրամանատարը չը սպասեց և խիստ հեռացաւ. ռուսաց զորքերը հարկաւոր էին Ռուսաստանին. սկսվել էր ռուս-թուրքական երկրորդ պատերազմը։ Ամբողջ Անդրկովկասը թողնվում էր բախտի կամքին։

Մէլիքները ստիպված եղան ռուսաց զորքի հետ գնալ Թիֆլիս։ Ղարաբաղում մնացած նրանց հպատակները, թուով մօտ 7 հազար տուն, Իբրահիմ-խանի ձեռքումն էին։ Միայն 500 ընտանիքներ հեռացան Ղարաբաղից և բնակութիւն հաստատեցին Շամբուռում։ Խանը չափազանց մէլիքների կալուածներն ու կալքերը, իրան հաւատարիմ հայ-

ին նշանակեց կառավարիչներ։ Ղարաբաղը իրապէս զրկվեց իր հին անկախութիւնից։ Հայ ժողովուրդը սկսեց ցիրուցան դառնալ։ Այնուհետև հայրենիքի անկախութեան ներկայացուցիչ մելիքները, զուրկ հայրենիքից, սասանդական թափառում էին Վրաստանում և Գանձակի խանութեան մէջ, աշխատում էին նորից տիրապետական իրաւունքներ ձեռք բերել իրանց հպատակների վրա օտար երկիրներում։ Բայց նրանք սխալվում էին. չէին հասկանում, որ անկախ ժողովուրդ կարող է լինել միայն սեփական հողի վրա, միայն հայրենիքում։ Փախչելով Ղարաբաղից, մելիքները փախչում էին և իրանց պապենական ազատութիւնից։ Օտար երկնքի տակ ոչ մի տեղ նրանք չէին կարող հաստատուն յենակէտ գտնել։ Եւ սակայն նրանք կարծում էին թէ հայրենիքը ոչինչ է, բաւական է որ լինեն իրանք և իրանց ժողովուրդը, և այնուհետև Ղարաբաղի մելիքութիւնները կարող են գոյութիւն ունենալ և Վրաստանում կամ նոյն իսկ Ռուսաստանում։ Կուռողներ էին այդ մելիքները, բայց ոչ քաղաքագէտներ։ Եւ իզուր չէր հնդկաստանցի հարուստ հայրենասէր Շահամիրեանը խորհուրդ տալիս մելիքներին կրթութիւն, ուսում տարածել

իրանց երկրում։ Այդ բաները, իսկ որ, պակասում էին Ղարաբաղում. և հէնց դրանից չէր արդեօք որ այնպէս զուր էին կորչում մելիքների հերոսական ջանքերը...

Հայկական ծրագրի այս տեսակ վախճան ստանալը չը վհատեցրեց Յովսէփ արքեպիսկոպոսին և Յովհաննէս Լազարեանին։ Դա ժամանակաւոր անաջողութիւն էր համարվում. սմին լինչ դեռ չէր կորած։ Եւ առաջին յարմար դէպքում Արզութեանը վերանորոգեց իր միջնորդութիւններն ու բանակցութիւնները։

Ռուս-թիւրքական երկրորդ պատերազմի ժամանակ, ինչպէս տեսանք, Յովսէփ արքեպիսկոպոսը գտնվում էր Պօտեմկինի բանակում։ Ինքը, Տաւրիկեան իշխանն էլ, չէր մոռացել իր ծրագիրը։ Պատերազմական գործերը, այն կողմերում ապրող հայերին խնամելու հոգերը չէին խանգարում որ զօրքերի դլխաւոր հրամանատարի վրանում քննվէր և Անդրկովկասի հարցը։ 1790 թուականի յունվարին Յովսէփ արքեպիսկոպոսը ներկայացրեց մի մանրամասն գրութիւն հայոց գործերի մասին։ Այդտեղ նա գրել էր հայերի ազատական ջանքերի պատմութիւնը Պետրոս Մեծի ժամանակ։ Պատմութեան կցված էր մի

յիշատակագիր Ղարաբաղի մելիքների մասին. այստեղ էլ համառօտ կերպով պատմվում էր այն ամենը, ինչ տեղի էր ունեցել 1780—1787 թուականներին և ապա առաջարկվում էր մի նոր ծրագիր։

Ինչ էին այժմ խնդրում հայերը։ Ղարաբաղից փախած մելիքների դիմումներին Յովսէփ արքեպիսկոպոսը պատասխանել էր նոր յուսադրութիւններով։ Եւ այժմ նա յայտնում էր Պօտեմկինին որ մելիքները իր միջոցով խնդրում են ազնչացնել Շուշու խանութիւնը, որպէս զի իրանք կարողանան նորից հաստատվել իրանց տեղերում. Ղարաբաղի վրա ընդհանուր կառավարիչ կարգելն էր նշանակել վրաց թագաւորաղն Դաւթին կամ մի ուրիշին։ Իսկ եթէ անկարելի է այդ անել, եթէ ռուսաց կառավարութիւնը պիտաւորութիւն չունի ազատել Ղարաբաղը, այդ դէպքում մելիքները խնդրում էին թոյլ տալ իրանց գաղթել կամ Դերբենտի կողմերը կամ Ռուսաստան։ Գաղթելու պայմանները այսպէս էին. մելիքները տանում են իրանց հետ իրանց ժողովուրդը, տանում են հոգեր և ժառանգական տիրապետողներ են հանդիսանում, ինչպէս էին Ղարաբաղում։ Հաղորդելով այդ բոլորը, Արզումեանը խնդրում էր

իշխան Պոտեմկինի հրահանգները թէ ինչ պէտք է պատասխանել մելիքներին։

Մելիքների այս նոր առաջարկութիւնների մէջ, որոնց Արզումեանը, անշուշտ, իր հաւանութիւնն էր տուել, երկու գլխաւոր կէտեր կան։ Առաջինն այն է, որ հայերը իրանց համար կառավարիչ են խնդրում վրաց թագաւորական տան անդամներից մէկին։ Այս միտքը նոր չէր ծագում հայերի մէջ. շատերն էին կարծում որ հայերը, անկախութիւն ստանալու դէպքում, կարող են ազգակի վրաց թագաւորական տանից վերցնել իրանց համար իշխան կամ թագաւոր։ Այս միտքը պաշտպանում էր մանաւանդ հնդկահայ Շահամիրեանը թէ իր երկու գրքերում, որոնք տպագրվեցան Մադրասում և թէ իր գրագրութիւնների մէջ։ Հերակլը համարվում էր հայերի ազատող. նա Բագրատունիների ցեղից էր, իսկ Բագրատունիները, ինչպէս յայտնի է, թագաւորական հարստութիւն են ունեցել և Հայաստանում։ Հայ-վրացական անկախութեան կողմնակից էր և Արզումեանը, որ շատ բարեկամ էր Հերակլի և նրա ընտանիքի հետ և անդադար նամակագրութիւն ունէր հնդկահայերի, մանաւանդ Շահամիրեանի հետ։

Գալով երկրորդ կէտին, այսինքն զաղ-
թականութեան, մենք կարող ենք ընդունել,
որ Արզումեանը զէմ չէր և հայոց հարցի այդ
տեսակ լուծման։ Նա, որ բազմամարդ զաղ-
թականութիւններ Ռուսաստան մացնելու
պատճառ էր դառել, չէր կարող մի առանձին
անյարմարութիւն գտնել այն բանի մէջ, որ
Ղարաբաղի հայութիւնը հեռանար իր պատ-
մական հայրենիքից և ընակութիւն հաստա-
տէր կամ Դերբենտի մօտ կամ հիւսիսային
Կովկասում։ Մենք կանգ ենք առնում այս
փաստի վրա, որպէս զի ցոյց տանք Արզու-
մեանի սխալներն էլ, թէև ազգային սխալ-
ներ լատուկ էին և նրա պէս միւս գործոզ-
ներին։ Պետրոս Մեծի ժամանակն էլ հայերին
առաջարկում էին զաղթել Կասպից ծովի
ափերը. այն ժամանակվայ նշանաւոր գոր-
ծիչներից մէկը, Գանձասարի Եսայի կաթո-
ղիկոսը, համարեա համաձայն էր այդ առա-
ջարկութեան և միայն ապահովութեան մի-
ջոցներ էր խնդրում, որ ժողովուրդը զաղթէ.
բայց մելիքները չը կամեցան թողնել իրանց
հայրենիքը և այդ պատճառով էլ չը կայացաւ
զաղթականութիւնը։ Մի ուրիշ նշանաւոր
գործիչ էլ Յովսէփ արքեպիսկոպոսից լեռայ,
այն է Ներսէս Աշտարակեցին, նոյնպէս մեծ

զաղթականութիւններ հանել տուեց Թիւրքիայից և Պարսկաստանից։ Հայրենի հողի նշանակութիւնը շատ վաղուց էր, որ թուլացել էր հայերի աչքում, կորցրել էր իր կարևորութիւնը։

Թէ ինչ պատասխանեց իշխան Պոտեմկինը Արզումեանի այդ թղթին—մենք չը գիտենք։ Յայտնի է միայն, որ նա այդ զեկուցագիրը ներկայացրեց Եկատերինա կայսրուհուն։ Բայց, ինչպէս երևում է, հայերի անկախութեան հարցը ջուրը չէր ընկել։ Նա կար, նա լեռայ էլ պիտի լոյս ընկնէր։ Արզումեանի թղթերում մնացել է մի ծրագիր, որ մի տեսակ դաշնագրութիւն է հայերի և ռուսների մէջ և սահմանում է հայկական անկախութեան պայմանները։ Այդ ծրագրի կազմողը Յովսէփ արքեպիսկոպոսն էր. յայտնի է նրա հայրենիքը միայն, որ տպագրված է մեզանում մի քանի անգամ *). ուստից բազմաթիւ աղբիւրների մէջ լիշատակութիւն անգամ չը կայ նրա մասին։ Բերում ենք այդ հետաքրքրական զոկումենտի համառօտ բովանդակու-

*) «Փորձ» հանդէս, երկրորդ տարի, № 1. «Գիւան հայոց պատմութեան», գիրք Դ., 1899, եր. 731 և այլն։

թիւնը, ցոյց տալու համար թէ հայերի և ռուսների մէջ գլխաւորապէս ինչ սկզբունքներ էին նկատի առնվում քաղաքական բանակցութիւնների ժամանակ։

Ծրագիրը կոչվում է «Կերպ դաշնադրութեան ի մէջ երկուց ազգաց ռուսաց և հայոց», կազմվել է նոյն 1790 թուականին և բաղկացած է 19 յօդուածներից։ Ամենից առաջ սահմանվում էր, որ երկու ազգերի մէջ չը լինի կրօնական խտրութիւն։ Հայերը հպատակվում են ռուսներին այնպէս, ինչպէս մի ժամանակ հպատակվում էին յոյներին և պարսիկներին, այսինքն տալով ռուսներին հարկ և պատերազմի ժամանակ օգնութիւն հասցնելով նրանց զօրքով։ Հայոց թագաւորի ընտրութիւնը միանգամայն կախված էր ռուսաց կայսրուհու կամքից. այդ թագաւորը կարող է լինել թէ հայ և թէ ռուս։ Բայց թագաւորը հայազգաւոր պիտի լինի և պիտի օծվի Էջմիածնում։ Մայրաքաղաք նշանակվում էր Վաղարշապատը կամ մի այլ քաղաք Արարատեան երկրում։ Հայաստանում մնում է ռուսաց մի չափաւոր զօրաբաժին՝ ռուս գեներալի հրամանատարութեան տակ, իսկ հայոց թագաւորի ժառանգներից մէկը պիտի ապրի ռուսաց արքունիքում։ Սահմանվում է

չքանչան—Նոյի տապանը, իսկ ժապաւէնները երեք գոյնի—կարմիր, կանաչ և կապոյտ (դրանք ջրհեղեղից յետոյ եղած ծիածանի գոյներն են). կարելի էր չքանչան հաստատել և յանուն Գրիգոր Լուսաւորչի։ Իսկ թագաւորական կնիքը հեռեալն էր. Արշակունեաց միաղլխանի արծիւը, որ գոյութիւն ունէր նախ քան քրիստոնէութիւնը, քրիստոնէութեան ժամանակ ընդունած դաւը և Ռուբինեանների երկու առիւծները։ Սահմանվում էր, որ Հայաստանի մէջ չը լինի ճորտութիւն, որովհետև հայերը երբէք չեն ունեցել ճորտութիւն։ Երկու երկիրների մէջ կապվում է առևտրական դաշինք և սահմանվում են մաքսային օրէնքներ։ Կաթողիկոսի ընտրութիւնը կատարվում է հայոց թագաւորի առաջարկութեամբ։ 19-րդ յօդուածը բերում ենք ամբողջովին, որովհետև նա ցոյց է տալիս, թէ Պատեմկինը ինչ դիտաւորութիւն ունէր այս ծրագիրը իրագործելու մէջ. «Որովհետև պայծառափայլ կնեազ Գրիգոր Ալէքսանդրովիչ Պոտեմկինն է յատուկ խնամակալ ազգի մերում, որ ըստ հաճութեան ամենազորմած կայսրուհուն է կառավարիչ գործոյս այսմիկ և ազգի մերում յատուկ խնամակալ և բարերար, զոր ինչ նա անօրինեսցէ...

զի չնորհ ողորմութեան մարդասէր կայսրուհ-
ան նորին միջնորդութեամբ լառաջանայ
ի մեզ, որպէս ասուածութեան ի հրեշտակայ
առ մարդիկ»։ Կասկած չը կայ, որ Պօտեօմ-
կինը իր համար էր պատրաստում հայոց դահը։

Այսքանը հայերի կողմից։ Կայ և ռուս-
ների կողմից գրված թղթի թարգմանու-
թիւնը *)։ Այդտեղ գրուածներին նայելով,
Ռուսաստանը ճանաչում էր հայոց երկիրը
իրրև առանձին թագաւորութիւն, որ գեսպան պիտի ունենայ Պետերբուրգում։ Քսան
տարի ժամանակով ռուսաց մի զօրաբաժին,
բաղկացած 2000 ձիաւոր, 2000 հետևակ և
2000 թնդանօթաձիգ զինուորներից, մնում է
Հայաստանում և ամբողջ այդ ժամանակ բո-
լոր բերդերը գանվում են այդ զօրաբաժնի
հրամանատարի իշխանութեան տակ։ Հայերը
տալիս են այդ զօրքերը պահելու համար տա-
րին 60,000 թուման, կէսը ոսկով և արծա-
թով, իսկ կէսը հացով, մսով ու գինով։ Քսան
տարվայ ընթացքում ռուսաց զօրքերը մաս-
մաս դուրս են բերվում Հայաստանից, 2000-ը՝
10 տարուց յետոյ, 2000-ը՝ 15 տարուց և
2000-ը՝ 20 տարուց յետոյ. դրա համեմատ էլ

*) «Դիւան հայոց պատմ.», եր. 734։

պակասեցնվում է հայերի տալիք տուրքը։
Իրրև հնազանդութեան նշան, Հայաստանը
տարին մի անգամ տալիս է ռուսաց կայս-
րին քսան մսխալ զուտ ոսկի, երեք ձի
և վեց խոյ։ Հայաստանը ճանաչում է ռուսաց
կայսրութիւնը իրան գերութիւնից ազատող
և պարտաւոր է բարեկամ լինել կայսրի բա-
րեկամների հետ և թշնամի՝ նրա թշնամի-
ների հետ. կայսրն էլ փոխադարձաբար այդ-
պէս է վերաբերվում հայերի բարեկամներին
և թշնամիներին։ Հայաստանը կայսրի պա-
հանջով հարկաւոր ժամանակ պէտք է 6000
օղնական զօրք տայ։ Առնմանվում է դատ-
ութիւնների փոխադարձ յարգանք ռուսների
և հայերի կողմից։ Առևտրական ազատ յարա-
բերութիւններ են պահպանվում երկու դաշ-
նակից երկիրների մէջ. հայերը Ռուսաստա-
նում և ռուսները Հայաստանում ազատ ելու-
մուտք ունեն, առևտուր են անում, ենթարկ-
վելով երկրի մաքսային օրէնքներին։ Հայաս-
տանը կառավարում է իր սեփական օրէնք-
ներով։ Քրէական յանցաւորները, որոնք մի
երկրից միւսն են փախչում, պիտի դատվեն
այն երկրի օրէնքներով, ուր գտնվում են։
6000 ռուս զինուորների պահպանութեան
համար հայերից ստացվելիք տուրքը ապահով-

վում էր Հայաստանի եկամուտների $^2/_5$ մասով, որ գրաւ դրված էր համարվում։ Եթէ Հայաստանի ու Ռուսաստանի մէջ անհամաձայնութիւններ ծագեն, վէճը ենթարկվում է Գերմանիայի կայսրի միջնորդ դատաստանին *)։

Այսպիսի բանակցութիւններ, այսպիսի ծրագիրներ էր սիրում Տաւրիկեան փաստաղիչխանը։ Բայց նրան վիճակված չէր տեսնել մի, որ և է դահ, թէկուզ հայկականը, պատրաստված իր համար։ 1791 թուականը, ինչպէս գիտենք, վերջին տարին էր նրա կեանքի մէջ։ Յովսէփ Արղութեանը իրաւունք ունէր ողբալ այդ մահը, որ եկաւ կարելու այդպիսի զեղեցիկ բանակցութիւնների թելը։

---

*) Թէ երբ և ինչ հանգամանքների մէջ են գրվել այս երկու թղթերը,—շատ դժուար է որոշել։ Ն. Երիցեան («Փորձ» յիշած համարում) ասում է, թէ առաջին թուղթը գրված է 1790 թուականին, մինչդեռ Գիւտ քահանայի «Դիւանին» նայելով, նա գրված պիտի լինի 1789-ին։ Աւելի մութ են երկրորդ թղթի հանգամանքները. նա, իբրև թէ, փոխանակված պիտի լինի առաջին թղթի հետ, մինչդեռ ասված է, թէ նա գրված է 1779-ին և ռուսերէնից թարգմանված 1786-ին։ Այսպիսով ահա խառնակութիւն է տեսնվում և մենք չենք կարող ասել, թէ ինչ բանակցութիւնների հետևանք են այդ թղթերը։

Մեռաւ Պոտեմկինը։ Եկատերինայի արքունիքում նրա տեղ զլուխ բարձրացրեց մի նոր բախտաւոր ֆաւորիտ, դա կոմս Պլատոն Զուբովն էր։ Զուրկ լինելով Պոտեմկինի տաղանդից և ընդունակութիւններից, Զուբովը, իր այդ նախորդի փառքը հասնեցնելու համար, կազմեց աւելի վիթխարի, աւելի անիրագործելի մի ծրագիր։ Ռուսաց զօրքը, այդ ծրագրով, յաղթական արշաւանք է գործում մինչև Հնդկաստան և, թողնելով իր գրաւած տեղերում բերդապահ բաժիններ, վերադառնում է, անցնում Ասիական Թիւրքիա, առաջ է խաղում դէպի Բոսֆոր. միաժամանակ Բալկանեան թերակղզու կողմից Սուվորովը մտանում է Կ. Պոլսին, իսկ Եկատերինան ծովի կողմից է պաշարում Թիւրքաց մայրաքաղաքը նաւերով։ Հնդկական արշաւանքի գլխաւոր հրամանատար պիտի նշանակվէր Զուբովի եղբայր Վալերիան Զուբովը։

Մինչդեռ թղթի վրա այսպիսի գործեր էին կատարվում, Անդրկովկասում շարունակվում էր ծանր, օրհասական մաքառումը երկու հայ մէլիքների և Իբրահիմ-խանի մէջ։ 1791 թուականին մեռաւ Վարանդայի Մէլիք-Շահնազարը, Ղարաբաղի դժբախտութիւնների իսկական պատճառը։ Աշխարհային բարիք-

ների համար նա իր հայրենիքը քարուքանդ արեց, թուրք խանութիւն մացնելով նրա մէջ։ Բայց նրա որդի Զուլֆուղը, հասկանալով զաւաճան հօր վատութիւնները, ուրիշ ճանապարհ բռնեց և նոյնպէս հալածական պիտի դառնար, նոյնպէս պիտի փախչէր օտար երկիրներ՝ իր պապերի ժառանգութեան դասը վարելու համար։

Մէլիք-Մէժլումն ու Մէլիք-Աբովը, չը պանելով ոչ մի տեղ օգնութիւն, ապաստանվել էին Գանձակի Զաւադ-խանի մօտ։ Իբրահիմ-խանը անդադար պահանջում էր, որ նա իրան յանձնէ երկու մէլիքներին, բայց Զաւադ-խանը չը զաւաճանեց իր երկու բարեկամներին։ Ընդհարումներ էլ եղան այդ պատճառով երկու խանների մէջ. 1793 կամ 1794 թուականին Օմար-խանը գնաց Գանձակի վրա՝ մէլիքներին ձեռք գցելու և Իբրահիմին ուղարկելու համար, բայց Մէժլումն ու Աբովը Կուր գետի մօտ յարձակվեցան նրա վրա և սաստիկ ջարդ տալով՝ լեռ փախցրին։

Ղարաբաղի հայկական անկախութեան հոգեվարքը, սակայն, ոչինչ բարեփոխութիւն չը կրեց այդ յաղթութիւնից։ Անկումը չարունակվում էր անընդհատ։ Մի բուռն քաջ քրիստոնեայ ժողովրդին չէր աջողվում յաղ-

թահարել մահմեդականներին և նա խոնարհեցնում էր գլուխը աւելի և աւելի ցած։

Ղարաբաղից լեռոյ հերթը գալիս էր Վրաստանին։ 1795 թուականի ամառը Անդրկովկասի հարաւային մասերում նկատելի էր մի սարսափահար իրարանցում։ Փախչում էին բնակիչները. ամեն տեղ գիտէին որ Իրանի նոր Շահին-շահը, Ներքինի Աղա-Մամէդ-խանը գալիս է պատժելու անհնազանդ խաներին։

Բայց նրա գլխաւոր նպատակը Վրաստանն էր։ Շատ էր աչքատել դաժան Շահը, որ Հերակլը իր լոժար կամքով ջնջել Գէօրգեվսկի դաշնագրութիւնը, նորից հպատակվի պարսից գահին։ Ահա՛ նա, ահագին բանակի գլուխ անցած, գնում էր սրով և հրով հարկադրելու Հերակլին։ Վրաց դժբախտ թագաւորը, զգալով թէ ինչ պիտի լինի այդ արշաւանքը իր երկրի համար, անդադար, ամենաեռանդուն կերպով օգնութիւն էր հայցում ռուսներից։ Անդրկովկասում մի հատ ռուս զինուոր չը կար, և սակայն Գէօրգեվսկի դաշնագրութեան համաձայն՝ ռուսները պիտի օգնութեան հասնէին ամեն անդամ, երբ վտանգ էր սպառնում Վրաստանին։ Հիւսիսային Կովկասի հրամանատար Գուդովիչը անտես էր անում Հերակլի աղաչանքները։ Իզուր Ար-

ղութեանն էլ մասնացոյց էր անում նրան վերահաս վտանգը և թախանձում էր կատարել թագաւորի խնդիրքը. Գուզովիչի «պինդ գլուխը—գրում էր Արզութեանը—չընկնեց»։

Եւ Աղա-Մամէդ-խանը անարգել մօտեցաւ Թիֆլիսին, քարուքանդ արեց նրան ու 10 հազար ժողովուրդ գերի տարաւ։ Թոյլ, մահամերձ Վրաստանի համար դա օրհասական հարուած էր. երկիրը աւերակների կոյտ դարձաւ։

Յովսէփ արքեպիսկոպոսը Գրիգորիոպոլսոյն էր, երբ տասնչաւ Թիֆլիսի աւերման լուրը։ Եւ ահա ինչ էր գրում նա Հերակլին.

«Ձեր թագաւորութեան հանդիպած յաւալի պատահարը—իմ հայրենիքի աւերումը, կործանումը և գերեվարութիւնը խմացայ ես։ Այժմ, երբէք սպանուած, նասած եմ ես Երեմիա մարգարէի նման, գլուխս մոխրի մէջ և աչքերս արտասուքների մէջ. ողբում եմ ես իմ հայրենիքի վիշտը, իսկ իմ արտասուքները ու արտմութիւնը միացնում եմ գերի գնացածների և սպանուածների, կեղեքվողների և պատժվողների աղիողորմ արտասուքների հետ։ Թող զարթնեն մեր նախնիքները և թող այժմ արտասուաս ողբ յօրինեն Բագրատունիների թագաւորութեան անկման վրա, որոնց սերունդի վրա լուրեր կային դրած թէ մեծ ճիգեր կարձակէ,—բայց այժմ աւելի վատ եղաւ, քան առաջ։ Այժմ թող ձեզ հետ լաց լինեն և աշխարհի երեսին ցրուած հայերը, որովհետև նրանք լոյս ունեին միայն ձեր երկրի և թագաւորութեան վրա»։

Ապա նա մխիթարում էր թագաւորին, սիրտ էր տալիս որ չը յուսահատվի և յայտնում էր թէ ինքը գրել է Պլատոն Զուբովին ինչ որ հարկաւոր է։ Մի և նոյն ժամանակ նա ուղարկում էր Հերակլի մօտ իր եղբօրորդի Բարսեղին, որ գուցէ հարկաւոր կը լինէր Պետերբուրգ ուղարկելու համար։

Կոմս Պլատոն Զուբովի հետ էլ Արզութեանը, Յովհաննէս Լազարեանի չնորհիւ, նոյն մտերիմ ծանօթութիւնն ունէր, ինչպէս Պոտեմկինի հետ։ Եւ Զուբովի ուշադրութիւնն էլ նա չարունակ հրաւիրում էր Անդրկովկասի վրա. Զուբովին էլ նա ներկայացրել էր իր կազմած նախագիծը Վրաստանի և Հայաստանի մասին։ Այժմ, երբ այնքան սոսկալի դժբախտութիւն էր եկել Վրաստանի վրա, նա սկսեց աւելի եռանդով գործել։ Պէտք էր պատժել Ներքինի Շահին, որպէս ժողովրդի արտասուքները։ Ռուսաստանի համար անպատուութիւն կը լինէր Աղա-Մամէդ-խանի

արշաւանքից լեռոյ էլ լուռ ու անտարբեր մնալը։ Այս անգամ ռուսական արշաւանքը դէպի Պարսկաստան անխուսափելի էր։ Եւ Արղութեանը ամեն կերպ աշխատում էր որ այդ արշաւանքը իր ցանկացած ուղղութիւնն ստանայ։

«Այժմ—գրում էր նա Պետերբուրգ, Ստեփան Դաւթեանին—թէև մտածում են այցելել Վրաստանը, բայց ահա գրում եմ քեզ և կը գրեմ կոմսին (Զուբովին), որ եթէ ռուսաց զօրքերը գնան միայն Թիֆլիսի վրա, ոչինչ օգնութիւն չեն անի, զուցէ միայն հեշտութեամբ տիրանան Թիֆլիսի աւերակներին, որովհետև թշնամին քարուքանդ է արել լոկ նրանց պատճառով։ Իսկ եթէ գնան Գերբենտի, Բաքուի և Գանձակի վրա, նախ հեշտութեամբ կը գրաւեն Շաքին ու Շիրվանը, ապա կը վերցնեն Գանձակը. իսկ այստեղից կարող են օգնել Երևանի հայերին և ուրիշներին, նոյնպէս և Պարսկաստան զերի տարածներին»։

Յովսէփը չատ էր ցանկանում, որ այդ արշաւանքը լանձնվի Սուվորովին։ Յիշեցնում էր նա որ հուշակաւոր զօրավարը 1780 թուականին էլ նշանակված էր այս գործի համար, չատ էր ուզում մինել Անդրկովկասում, բայց լեռոյ ամեն ինչ փոխվեց։ «Ինձանից ողջոյն

նրան և օրհնութիւն. և ասա. ով ս. Գէորգ, որ արագ թռչում ես տանջվողների օգնութեան, ով զերիների փրկիչ, չատպէր օգնութեան հասիր վրաց չարաբախտ թագաւորութեան և իմ հայրենիքին, որին դու սիրում ես»։

Արշաւանքը արդէն հաստատապէս պատրաստված էր, բայց նա Սուվորովին չը լանձնվեց, այլ Վալերիան Զուբովին։ Յովսէփը այլ ևս չէր կարող մնալ Գրիգորիոպոլում. պարսկական արշաւանքը ուղղվում էր Գերբենտի վրայով դէպի Գանձակ. նրա նպատակն էր «վերահաստատել Հերակլին իր թագաւորութեան մէջ, Ղարաբաղի հայ մելիքներին և նրանց ժողովուրդը միմիայն Ռուսաստանից կախում ունեցողների դրութեան մէջ դնել, գրաւել Արարատեան պատրիարքին, որ չատ զօրեղ ազդեցութիւն ունի ամեն կողմ ցրված հայ ժողովրդի վրա»։ Յովսէփը չատպում է դէպի արշաւող բանակը։ Լսելով, որ Հերակլը այնքան լուսահաված է, որ մտադիր է նորից հպատակվել Պարսկաստանին, Արղութեանը նամակներ է գրում նրան և յորդորում է թողնել այդպիսի մտքերը։ Ապա ճանապարհ է ընկնում Գրիգորիոպոլից, բայց հիւանդանում է և մնում է Նոր-Նախիջևանում։

Եկատերինա կայսրուհին, լաւ լինելով Արղութեանի մատուցած ծառայութիւնները նախընթաց պատերազմների մէջ, ցանկութիւն յայտնեց, որ պարսկական արշաւանքի մէջ էլ նա մասնակցութիւն ունենայ։ Կոմս Պլատոն Զուբով մի նամակով խնդրեց արքեպիսկոպոսին գնալ Ղզլար, տեսնվել իր եղբայր Վալերիանի հետ և աջակցել նրան իր խորհուրդներով։ Անխոնջ Արղութեանը, չը նայած որ դեռ տկար էր, կատարեց այդ առաջարկութիւնը։ Ղզլարում Վալերիան Զուբովը ընդունեց նրան մեծ պատիւներով, խորհրդակցում էր նրա հետ։ Եւ իրաւ, այդ ժամանակ հաղիւ թէ գտնվէր մի ուրիշը, որ նրա պէս լաւ տեղեակ լինէր այն ամենին, ինչ տեղի էր ունենում Պարսկաստանում, Անդրկովկասում և Թիւրքիայում։ Ամեն կողմերից տեղեկութիւններ էր ստանում նա։ Հերակլը այնքան էր հաւատում նրան, որ նրա միջոցով էր յարաբերութիւններ պահպանում ռուսաց արքունիքի հետ։ Վրաց թագաւորական տան անդամները նրան էին դիմում, խնդրելով ստանալ իրանց համար չքաւորներ։ Եւ եթէ աւելացնենք այս բոլորի վրա այն մեծ ժողովրդականութիւնը, որ նա ունէր քրիստոնեայ և ոչ քրիստոնեայ ազգա-

բնակութեան մէջ, հասկանալի կը լինի թէ որքան շատ բան կարող էր նա անել պարսկական արշաւանքի ժամանակ։

Նկարագրելով իր տեսակցութիւնը Վալերիան Զուբովի հետ Յովհաննէս Լազարեանին գրած իր մի նամակում, Արղութեանն ասում էր.

«Ինչպէս Վալերիան Ալէքսանդրովիչի եղբայրը, այնպէս էլ նա ինքը սաստիկ ցանկանում են, որ մենք ուղեկցենք նրան արշաւանքի ժամանակ՝ մեր ազգի օգտի և լուսաւորութեան համար։ Մենք չը կարողացանք մերժել և խնայել մեր ուժասպառ մարմինը և ինչպէս կարծում ենք, գուցէ գործը վերջանալու վրա, Աստուծու օգնութեամբ, կը լինի օգնութիւն կամ ապահովութիւն մեր ազգին... Մարմնով մաշված լինելով, ես նիւթապէս էլ քանդվում եմ, որովհետև 5000 բուրլին բաւական չի լինի ինձ այս ճանապարհորդութեան համար։ Բայց ինչ անեմ, երբ կոմսը (Զուբով) հրամայել է և այնքան խնդրել, որ ես չը կարողացայ հրաժարվել։ Աստուծով յոյս ունիմ, որ այս բանը կը վերջանայ յօգուտ մեր ազգի, իսկ թէ ես կը մեռնեմ կամ կենդանի կը մնամ—միևնոյն է, ես մի հատ մարդ եմ»։

Թոլստութիւն խնդրելով կարգադրել

իր թեմի մի քանի գործերը և պատրաստութիւններ տեսնել, Արղութեանը գնաց Աստրախան։ Յուլիսի կէսին (1796) նա, իր խոստման համաձայն, ռուսաց բանակն է հասնում և սկսում է գործել։

Ռուսական արշաւանքը առաջ է գնում լաղթական քայլերով. Դերբենտը, Բագուն, Ղուբան անցնում են ռուսների ձեռքը։ Յովսէփ արքեպիսկոպոսի ջանքերով Շամախու, Նուխու և Ղարաբաղի խանները հնազանդութիւն են յայտնում ռուսաց կառավարութեան։ Զուբովի առաջ համարեա ոչինչ արգելքներ չը կային։ Նա իր բանակից մի առանձին զօրաբաժին հանեց և ուղարկեց Գանձակի վրայով դէպի Վրաստան։ Այդ զօրաբաժնի հետ էր և Արղութեանը։

Գանձակի Ջաւադ-խանը, չը նայած որ պարսից Շահին նուիրված մարդ էր և Թիֆլիսը ամերելիս մեծ դեր էր կատարել, ոչինչ ընդդիմութիւն ցոյց չը տուեց և, բաց անելով իր բերդի դռները ռուսների առաջ, հնազանդութիւն յայտնեց նրանց։ Խանի հետ բանակցութիւններ վարողը Յովսէփ արքեպիսկոպոսն էր։ Պէտք է ասել որ ռուսներին նեղողները թշնամիները չէին, որոնք չէին էլ երևում, այլ տեղական հանգամանքները։

Տարվայ վատ ժամանակն էր, ճանապարհները սաստիկ փչացած էին և զօրքերին պաշար հասցնել այնքան դժուար էր, որ ռուս զօրաբաժինը անելանելի դրութեան մէջ կընկնէր, եթէ նրա հետ չը լինէր Արղութեանը։ Սա չրջաբերական թղթեր էր ուղարկում հայերին, համոզում էր նրանց օգնել ռուսներին, իսկ ամենադժուար հանգամանքներում անձամբ չրջում էր հայ գիւղերը և զօրքի համար սայլեր ու պաշար էր պատրաստում։

Այդ մեծամեծ ծառայութիւնները երախտագիտութեամբ ու շնորհակալութիւններով են արձանագրվում այն թղթերի մէջ, որ գրում էին զօրքի հրամանատարները։ Գլխաւոր հրամանատար Զուբովը, անկեղծ շնորհակալութիւն յայտնելով Արղութեանին, որ նա Ջաւադ-խանին «հանդստացրել էր», խնդրում էր նրան չարունակել «եռանդուն ջանքերը յօգուտ ընդհանուր գործերի»։ Իսկ դէպի Գանձակ արշաւող զօրաբաժնի հրամանատար Ռիմսկի-Կորսակով գրում էր Յովսէփին. «Ես չեմ կարող բաւական չափով շնորհակալութիւն յայտնել ձեր որբաղութեան՝ ձեր այնքան մեծ նեղութիւնների համար, որ յանձն էք առել իմ հրամանատարութեան տակ գտն-

վող զօրքին օգնելու նպատակով. և ես չատ վշտանում եմ, որ դուք այս ցեխոտ և վատ ճանապարհներին ձեզ յոգնեցնում էք»։

Բայց Յովսէփ արքեպիսկոպոսի ներկայութիւնը ռուսաց բանակում աւելի կարևոր նպատակ ունէր։ Գլխաւոր հրամանատար Զուբովը, երկրի մէջ նոր բարդութիւններ չը յարուցանելու և կրքեր չը գրգռելու համար, հետևում էր այսպիսի քաղաքականութեան. մահմեդական տիրողների հետ վարվում էր քաղցրութեամբ, ամենևին ցոյց չը տալով թէ ռուսները եկել են քրիստոնեաներին ազատելու. ամեն տեղ յայտարարված էր թէ ռուսները գէնք են բարձրացրել լոկ Աղա-Մամէդ-խանին պատժելու համար։ Բայց այս դէպքում քրիստոնեայ ազգութիւնը պիտի ստէր ռուսներից, տեսնելով որ նրանք անփոփոխ են թողնում իրերի դրութիւնը մահմեդական տիրապետութեան մէջ։ Ահա այստեղ էր հարկաւոր Արդութեանի աջակցութիւնը։ Նա պիտի հասկացնէր քրիստոնեաներին, որ ռուսների վարմունքը մի քաղաքական անհրաժեշտութիւն է, որ արշաւանքի բուն նպատակը—քրիստոնեաների ազատութիւնն է և նա չէ մոռացված։ Յովսէփը, իհարկէ, այդպէս էլ հասկացնում էր և այդ պատճառով

էլ գործերը չատ լաւ էին գնում. մահմեդականները հաստատում էին թէ ոչինչ փոփոխութիւն չի լինի, իսկ քրիստոնեաները համբերութեամբ սպասում էին։ Ռուսաց բանակում գտնվում էր Մէլիք-Ֆրէդրունը. նա ուղարկված էր մինս տարագիր մէլիքների կողմից նախ ռուսներին ծանուցելու և երկրորդ, յարմար դէպքում, զօրքի հովանաւորութեան տակ, Ղարաբաղում մնացած հայերին դաղթեցնելու համար։

Բայց 1796-ի պարսկական արշաւանքը մի անակնկալ վախճան ունեցաւ։ Կոմս Վալերիան Զուբովը արդէն ռուսներին բոլոր գրաւած տեղերի տէր էր համարում։ Կուրի և Արաքսի խառնվելու տեղում, Զաւադի մօտ, նա ուզում էր հիմնել մի ռուսական դաղթականութիւն. այդտեղ պիտի բնակվէին 2000 երիտասարդ զինուորներ՝ արշաւանքին մասնակցող զօրքերից։ Կառավարութիւնը պիտի տար այդ զինուորականներին բոլոր անհրաժեշտ պիտոյքները՝ բնակչութիւն հաստատելու համար, իսկ հայերը և վրացիները պիտի կանգնէք տային նրանց։ Եկատերինան հաւանութիւն տուեց այդ ծրագրին և հրամայեց եկող 1797 թուականի ընթացքում պետական գանձարանից բաց թողնել այդ գործի համար

385,326 ռուբլի 50 կոպեկ։ Սակայն 1796-ի նոյեմբերի 6-ին վախճանվեց Եկատերինան և նրա հետ դերեզման գնացին նրա բոլոր ծրագիրները։

Գահ բարձրացաւ նրա որդի Պաւել I։ Նոր թագաւորութիւն, նոր հայեացքներ և քաղաքականութիւն։ Դեկտեմբերի 7-ին կայսերական սուրհանդակը, հասնելով Անդրկովկաս, յանձնեց այդտեղ գտնվող իւրաքանչիւր գնդին, առանձին առանձին, կայսրի կարուկ հրամանը—թողնել ամեն ինչ և վերադառնալ սահմանապլտեսը։ Գլխաւոր հրամանատարը անուշադրութեան էր մատնված. կոմս Զուբով արտասվելով հեռացաւ բանակից և Բագուի վրայով ուղևորվեց Ռուսաստան, ուր ընակվեց իր կալուածքում և երկար ժամանակ զանվում էր ստիպողական հսկողութեան տակ։ Ռուսաց գնդերը սկսեցին մեծ դժուարութիւններով նահանջել դէպի Ռուսաստան։ Եւ այդ արշաւանքը հայերի համար միայն այն հետևանքն ունեցաւ, որ Դերբենտի կողմերից 500 հայ ընտանիքներ զօրքի հետ անցան ռուսաց հողը։ Այդ գաղթականութեան համար նշանակվեց տեղ, որ ստացաւ Ս. Խաչ քաղաք անունը։ Պաւել կայսրը

արտօնութիւններ չնորհեց այդ գաղթականներին։

Յովսէփ արքեպիսկոպոսը գնաց Թիֆլիս, որ դեռ ռուսերենի կոյտ էր ներկայացնում։ Բիչ մնաց նա իր հայրենիքում և այդտեղ աշխատում էր սփոփել դժբախտ բնակիչներին, վերանորոգել կողոպտված եկեղեցիները։ Պարսիկների գերի տարած քրիստոնեաներին ազատելու համար նա ընդհանուր ստորագրութիւն էր բաց արել Ռուսաստանում, դիմումներ էր անում ամեն կողմ. բայց յայտնի չէ թէ կարողացաւ նա փող հաւաքել և լեռ գնել պարսկական գերիներին։

Թիֆլիսից Արղութեանը ուղևորվեց Պետերբուրգ։ Մրցիսի փոփոխութիւնների ակնատես պիտի լինէր նա այնտեղ։ Անցել էր Եկատերինայի դարը։ Պաւել կայսրը հեռացրեց իր հաչակաւոր մօր աշխատակիցներին, ջնջում էր այն բոլոր բաները, որոնք սկսվել էին նրա ժամանակ։ Պաւլի թագաւորութիւնը անուանում են «խաւարում»։ Դա մի դիւրագրգիռ, հիւանդոտ վիճակում էր. դեռ թագաժառանգ ժամանակը նրա և մօր մէջ սիրում էր ստոնութիւն, որ վերջը նոյն իսկ թշնամութեան փոխվեց։ Այժմ, գահ բարձրանալով, նա ստոտիկ ատելութեամբ էր վերա-

ներվում Եկատերինայի դարձերին։ Նույն իսկ մեծանուն Սուվորովը, որ Ռուսաստանի պարծանքն էր համարվում, պաշտոնական եղաւ ամենավիրաւորական եղանակով։ Նրան հեռացրին զորքից նույն իսկ առանց խնդրագրի։

Այդ էր պատճառը, որ այնպիսի փութիկոտութեամբ և անակնկալ կերպով չետ կանչվեցան զորքերը Անդրկովկասից։ Պաւել կայսրը այսպիսի քաղաքականութիւն ընդունեց Անդրկովկասի վերաբերմամբ. բարեկամական յարաբերութիւններ պահպանել այն բոլոր ցեղերի և իշխողների հետ, որոնք Ռուսաստանի հովանաւորութեան տակ մնալ են ուզում. ռուսաց զորքերը այլ ևս չը պիտի դնային նրանց օգնելու կամ պահպանելու համար։ Այդ իշխողները իրանք պիտի պաշտպանվեն թշնամիներից և պիտի մի դաշնակցական պետութիւն կազմեն Ռուսաստանի հովանաւորութեան տակ։ Պաւելը ոչինչ չէր պահանջում այդ դաշնակցութիւնից—ոչ հարկ, ոչ տուրք. բաւական էր եթէ նա ճանաչէր ռուսական գերիշխանութիւնը։

Իրերի այս դրութեան մէջ Յովսէփ արքեպիսկոպոսը պիտի թողնէր, իհարկէ, նախկին ծրագիրներն ու մտքերը։ Սակայն Եկատերինայի ժամանակակիցներից նա այնքան

բախտաւոր եղաւ, որ արժանացաւ Պաւելի բարեհաճութեան և վայելում էր նրա շնորհները համարեա նույն չափով, ինչ չափով վայելում էր Եկատերինայից։ Յովհաննէս Լազարեանին էլ կայսրը բարեհաճութեամբ էր վերաբերվում։ Եւ պէտք է ասել որ մեծատուն հայ ազնուականը պիտէր իր թագաւորի կամքը յարգել և ցույց տալ նրան հաւատարիմ հպատակութեան օրինակ։ Այսպէս, մի անգամ Յովհաննէսը, ակարութեան պատճառով, գնում էր Կովկասի հանքային ջրերը։ Նա արդէն հասել էր Աստրախանին, երբ կայսրի սուրհանդակը հասաւ նրան և հրաւիրեց վերադառնալ Պետերբուրգ։ Լազարեանը իսկոյն կատարեց այդ հրամանը։ Պաւելը ուզում էր գնել նրանից Ռօզչա կալուածը և առաջարկեց նրան գին նշանակել։ Յովհաննէսը պատասխանեց թէ ամեն ինչ, որ ունի հպատակը, պատկանում է նրա թագաւորին և հրաժարվեց որ և է գին նշանակելուց։ Ինքը Պաւելը գնահատեց Ռօզչան 500 հազար բուբլի։ Լազարեանը ոչինչ չունէր դրա դէմ. և այդ գումարից 100 հազար բուբլի տուեց բարեգործական նպատակով, ինքը վերցրեց մնացածը։ Ռօզչան առնուազն արժէր մի միլիոն բուբլի։

Յովսէփ արքեպիսկոպոսի գործունէութիւնը նոր թագաւորութեան, նոր կարգերի ժամանակ էլ դարձեալ եռանդուն էր և արդիւնաւոր։ Նա չը մոռացաւ իր թեմի հայ համայնքների պակասութիւնները, չը մոռացաւ մանաւանդ Ղարաբաղի մելիքներին։

Զուբովի բանակի Ռուսաստան վերադառնալուց յետոյ լուր տարածվեց որ Աղա-Մամէդ-խանը նորից գալիս է։ Դա ճիշտ էր։ Յաւատաստութիւնը նորից տիրեց ամենքին. այս անգամ ներքինի Շահի վրէժը աւելի ևս անգութ պիտի լինէր։ 1797-ի ամառը Աղա-Մամէդ-խանը երևաց Կովկասի սահմաններում և դիմեց Շուշու վրա։ Բայց այդտեղ նա ապանվեց։ Ժողովուրդը ազատվեց այդ դաժան բռնակալից. բայց բնական աղէտները ևկան փոխարէնը աւելի մեծ աւերումներ պատճառելու։ Այդ ամառը սաստիկ երաշտութիւն էր, որ բերեց սարսափելի սով։ Սովին, հետևեալ 1798-ին, յաջորդեց աւելի ահաւոր դժբախտութիւնը—ժանտախտը։ Ղարաբաղը սկսեց արագ ամայանալ. սովի և ժանտախտի կատրածներից ազատ մնացած ժողովուրդը չատրեց հեռանալ, փախչել օտար երկիրներ։ Ահագին դաղթականութիւններ դուրս ևկան և գնացին զանազան կողմեր։ Բնութիւնը

ինքն էր վճռում հայերի դատը։ Իբրահիմ-խանը իր տեղը մնաց, բայց երկրի աւերումը մոռացու հարուած հասցրեց և նրա իշխանութեան։

Ղարաբաղի փախստական մելիքներից մեկը, ամենաքաջը, մնաց էր.—դա Մելիք-Մէժլումն էր։ Մնացածները հաւաքվել էին Վրաստանում և վերջին ճիգն էին թափում իրանց ժողովուրդը մի տեղ հաւաքելու համար։ Միակ լոյսը դարձեալ Ռուսաստանն էր։ Պաւել կայսրը, ընդունելով Յովսէփ արքեպիսկոպոսի միջոցով այն չնորհաւորական ուղերձը, որ գրել էին Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը և տեղական մելիքներն ու իշխանները՝ նրա գահակալութեան առիթով, 1798 թուականի փետրվարի 26-ին հրատարակեց մի հրովարտակ, որով իր բարեհաճութիւնն էր լայտնում ամբողջ հայ ազգին և խոստանում էր ուշադրութիւն դարձնել նրա դրութեան վրա։

Երևի այդ արքայական բարեհաճութիւնից սիրտ առած, մելիքներից երկուսը—Վարանդայի Մելիք-Զամչուղը և Գիւլիստանի Մելիք-Ֆրէյդունը 1799-ին գնացին Պետերբուրգ, անձամբ կայսրին իրանց խոնարհ խնդիրքները ներկայացնելու։ Մելիքները գնա-

ցին Աստրախանի վրայով և անշուշտ Արղութեանն էր նրանց գլխաւոր խորհրդատուն և գլխավարողը։ Այդ հանդամանքը երևում է հենց մելիքների տուած խնդիրքներից *)։

Ցուսահատութիւն, վիշտ և զրկվածի աղերսանք ենք տեսնում այդ խնդրագրերի մէջ։ Մելիքները, յայտնելով որ իրանք վերջին չքաւորութեան են հասել, կորցնելով իրանց բոլոր գոյքերը, կայսերական աստուածեղութիւնից նպաստ են աղերսում՝ իրանց գործերը փոքր ինչ կարգի բերելու համար։ Իսկ ընդհանրապէս խնդրում են. 1) Կայսերական բարձր հովանաւորութեան տակ առնել Ղարաբաղը, որ պատկանում է մելիքներին իբրև ժառանգութիւն և ոչ թէ Իբրահիմ-խանին, որ մելիքների հողերը յափշտակողն է. տարածելով իր հովանաւորութիւնը Ղարաբաղի վրա, կայսրը դրանով կը ներշնչէ զանազան կողմեր փախած ժողովրդին ցանկութիւն՝ նորից վերադառնալու իր հայրենիքը։ 2) Եթէ որ և է պատճառով այդ բանը հաճելի չի լինի կայսին, այն ժամանակ խնդրում են տալ 12 հազար զօրք,

*) Акты Кавказ. Археогр. Ком., т. I, №№ 871, 872, 873.

որպէս զի նրա աջակցութեամբ և հովանաւորութեամբ կարելի լինի հաւաքել հայերին և դուրս հանել նրանց երկրից։ Մելիքները իրանց հպատակների թիւը հաշուում են 20 հազար ընտանիք և ասում են որ ամենքը համաձայն են դաղթելու, ինչպէս այդ դիտէ և Յովսէփ արքեպիսկոպոսը, որ Զուրբովի արշաւանքի ժամանակ բերանացի և գրաւոր բանակցութիւններ է ունեցել ժողովրդի հետ։ Այդ դաղթականութիւնը անցնում է Ռուսաստան. մելիքները խնդրում են տալ ընակութեան համար հողեր Եկատերինոդրադի մօտ *). այդպիսով, ասում էին մելիքները, կը կազմվի մի նոր Փոքր-Հայաստան Ռուսաստանում։ 3) Եթէ այդ էլ չընդունվի, մելիքները խընդրում էին որ գոնէ հրամայվի վրաց թագաւորին տալ իրանց այն նահանգը, որ հնում անուանվում էր Դուզարք **) և այժմ կոչ-

*) Անշուշտ Արղութեանն էր ցոյց տուել այդ տեղը մելիքներին, որոնք Ռուսաստանում չէին եղել և հետևարար չէին կարող այդպէս անուանադիր տեղ խնդրել։ Յովսէփը ուզում էր որ նոր դաղթականութիւնը դեռեղվի Ղրիմից դուրս գնացած դաղթականութեան մօտերքում։

**) Արղութեանի հայրենիքը։ Այստեղ էլ տեսնում ենք ձգտում կենտրոնացնելու դաղթականու-

վում է Ղազախ և տարածվում է մինչև Լոռի։ Բնակութիւն հաստատելով այդտեղ, մէլիքները խոստանում էին պաշտպանել Վրաստանի սահմանները պատի պէս։ Այդտեղ դաղթականները կը վերանորոգեն հին քանդված քարերը, կը սկսեն ապրել բարօրութեան մէջ։ Հեռուներում գտնվող հազարաւոր հայ ընտանիքները, տեսնելով այդ բարօրութիւնը, նոյնպէս կը դաղթեն այդ կողմերը. երկիրը կը զարգանայ, արհեստները ու առևտուրը կը ծաղկեն։ Առևտուր կը սկսվի նոյն իսկ Հընդկաստանի հետ։

Պաւել կայսրը ընդունեց միայն այս վերջին տաճարկութիւնը և հրամանագրեց վրաց Գիւրզի թագաւորին տեղ տալ հայ մէլիքներին և նրանց ժողովրդին այդ կողմերում։ Մէլիքները, իհարկէ, պիտի վայելէին այն իրաւունքները, որ ունեցել են Ղարաբաղում։ Մի և նոյն մտքով կայսրը հրովարտակ գրեց և մէլիքներին։ Նշանաւորը այդ հրովարտակի մէջ այն էր, որ Պաւել կայսրը մէլիքներին ճանաչում էր Ղարաբաղի ժառանգական տէրեր, մի բան, որ մոռացվեց

թիւնը մի տեղ, միապաղաղ բաղմութիւն կազմելու համար։

1820-ական թուականներին, երբ Ղարաբաղը վերջնականապէս միացրվեց Ռուսաստանին, բայց հայ մէլիքները սեփականատէր չը ճանաչվեցան։

Նոյն 1799 թվին Պաւել կայսրը մի շարք արտօնութիւններ շնորհեց Ռուսաստանի հայերին, արտօնութիւններ, որոնք նոյն իսկ գերազանցում էին Եկատերինայի տուածներից։ Աստրախանում բացվեց առաջին հայոց կօնսիստորիան, Յովսէփ արքեպիսկոպոսը իր լայնածաւալ թեմի զանազան կողմերում հզգեաց կառավարութիւններ հաստատեց։ Կայսրը չը մոռացաւ և Արզուրեանին անձնապէս։ Ինչպէս տեսանք, 1800 թվին նա Արզուրեան տոհմը ընդունեց ռուսաց իշխանական տոհմերի շարքում։ Բացի դրանից, նա նուիրեց նրան Օգնասալի մօտ չորս գիւղ, որոնք այժմ էլ Արզուրեանների սեփականութիւնն են կազմում։

Այսպէս տես տեսնում ենք, որ Յովսէփ արքեպիսկոպոսը Պաւլի թագաւորութեան ժամանակ էլ մնաց իր նախկին փառքի և բարձր դիրքի մէջ և կարողացաւ խոշոր ծառայութիւններ մատուցանել իր ազգին։ Մէլիքները տեղաւորվեցան Վրաստանում, վրաց արքունիքում պատուաւոր տեղ ունէին։

Նրանցից մէկը մանաւանդ, Մէլիք-Աբովը, իր գաղտագործութիւններով խիստ ազդեցիկ դեր էր կատարում Վրաստանի հարաւային սահմանների վրա։ Ռուսաստանի հայ գաղութները կարող էին շարունակել իրանց խաղաղ զարգացումը չնորհիւ այն արտօնութիւնների, որ տալիս էր ռուսաց կառավարութիւնը, հիմնվելով Արզրումեանի միջնորդութիւնների ու բարեխօսութեան վրա։

Այսքան բարերարված իշխան-արքեպիսկոպոսը շարունակեց այնուհետև էլ ամենայն անկեղծութեամբ և եռանդով ծառայել Ռուսաստանին։ Պոտեմկինի և Զուբովի ծրագիրները չը կալին այլ ևս։ Առաջ էր եկել մի նոր պատմական անհրաժեշտութիւն, մի ուրիշ կարևոր ու մեծ հարց, որի մէջ Արզրումեանը նոյնպէս շատ աչքի ընկնող դեր կատարեց։ Դա Վրաստանի հարցն էր։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՑՈՒՄԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻՆ

Հերակլը պարսկական նոր արշաւանքի առաջ։—Նրա դիմումները Ռուսաստանին։—Պաւել կայսրի վերաբերմունքը։ - Հերակլի մահը. Վրաստանի դրութիւնը նրա ժառանգ Գիւորգիի ժամանակ։—Պարսկական սպառնալիքներ։—Արզրումեանը Գիւորգիի կուսակից։ Նրա մի նամակը Գիւորգիին։—Թագաւորի մահը. խառնակութիւններ։—Արզրումեանը Թէֆլիսում։—Պաւլի հրովարտակը Վրաստանի միացման մասին։—1801 թուականի փետրվարի 7-ի օրը. փառահեղ հանդէս Վանքի եկեղեցում։—Արզրումեանի քարոզը, ժողովրդական ասն։

Պաւեալ կայսրի քաղաքականութիւնը, ինչպէս տեսանք, այն էր, որ կովկասեան իշխողները իրանք պիտի իրանց պաշտպանեն, կազմելով մի դաշնակցական միութիւն ռուսաց դահի հովանաւորութեան տակ։

Բայց Անդրկովկասի դրութիւնը այնպէս չէր, որ կարելի լինէր այնտեղ այդպիսի մի միտք իրագործել։ Առանձին-առանձին իշխող-

ների մէջ անհնարին էր որ և է ընդհանուր համաձայնութիւն կայացնել։ Վրաստանը մատնված էր համարեա անիշխանական դրութեան։ Ներքին խռովութիւնները, թագաւորական տան մէջ ըսկսած կռիւներն ու մրցումները, անձնարձակ ազնուականութեան ինքնագլուխ արարքները տակն ու վրա էին անում այդ դժբախտ, թշնամուց անդադար ասուված երկիրը։ Ներսացած, վշտահար Հերակլը ոչինչ չէր կարող անել՝ ընդհանուր կործանման առաջն առնելու համար։ 1797-ին, երբ յայտնի դարձաւ որ Ագա-Մամէդ-խանը մի նոր արշաւանք է պատրաստում, Հերակլը, ուրիշ ճար չունենալով, նորից դիմեց ռուսաց արքունիքին։ Տարվայ սկզբին նրա դեսպանները Պետերբուրգում խնդրում էին օգնութիւն՝ Գէօրգիեվսկի դաշնադրութեան հիման վրա։ Ռուսաց կառավարութիւնը չօժանդակեցին չէր ցոյց տալիս վրաց թագաւորի հետ բանակցութիւններ սկսելու։ Զինչանելով դեսպանների թախանձանքներին, Պաւելը միայն այն արաւ, որ թոյլ տուեց Թիֆլիսում գտնվող ռուսաց մի փոքրիկ զօրաբաժնին մնալ այնտեղ առժամանակ, մինչև որ կը պարզվի թէ ինչ է անում պարսից Շահը։ Այդքանն էլ մեծ ուրախութիւն էր վրացիների համար։

Փոքրիկը սակայն անցաւ ինքն իրան։ Ներքինի Շահը սպանվեց, ամբողջ Անդրկովկասը նորից ապատ չունչ քաշեց։ Ռուսները այլ ևս ուզեցին իրանց զօրաբաժինը պահել Թիֆլիսում և նա հեռացաւ։ Բայց Հերակլը շատ լաւ տեսնում էր որ Վրաստանի քայքայումը արագ առաջ է գնում առանց զարտկական հարուածներին էլ ենթարկվելու։ Նա շարունակեց իր աղաչանքները Պետերբուրգում։ Սակայն նրա դեսպանների բազմաթիւ դիմումները ուշադրութեան չէին արժանանում, և վրաց թագաւորը խլուր սպասում էր պատասխանի։

Այդ ապատողական դրութեան մէջ էլ Ցերունի թագաւորը մեռաւ (1798)։ Վրաստանի դրութիւնը աւելի ևս վատացաւ։ Քաջ, ժողովրդական հերոս Հերակլին յաջորդեց հիւանդոտ, թոյլ ու կրօնամոլ Գիւորգին։ Ներքին խռովութիւնները աւելի ևս կատաղի կերպարանք առան և վրաց խարխուլ գահը երերվում էր ընտանեկան փոքրիկների մէջ։ Գիւորգին էլ տեսնում էր որ միակ փրկութիւնը Ռուսաստանն է և շարունակեց իր հօր թախանձանքները Պետերբուրգում։ Այս անգամ Պաւել կայսրը աւելի դիջող հանդիսացաւ։ Պարսիկները ամենևին միտք չու-

նէին ձեռքից թողնել Վրաստանը. Ֆէթ-Ալի-Շահի զեսպանները, Թիֆլիս գալով, պահանջէին հնազանդութիւն, հակառակ դէպքում երկիրը պիտի ենթարկվէր պարսկական նոր արշաւանքի սարսափներին։

Այդ սպառնալիքը ներգործեց։ Պաւել կայսրը չտասկց գրական պատասխան տալ վրաց դեսպաններին. Գիորգին ճանաչվեց ռուսների կողմից թագաւոր, մի զօրաբաժին հրաման ստացաւ գնալ Թիֆլիս. նրա հետ էր և ռուսաց լիազօր ներկայացուցիչը, որ իբրև դեսպան պիտի մնար թագաւորի մօտ։ Գիորգիևսկի դաշնագրութիւնից էին բղխում այս անօրինութիւնները. բայց այդ օրվանից Վրաստանը իրապէս Ռուսաստանի սեփականութիւնն էր դառնում։

Յովսէփ արքեպիսկոպոսը, ինչպէս շատ անդամ ասիթ ունեցանք տեսնելու, մեծ կշիռ ունէր վրաց արքունիքում և առանձին բարեկամական յարաբերութիւններ ունէր Հերակլի հետ, վայելում էր նրա կատարեալ վստահութիւնը։ Պէտք է նկատել որ Արզրութեանի բարեկամութիւնը միանդամայն անկեղծ էր։ Վրաստանն էր նրա հայրենիքը, ուր ապրում էին նրա մտերիմ ազգականները. նա համոզված էր որ Վրաստանի վերակենդանացումը հայերի համար էլ կեանքի և մահվան խնդիր էր, որովհետև հայերը իրանց ամբողջ յոյսը, ինչպէս նա էր գրում, դրել էին Հերակլի և նրա թագաւորութեան վրա։ Այդ էր պատճառը, որ նա ձեռքից եկածը չէր խնայում Հերակլին օգնելու համար։

Եւ փոխարինաբար Հերակլն էլ իր կողմից մեծ ուշադրութեամբ էր վերաբերվում հայոց արքեպիսկոպոսին, կատարում էր նրա խնդիրքները։ Գրիգորիոսոլը հիմնելուց յետոյ Արզրութեանը կամեցաւ որ գաղթական հայերի մէջ կազմվի ազնուական, կալուածատէր դասակարգ։ Պէտք էր ձեռք բերել ազնուական ծագումը հաստատող վկայականներ։ Եւ Յովսէփը, այդպիսի վկայականներ ստանալու համար, դիմում էր վրաց կառավարութեան, թէև Գրիգորիոսոլի հայերը Վրաստանի երեսն էլ չէին տեսել և գաղթել էին թիւրքական նահանգներից։ Այս միջոցով այդ գաղթականներից շատերը ազնուականութիւն ստացան, որովհետև վրաց կառավարութիւնը տալիս էր Յովսէփի ուղած վկայականները *)։

*) Հետաքրքրական է որ Լազարեան տոհմն էլ ազնուականութիւն ստացաւ վրաց թագաւորի վկայականի հիման վրա, թէև Լազարեանները Վրաստա-

1797 թվի վերջերին արդէն յայտնի էր, որ Հերակլ թագաւորը մահվան անկողնի մէջ է։ Նա ունէր ջրգողութիւն։ Գահը պիտի ժառանգէր նրա աւագ որդի Գիւորգին, բայց թագաւորական ընտանիքում մի ուժեղ, կատաղի կուսակցութիւն էր կազմել, որ չէր ուզում Գիւորգիի թագաւորելը։ Եւ թոյլ ու հիւանդոտ Գիւորգին չէր էլ կարող մտածել թէ կը կարողանայ իր սեփական ոյժերով պաշտպանել իր իրաւունքները և յաղթել իր հակառակորդներին։ Նա միայն ռուսների օգնութեան վրա կարող էր յոյս դնել։ Յովսէփ արքեպիսկոպոսը Պետերբուրգում Գիւորգիի կուսակիցը դարձաւ և աշխատում էր նրա օգտին։ Շատ հետաքրքրական է նրա մի նամակը, որ գրված է Գիւորգիին Հերակլի մահից յետոյ, 1798 թվի փետրվարի 14-ին, մի այնպիսի ժամանակ, երբ Գիւորգին իր եղբայրների և խորթ մօր սաստիկ դիմադրութեան առջև էր կանգնած։ Այդ նամակը նախ և առաջ լաւ լուսաբանում է Վրաստանի ներ-

---

նում չէին եղել։ Ինչպէս երևում է, վրաց կառավարութիւնը այդպիսի դէպքերում կատարում էր տեղեկութիւններ ժողովողի, այդ տեղեկութիւնները վերաստուգողի և վաւերացնողի դեր։

քին քայքայումը. Յովսէփը մի շարք խրատներ է տալիս Գիւորգիին՝ երկրում կարգ ու կանոն հաստատելու համար, մի տեսակ պայմանագրութիւն է առաջարկում նրան, որի մէջ չեն մոռացված և հայերը։ Ուստի աւելորդ չենք համարում առաջ բերել այդ նամակը *).

«Թէպէտ ներքև նշանակված դիտաւորութիւնները Ձեր Բարձրութիւնը հարկաւոր կը գտնէ և Աստուծով կը գործէ սրանց համեմատ, բայց ես էլ, իբրև ապացոյց իմ ջերմեռանդութեան, ծանուցանում եմ Ձեր Բարձրութեան, որպէս զի բարեհաճութեամբ ընդունէք՝ իբրև ջերմեռանդ սրտից առաջացած նուէր, և անտես չանէք.

1. Բարեհաճեցէք ի նկատ առնել՝ ինչ որ ձեզ կը յայտնէ ձեր պայծառափայլ (լուսաւորազունեղ) որդին և նրա համաձայն կատարեցէք, վերադարձնելով նորին պայծառափայլութիւնը՝ արժանաւոր պատասխանով, որով պատճառ կը դառնաք Վրաստանի մշտընջենական խաղաղութեան և ձեր առնմի հաստատ կացութեան։

2. Ինչ դատանութեան էլ պատկանելիս լինի քո հովանաւորութեան տակ գտնվողը՝ նրա վրա խնամք ունեցիր. կրօնի պատճա-

---

*) Թարգմանված է գրաբարից։ Նամակը հանել ենք Ա. Երիցեանի մօտ գտնվող ժողովածուից։

ռով խարութիւն չանեն, որովհետև դու ընդհանուրի հայր ես հայրենիքի և նրա մէջ բոլոր ազգակցողների համար։

3. Քարմալը, Կախէթը և Սամխէթը պահպանիր առանց որ և է խարութեան, այնպէս որ ոչ մէկի վերաբերութեամբ խնամքդ աւելի կամ պակաս չը լինի, այլ աշխատիր բոլորին հաւասարապէս չէն պահել։

4. Արքայանիստ Թիֆլիս քաղաքդ լայնազանգան արհեստներով և ուսումով, հոգատար նրա մէջ գեղեցիկ շինութիւններ կառուցանելու, որպէս զի արժանաւոր լինի արքայական քաղաք կոչվելու և բոլոր չարիքներից մաքրվի և ազատվի, ինչպէս անիրաւութիւններից, գրկանքներից, կռիւներից ու զողութիւններից։

5. Ձեր Բարձրութիւնը թող չը բարեհաճի ցերեկը թողնել ու գիշերը գործի ձեռնարկել, դատաստանի կամ հաշիւների վերաբերեալ. որովհետև Փրկիչը հրամայեց, թէ ով որ գիշերով կը գնայ՝ կը գայթակղվի և աշխարհի լոյսը չի տեսնի։

6. Տարին երկու անգամ թող հարկ տանվի ձեր տաճիկներից, և չնչին բաների համար թագաւորական հարկահաւաքներ չուղարկվին նրանց մօտ, որով նրանք կը յուզվին։

7. Ձեր բոլոր սէրութիւնից հայի տատանորդը թող վճարվի արքունիքին, և դուք հարկաւոր տեղերում հայի շտեմարաններ ունենալով՝ նեղութիւն չէք կրի պատերազմների ժամանակ զօրք ժողովելիս, որ զօրքերի ցրվելուն պատճառ դառնայ։ Պատերազմ չեղած ժամանակ էլ՝ հայի պակասելու դէպքում (այդ շտեմարաններից) ժողովրդին փոխ կը տրվի, որով կարող կը լինէք նրանց օգնել՝ առանց որ և է վնաս կրելու։ Բայց լինչնում եմ, որ յաճախակի հրամաններ չուղարկէք շտեմարանների պահապաններին որ աբեղաներին ու երգողներին հայ բաժանեն, այլ իւրաքանչիւր մարդ բաւականանայ իր ապրուստով։

8. Ձեր տարդի դրացիներին, մանաւանդ լեզգիներին, երկիւղ ազդելու համար՝ պէտք է ունենաք պատրաստ զօրք՝ որքան և կարող էք, որովհետև առանց զօրքի զուր է որ և է ջանք։ Զօրքերին ոսկի կը տրվի հանքերից։

9. Ջանացէք հանքերը գործածութեան մէջ պահել և չրջակայ գիւղացիներին չէն պահել, որովհետև առանց սրանց՝ հանքերին հաստատութիւն չը կայ։

10. Ում որ չէ յանձնված որ և է գործ, լինչան լինի թէ ազնուական, չը պէտք է միջամտեն այն գործին, թէկուզ չնեղելու համար տերելու համար. որպէս զի իրանց ետեից չը չրջեցնեն լրբացած, ծեծող ծառաներ։

11. Ում որ Ձեր Բարձրութիւնը մի բան պարգև է տալիս՝ այլ ես թող չառնէ նրանից, բացի (այն դէպքերից, երբ պարգևատրվածը) պատութեան թշնամի է դառնում,

որովհետև արքայական պարգևները անդառնալի են։

12. Դուք որ Լոռին հաստատ դրով չնորհել էք աղա Շահմիրին և նա էլ յանձնել է Մելիք-Ապովին՝ հաստատ պահեցէք այդ ուխտը, որով ձեր հովանաւորութեան տակ կը հրաւիրէք ոչ միայն Հնդկաստանի հայերին, այլ և Կարսը և Ախալցխան, որանցից դատարկված բնակիչները կը լցնեն Փամբակն ու Բորչալուն։

13. Որովհետև հայերը պարծենում են Զեղանով և ուրախանում են, թէ մենք թագաւոր ունենք մեր թագաւորների սերունդից՝ ուստի Զեզ էլ հարկաւոր է խօսքով ու դրով հայրական խնամք ցոյց տալ նրանց, որպէս զի այդ տեսնելով թէ Ձեր հովանաւորութեան տակ գտնվող հայերը Ձեզ ջերմեռանդութեամբ ծառայեն և թէ օտարոտոտակները Ձեր հովանաւորութեան տակ դիմեն։

14. Ս. Էջմիածնի պատրիարքական աթոռը և ամենայն հայոց սրբազան պատրիարք հոգևոր Տիրոջը միշտ պատուով պահեցէք, անպակաս անելով նրանից նըպատաստ ու մխիթարութիւն և խնամելով նրան՝ ինչպէս իսկական հայոց թագաւոր։

Ձեզ վերարերեալ իմ միւս խորհուրդներն ու դիտաւորութիւնները կը լսէք Ձեր պատվաստակալ որդուց։

Այս նամակը ինքն ըստ ինքեան բաւական է ցոյց տալու թէ որպիսի հանդուն

դեր էր կատարում Արղութեանը Գիորգի թագաւորի՝ ռուսաց կառավարութեան հետ սկսած բանակցութիւնների մէջ։ Թէև դէպքերը արդէն ցոյց էին տալիս որ Վրաստանը, իբրև քաղաքական ինքնուրոյն մարմին, երկարակեաց չէ, բայց Յովսէփը, ինչպէս տեսնում ենք, դեռ յոյս ունէր թէ հայերը կը հաւաքվեն Վրաստանի հովանու տակ և վրաց թագաւորը, իբրև Բագրատունիների շառաւիղ, կը լինի և հայոց թագաւոր։

Բանակցութիւնները տևեցին համարեա մի ամբողջ տարի։ Վրաց դեսպաններին հարկաւոր եղաւ շատ և շատ ջանք թափել, շատ թախանձանքներ անել ռուսաց արքունիքում, մինչև որ 1799 թվի սկզբում Պաւել կայսրը հրամայեց որ մի գունդ զօրք ուղարկվի Թիֆլիս։ Այդ զօրքը և ռուսաց դեսպանը տեղ հասան նոյն տարվայ աշնանը։ Այնուհետև Վրաստանի կառավարութիւնը իրապէս անցաւ ռուսների ձեռքը. թէև դեռ կար թագաւոր, բայց նա հիւանդ էր, վախկոտ և առանց զօրաբաժնի հրամանատար Լազարեվի և դեսպան Կովալենսկու հաճութեան և թոյլտուութեան ոչինչ չէր անում։ Գիորգիի օրերը համրված էին։ Մօտ մի տարի միայն վիճակված էր նրան թագաւորել ռուսաց հովանու

տակ։ Բայց ամբողջ այդ ժամանակն էլ չարուռնակվում էին ինտրիգները նրա դէմ։ Թագաւորական ընտանիքը, բաժանված երկու անհաշտ կուսակցութեան, կռիւ էր մղում Գիւրգիի ժառանգութեան համար։ Եւ այդ խռովութիւնները, ընդհարումները տեղի էին ունենում այն միջոցին, երբ վրաց վերջին թագաւորը պառկած էր մահվան անկողնում։ Բաց աչքով նա տեսնում էր թէ ինչ դժբախտութիւնների դուռ են բաց անում այդ ժառանգական վէճերը, բայց ոչինչ չէր կարողանում անել։

Եւ աւելորդ էլ էր այդ մասին երկար մտածելը։ 1800 թուի դեկտեմբերի 22-ին Պաւել կայսրը Պետերբուրգում ստորագրեց մի հրովարտակ, որով Վրաստանը ընդ միշտ կորցնում էր իր անկախութիւնը և դառնում էր Ռուսաստանի սեփականութիւն։ Նոյն տարի 28-ին վախճանվեց Գիւրգի թագաւորը։ Վրաստանում, չը նայած ռուսաց զօրքի հրամանատարի ձեռք առած խիստ միջոցներին, խառնակութիւններ սկսվեցին։ Գահի թեկնածուները այժմ էլ չը կարողացան միանալ, այլ աւելի կատաղութեամբ զինվեցին միմեանց դէմ։

Այդ խառնակ ու անկերպարան դրութեան մէջ էր Վրաստանը, երբ 1801 թ. փետրվարի 10-ին Թիֆլիս հասաւ Յովսէփ Արղութեանը։ Այժմ նա ամենայն հայոց կաթողիկոս էր և գնում էր Էջմիածին՝ օծվելու։ Լաւ ժամանակն էր վրա հասնում Արղութեանը. այս անգամ էլ նա նշանաւոր ծառայութիւն էր մատուցանում ռուսաց կառավարութեան։

Տեղ հասնելուն պէս, նա սկսեց հանդարտացնել կրքերը, սիրով և միաբանութեան հրաւէրներ կարդաց վրաց իշխաններին, որոնցից շատերը սկսել էին խռովութիւններ յարուցանել։ Յովսէփը համոզում էր որ առանց դիմադրութիւնների և ցնցումների ընդունվի ռուսաց հպատակութիւնը։ Թիֆլիսի նշանաւոր հայերն էլ վաղուց ջանք էին գործ դնում որ յաղթող հանդիսանայ ռուսասէր կուսակցութիւնը և Վրաստանը շուտ մտնէ ռուսաց տիրապետութեան տակ։ Այժմ այդ հայերը մնացրին իրանց ջանքերը Յովսէփ կաթողիկոսի ջանքերին. յայտնի են դրանց մէջ Թիֆլիսի մելիքը, իշխան Դարչօ Բեհրութեան և Յովսէփի եղբօրորդին, իշխան Սօլոմոն Արղութեան։ Մի քանի օրվայ մէջ Յովսէփ կաթողիկոսը այնքան բան կարողացաւ շինել, որ գրում էր ռուսաց կառավարու-

թեան. «Պայծառափայլ արքայորդիների մէջ եղած կռիւները, խռովութիւնները, զօրքեր հաւաքելը քանդվեցան իմ խորհուրդներով. այժմ նրանց մէջ հաշտութիւն է. մի քանի իշխաններ, իմ նամակի համաձայն, եկան, մի քանիսները մտադիր են դալ» *)։

Այդ ժամանակաւոր խաղաղութիւնից չտապեց օգուտ քաղել ռուս զօրքի հրամանատար Լազարեվը, որին յանձնարարված էր Պետերբուրգից՝ յայտնել կայսրի հրովարտակը ժողովրդին։ Դա մի չատ փափուկ գործ էր։ Լազարեվը ձեռք առաւ բոլոր զգուշութիւնները։ Փետրվարի 16-ին, շաբաթ օր, նա հրաւիրեց վրաց կաթողիկոսին և իշխաններին Սիոնի մայր եկեղեցին, պատարագի։ Ժամասացութիւնը վերջանալուց յետոյ Լազարեվը կարդալ տուեց Պաւել կայսրի հրովարտակը. եկեղեցում ներկայ եղողները ընդունեցին այդ պատմական իրողութիւնը առանց տրտունջի։ Վրաց կաթողիկոսը գոհացողական մաղթանք կատարեց։

Բայց դա հանդէսի սկիզբն էր միայն։ Նրա մեծ և փառաւոր մասը մնաց միւս օրվան։

Փետրվարի 17-ին, առաւօտեան, ժողովուրդը հաւաքվեց բերդի եկեղեցին. ժամասացութիւնից յետոյ կազմվեց եկեղեցական թափօր, որ անցաւ քաղաքի միջով և ուղեորվեց դէպի քաղաքից դուրս գտնվող հայոց Վանքի մայր եկեղեցին։

Միմեանց ետևից, երկու շարքով գնում էին 8 վարդապետներ, իսկ սրանց ետևից գնում էին երեք սարկաւագներ, որոնցից մէկը տանում էր մեծ արծաթեայ խաչը, իսկ մնացածները—վառած մոմեր։ Սարկաւագների ետևից գնում էին Թիֆլիսի նշանաւոր հայերից երկուսը, որոնք տանում էին Պաւել կայսրի պատկերը. պատկերից յետոյ զգեստաւորված գնում էր Գրիգոր վարդապետը առանց թագի, գլխի վրա բռնած արծաթի մատուցարան, որ ծածկված էր կարմիր քողով և որի վրա դրված էր կայսերական հրովարտակը։ Ապա երկու վարդապետներ տանում էին Աստուածածնի պատկերը, որին հետևում էր Թիֆլիսի հայոց առաջնորդ Սարգիս արքեպիսկոպոսը խաչը բռնած։

Թափօրին հետևում էր ժողովրդի անգին բազմութիւն։ Կարգ պահպանում էին Դարչօ Բէհրութեան և Սօլոմոն Արզութեան իշխանները։

Բերդի դռների մօտ հանդէսին միացան

*) Ак. Кав. Арх. Ком. т. I, № 503.

Գիորգի թագաւորի աւագ որդի ու ժառանգ Դաւիթը իր եղբայրների և բազմաթիւ վրացի իշխանների հետ, ռուս գեներալներ Լազարեվ և Գուլեակով, նոյնպէս և Թիֆլիսում եղած զօրքի օֆիցէրները։

Յովսէփ կաթողիկոսը զգեստաւորված, չորս եպիսկոպոսների և չորս վարդապետների հետ, դիմաւորեց թափօրը Վանքի եկեղեցու բակում։ Նա տուեց իր խաչն ու գաւազանը շրջապատողներին, մօտեցաւ Պաւել կայսրի պատկերին, խնկարկեց նրան, ծունր դրեց նրա առջև, ապա համբուրելով պատկերը, բարձրացրեց և ասաց.

—Կեցցէ մեծ օգոստափառ թագաւորը իր ամբողջ ընտանիքով։

—Ամէն, ամէն, պատասխանեց ժողովուրդը։

Տալով պատկերը ներողներին, կաթողիկոսը վերցրեց հրովարտակը և դնելով իր գլխի վրա, ասաց.

—Երկնային Արարիչը թող բարձրացնէ մեծ Պաւլի թագաւորութիւնը, ինչպէս արեգակ և լուսին, յաւիտեան յաւիտենից...

—Ամէն, ամէն, լսում էին ձայներ ժողովրդի միջից։

Թափօրը մտաւ եկեղեցի։ Սեղանի առաջ,

դիպակով ծածկված մի աստանձին սեղանի վրա, դրվեցին հրովարտակը և կայսրի պատկերը։ Պատարագիչը ինքը, կաթողիկոսն էր։ Ապատեղ ներկայ էին Հերակլի այրին, Դարեջան թագուհին, վրաց կաթողիկոս Անտոնը, որ Հերակլի որդին էր, իշխանները և վրաց ամբողջ բարձր հոգևորականութիւնը։

Եկեղեցին, իհարկէ, չէր կարող տեղաւորել ամբողջ բազմութիւնը։ Ուստի պատարագից յետոյ Յովսէփ կաթողիկոսը դուրս եկաւ եկեղեցու բակը, որպէս զի բոլոր ժողովուրդը լսէ նրա խօսքերը։ Նախ և առաջ նա յուսադրեց և քաջալերեց ժողովուրդը, վրաց թագաժառանգին, կաթողիկոսին և հոգևորականներին և խրատեց նրանց հաւատարիմ մնալ ռուսաց գահին, որին հպատակվում են այսօր Նախախնամութեան կամքով։ Ապա ամբողջ հայ ժողովրդի կողմից շնորհակալութիւն յայտնեց Դաւիթ արքայորդուն, Լազարեվ և Գուլեակով գեներալներին՝ նրանց բարի և հեղ կառավարութեան համար։ Այնուհետև նա դիմեց ամենքին հետևեալ խօսքերով.

«Ո՛րպիսի ուրախութիւն է դծաղբրված ձեր դէմքերի վրա, բարեպաշտ քրիստոնեայ ժողովուրդ։ Տեսնելով այդ ուրախութիւնը, ես հարկադրվում եմ

մի պատկառանքով, որ այժմ լցնում է իմ ամբողջ սիրտը, բացականչել. ով մեր փրկութեան օր, ով բարեբախտութեան օր, մի օր, որ տանում է մեզ զէպի խաղաղ երջանկութիւն և հանգստութիւն, մի օր, երբ ամբանում է մեր բարեբախտ վիճակը, մի օր, որին չը հասան մեր նախնիքները։ Եւ ինչ պիտի մատուցանենք Ամենաարարչեալ Արարչին։ Շնորհակալութիւն արդեօք թէ աղաչանքներ, թէ մեր հոգիների խոնարհացումը այն ամենի համար, ինչ գալիս է նրանից... Զենք գաղարի արտասուքներ թափելուց, անընդհատ կը փառաբանենք նրա ամենամաքուր անունը, քանի որ արժանացել ենք մարդասէր կայսր Պաւլի առատութիւններին. կայսրը, զիջանելով մեր խոնարհ աղերսանքին՝ մեզ իր հպատակների թւում ընդունելու մասին, ոչ միայն չէ հեռացնում մեզ, այլ խոստանում է բարօրութիւն և անդորրութիւն, չը սպասելով մեզանից մի ուրիշ բանի, բացի հաւատարմութիւնից զէպի իր ատուածազան գահը։

«Եւ, ձեր ամենախոնարհ հովիւը,— այսպէս նա վերջացրեց իր խօսքը,— անդադար աղաչում եմ ամենաբարի Աստուծուն, որ երկարացնէ մեր թագաւորի և նրա ամբողջ ծիրանակիր ընտանիքի օրերը» *)։

Ժողովուրդը բարեմաղթութիւններ արաւ։ Ապա կարդացվեց Պաւլի հրովարտակը նախ ռուսերէնից հայերէն և վրացերէն լեզուներով։ Միևնոյն ժամանակ մի ռուս օֆիցէր 24 կօզակներով շրջապատված՝ Թիֆլիսի փողոցներում կարդալ էր տալիս նոյն հրովարտակը։

Նոյն օրը Յովսէփ կաթողիկոսը հանդիսաւոր ճաշ տուեց։ Ճաշկերոյթը տեղի ունեցաւ նոյն Վանքի բակում, այդ հանդէսի համար լատկապէս պատրաստված վրանների տակ։ Հրաւիրվածների թիւը հասնում էր 200-ի. այդտեղ էին վրաց թագաւորական ընտանիքը, իշխանները, պատուաւոր քաղաքացիները, ռուս օֆիցէրները։ Ամբողջ օրը եկեղեցիների զանգահարութիւն էր լսվում։ Իսկ երեկոյեան լուսավորութիւն կար։ Դրանով էլ վերջացաւ Վրաստանի միացման հանդէսը։

Այսպէս էր 1801 թւի փետրվարի 17-ը Թիֆլիսում, մի օր, որ ամբողջ Անդրկովկասի համար պատմութեան նոր շրջան էր բաց ա-

---

*) Дубровинъ — "Георгій XII", Спб., 1897, էջ. 199—201։

նում։ Այդ օրը առանձին, տեղական անկախութիւններին, դահերի հարցը ջնջվում էր։ Անդրկովկասը պիտի Ռուսաստանին պատկանէր։ Բայց փոխարէնը՝ այդ լայնածաւալ, մեծ ու զեղեցիկ երկիրը, որ դարերի ընթացքում արիւնահեղութիւնների, արտասունքների և անէծքների հայրենիք էր եղել, կոչվեց նոր կեանքի—խաղաղ առաջադիմութեան, հաստատուն և ամենքի համար հաւասար օրէնքի հովանու տակ։

Ահա այդքան նշանաւոր օրվայ հերոսն էր Յովսէփ կաթողիկոսը։ Բախտաւոր ատողը, որ նրան հովանաւորել էր երկար տարիների անխոնջ և բեղմնաւոր գործունէութեան ժամանակ, այդ օրը բերել էր նրան Վրաստանի մայրաքաղաքը, որպէս զի այդտեղ այդ փառաւոր հանդէսով վերջացնէ այն նշանաւոր ծառայութիւնները, որ նա մատուցել էր Ռուսաստանի գահին մի անկեղծ ողորմութեամբ։ Դա նրա վերջին գործն էր։ Յովսէփի օրերը համրված էին։

ԳԼՈՒԽ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ԳՐԱՆԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Սիմէօն կաթողիկոս և Յովսէփ Արղութեան հայերի մտաւոր առաջադիմութեան գործում—Խալդարեանի տպարանը — Արղութեանի եռանդուն աջակցութիւնը։—Տպագրութիւններ Պետերբուրգում— Խալդարեանի մահը։—Տպարանի փոխադրութիւնը Նախիջևան, ապա Աստրախան։—Թադէոս վարդապետ Պօլսեցի և Մարգար Խոջէնց Երևանցի։—Նշանաւոր գործեր. «Թելամաք», «Բժշկարան»։—Առանց Արղութեանի տպարանը չէ գործում — Ռուսերէն գիրք հայոց եկեղեցու մասին։—Նրա նպատակը։—Հայոց եկեղեցին և ռուսները. կրօնական խարութիւն։—Ի՞նչ է անում Արղութեանը՝ այդ խարութիւնը վերացնելու համար։—Արղութեանը իրրև հայ գործիչ։

II

Իր տեղը ասացինք, որ Սիմէօն կաթողիկոսը էջմիածնում հաստատեց ոչ միայն դպրոց, այլ և տպարան ու թղթի գործարան։ Տպարանը առաջինն էր, որ բացվում էր բուն Հայաստանում։ Մինչև այդ հայերէն գրքերը տպագրվում էին հայրենիքից հեռու, գաղթա-

կանութիւններին մէջ։ Թէև Սիմէոնի տպարանը համարեա միայն եկեղեցական գրքեր էր տպագրում և մեր գրականութեան մէջ մի առանձին, աչքի ընկնող դեր չը կատարեց, բայց շատ նշանաւոր էր հէնց իրրև առաջին սկզբնաւորութիւն Հայաստանի հողի վրա։

Յովսէփ արքեպիսկոպոսը, իրրև Սիմէոնի աշակերտ, կրթական և առաջադիմական լայն հայեացքներ ունէր։ Մենք արդէն տեսանք նրա բաց արած դպրոցները և գաղթական հայերի կուլտուրական և տնտեսական առաջադիմութեան համար նրա գործ դրած եռանդուն ջանքերը։ Այդպիսի մի մարդ չէր կարող անտես անել լուսաւորութեան մի այնպիսի հզօր գրգիչ, ինչպիսին է տպարանը։

1779 թուականին Պետերբուրգում նա ծանօթացաւ Գրիգոր Խալդարեան անունով մի հայի հետ, որ նոր էր եկել Լօնդօնից։ Խալդարեանը ջուղայեցի էր, Հնդկաստանում առևտուր անելով հարստութիւն էր վաստակել, ապա անցել էր Լօնդոն։ Այդտեղ նա ապրեց տասը տարի և տեսնելով թէ լուսաւորված մարդկութիւնը ինչեր է անում տպագրութեան միջոցով, ինքն էլ ուզեց մի հայերէն տպարան հիմնել։ Երկար ժամանակ նա որոնում էր մի հմուտ վարպետ, որ կարողանար

հայերէն տառեր փորագրել, շատ ծախսեր է անում և վերջը հասնում է իր նպատակին։ Պատրաստել տուած տառերը վերցնում է և տանում Պետերբուրգ։ Սակայն ինչ կարող էր անել նրա հայկական տպարանը Ռուսաստանի հիւսիսային մայրաքաղաքում։ Եթէ չը լինէր Արղութեանը, այդ տպարանը դատապարտված կը լինէր անգործութեան։ Բայց Յովսէփը ամենամեծ համակրանքով է վերաբերվում Խալդարեանցին, հզօր աջակցութիւն է ցոյց տալիս և այսպիսով հայ տպարանը ոչ միայն գոյութիւն է պահպանում, այլ և բաւական աչքի ընկնող դեր է սկսում կատարել։

Արղութեանը թէ իր ծախսով է գրքեր հրատարակում, թէ ուրիշներին է յորդորում տպագրական ծախսերը յանձն առնել։ Տպվում են զվարճալի կրօնական գրքեր. Ժամագիրք, Ներսէս Շնորհալու «Յիսուս Որդի»-ն, «Ընդհանրականը» և այլ գործեր։ Բայց այդ հրատարակութիւնների մէջ կան և այնպիսիները, որոնք նորութիւն են հայերի համար։ Գրիմի գաղթականութիւնը առաջացրեց ռուսաց լեզուն սովորելու պահանջը։ Ահա այդ պահանջին բաւարարութիւն տալու համար Պետերբուրգում տպագրվեցին երկու գիրք. «Բանալի գիտութեան» և «Շաւիղ լե-

զուապիտութեան» (1788)։ Առաջինը թէ ապ-
ջնարան է և թէ վարժութիւններ հայերէնի
միջոցով ռուսերէն և ռուսերէնի միջոցով հա-
յերէն սովորելու համար։ Ամենից հետաքր-
քրքրականն այն է, որ այդ բառարան մեծ գիր-
քը գրել է մի հայ օրիորդ—Կլէոպատրա Սա-
րաֆեան, առաջին հայ կինը արևելեան հա-
յութեան մէջ, որ տպագրած հեղինակութիւն
լոյս հանեց։ Լեզուն գրաբար է, բայց կան և
շատ աշխարհաբար դարձուածքներ։ Հայերէն
բառերը ռուսերէն տառերով գրված են հա-
մաձայն տառադարձութեան այն եղանակին,
որ այժմ գործ են ածում արևելեան հայերը։

Երկրորդ գիրքը հայերէնից-ռուսերէն
բառարան է, որ կազմել է կամ կազմել է
տուել տպարանատէր Խալդարեանցը։ Հայե-
րէն բառերի վրայից գրած ռուսերէն բառերը
նախ հայերէն տառերով են գրված, ապա
ռուսերէն։

Սակայն Խալդարեանցը չը կարողացաւ
տանել իր գործը առանց վնասների։ Նա մեծ
պարտքի տակ ընկաւ և պիտի կորցնէր ամեն
ինչ, բայց Յովսէփ արքեպիսկոպոսը, փող հա-
ւաքելով Աստրախանի հայերից, տուեց նրա
պարտքերի մի մասը, իսկ տպարանը, ինչ-
պէս տեսանք, փոխադրեց Ս. Խաչ վանքը,

Նոր-Նախիջևանի մօտ։ Թէ տպարանի և թէ
գրքեր տպել տալու համար Արղութեանին
դումարներ ուղարկեց հնդկաստանցի վաճա-
ռական Յոհաննէս Գերաքեանը, որի հաշուով
կառուցվեցին և Նախիջևանի հայոց երկու
դպրոցները։

Տպարանը Ս. Խաչ վանքում եռանդուն
գործունէութիւն սկսեց չնորհիւ Արղութեանի
հոգացողութիւնների։ Նա ինքը հեղինակ
չէր, թարգմանիչ չէր, բայց չրջապատեց ի-
րան այնպիսի մարդկանցով, որոնք կարող
էին հեղինակել և թարգմանել։ Այդ մարդ-
կանցից լինէին երկուսին—Թադէոս վարդապետ
Պօլսեցի, ճոռոմաբան գրչի տէր մի մարդ, որ
սովորաբար սրբագրում էր գրքերը իբրև քաջ
հայկաբան, և Մարգար Խոջէնց Երևանցի,
մի հայ գրագէտ, որ Զմիւռնիայում սովորել
էր մի քանի լեզուներ։ Այս Մարգար Խոջէնցը
գրեց «Դուռն Ողորմութեան» անունով մի
գիրք, որի մէջ նկարագրված էր Նախիջևանի
և Գրիգորիոպոլի հինգարկութիւնը. մի ներ-
բողական գրուածք է դա, որ փառաբանում
է Արղութեանին ամենավառ գոյներով։

Բայց աւելի նշանաւոր է Խոջէնցի «Թե-
լեմաքը»։ Դա Ֆենէլօնի աշխարհաճանաչ «Տե-
լեմաքի» թարգմանութիւնն է, որ երևում էր

մեր մէջ առաջին անգամ և հէնց այդ պատճառով էլ առանձին պատիւ էր Նոր-Նախիջևանի տպարանի համար։ Գիրքը բաղկացած է երկու հատորից, պարունակում է իր մէջ 500-ից աւել երեսներ. տպված է (1794) Յովհաննէս Լազարեանի ծախսով ի լիշատակ նրա Յարութիւն որդու։ Թարգմանիչը իրաւացի կերպով նկատում է որ մեղք է Ֆենէլօնի գործի հայերէնը չունենալը. նա թարգմանված է եւրոպական բոլոր լեզուներով, կայ նրա արաբերէն թարգմանութիւնը, վրացիներն էլ թարգմանեցին ռուսերէնից, պարսատվում է և պարսկերէն թարգմանութիւնը, իսկ հայերէն չը կայ։ Ինքը, Խոջէնցը, թարգմանել է «Տելեմաքը» իտալերէնից և ֆրանսերէնից։ Որքան էլ պակասաւոր լինի այդ թարգմանութիւնը ոճի, հարազատութեան կողմից, անկասկած է որ նա մեր այն ժամանակվայ գրականութեան մէջ մի գանձ էր։ Գնահատելի է մանաւանդ և այն, որ Խոջէնցը թարգմանել է նաև այն ծանոթութիւնները, որոնք լուսաբանումեն բնագիրը։ Այդ ծանոթութիւնները հայ ընթերցողին հասկացողութիւն են տալիս հին լունական կեանքի, դիցաբանութեան, աւանդութիւնների մասին, մի բան, որ դեռ զոյութիւն չունէր մեր գրա-

կանութեան մէջ։ Եւ այս կրթիչ գեղեցիկ գիրքը լոյս էր տեսնում Նոր-Նախիջևանի պէս մի տեղում, ուր ղրիմցի գաղթականները դեռ նոր էին բնակութիւն հաստատում, դեռ խարխափում էին թաթարական խաւարի մէջ։ Նախիջևանը չէր, իհարկէ, որ այդպիսի գեղեցիկ գործ էր կատարում, այլ Յովսէփ արքեպիսկոպոսը։ Ի՞նչպէս էր Խոջէնց Մարգարը եկել նրան աշխատակցելու։ Զմիւռնիայում նա լսում է Արղութեանի համբաւը, նամակագրութիւն է սկսում նրա հետ և վերջը ճանապարհվում է Ռուսաստան, ուր աչքով տեսնում է մի ժիր ու եռանդուն առաջնորդ, որ ոչ միայն քաղաքներ, եկեղեցիներ, վանքեր ու դպրոցներ է հիմնում, ոչ միայն իր ազգի ազատութեան մասին է մտածում, այլ և անդադար աշխատում է տպարանի միջոցով մտաւոր սնունդ տալ իր ժողովրդին։ Յովսէփը որոնում էր հին ձեռագիրներ, որոնում էր օտար լեզուներով գրված այնպիսի գրքեր, որոնց թարգմանութիւնը կարևոր էր համարում։ Եւ ահա Խոջէնցը մատուցանում է նրան իր «Թելամաքը»։ Արղութեանը գտնում է մեկենաս, տպագրել է տալիս և խրախուսում է թարգմանչին ուրիշ օգտակար գործեր էլ ձեռնարկելու։

Նոր-Նախիջևանի տպարանի մի ուրիշ պարծանքն էլ այն հայերէն «Բժշկարանն» է, որ տպվեց 1793-ին։ Այստեղ էլ տեսնում ենք մի և նոյն հանգամանքները։ Արղութեանի գործունէութիւնը մեծ ոգևորութիւն էր պատճառել հասկացող հայերին։ Նրա հրաւէրները արձագանք էին գտնում, և տպարանին նուէրներ էին ուղարկում ամեն կողմից։ Ջուղայեցի բժիշկ Պետրոս Քալանթարեանը այդ կերպ ոգևորվողներից մէկն էր. և նա նուէր է մատուցանում Արղութեանին ոչ թէ ոսկի, որ չունէր, այլ իր կազմած բժշկարանը։ Արղութեանն էլ գտնում է հրատարակիչ և յանձնում է այդ հետաքրքրական գործը տպագրութեան։

Քալանթարեանի «Բժշկարանը» բաւական համառօտ է, բայց նորութիւն է կազմում նրանով, որ ունի իր մէջ տեղատոմսեր, «ըռէցեպթումիս», լատիներէն անուններով. բացատրում է դեղեր պատրաստելու եղանակը, նշանակում է չափերը, ընդունելու միջոցները։ Մի խօսքով դա մի կանոնաւոր բժշկականութիւն է, իր ժամանակի համար շատ կարևոր. իբրև այդպիսի գիրք, նա առաջինն է մեզանում։ Գրքի համարեա կէսը լատիներէն բժշկական անունների բառարան է. դեղեր, բոյսեր, նրանց յատկութիւնները և այլն։

Ահա այսպէս էր կարողանում Արղութեանը կենդանութիւն ներշնչել ամեն մի դեղեցիկ գործին։ Գրականութիւն ծաղկեցնելու համար հարկաւոր չէր որ նա լինէր գրող, հեղինակ։ Բաւական էր ունենալ ջերմ սէր դէպի գործը, եռանդ և հոգատարութիւն։ Առանց նրան տպարանը մնում էր։ Հէնց որ փոքր ի շատ երկար ժամանակով հեռանում էր Նախիջևանից, տպարանն էլ կանգ էր առնում։ Իսկ երբ նորից նա մտնում էր Նախիջևան, նորից գործել էր սկսում, տպարանն էլ կենդանանում էր։ Եւ այդպիսով տպարանը կարողացաւ այնքան գործ կատարել, որ տասնութերորդ դարի արևելեան հայութեան համար միակ լուսաւոր երևոյթը դարձաւ, եթէ չը հաշուենք Էջմիածնի տպարանը, որ նրա հետ սաստիկ գործ չը կատարեց։

Տեսնելով որ իր բացակայութիւնների ժամանակ տպարանի գործերը կանգ են առնում, Արղութեանը սուրբ լաւ համարեց փոխադրել նրան Նախիջևանից Աստրախան, որպէս զի միշտ կարողանար հսկել նրա վրայ։ Աստրախանում էլ նա գործ ստեղծեց տպարանի համար, գտնում էր հրատարակիչ-

ներ, մանաւանդ շատ օգնում էին Հնդկաստանի հայերը։ Բայց Աստրախանում տպարանը այնքան բեղմնաւոր գործունէութիւն չունեցաւ. պատճառներից գլխաւորը այն էր, որ Յովսէփ արքեպիսկոպոսը շուտով թողեց Աստրախանը, տուաջնորդական պաշտօնը։ Նրա հեռանալուց յետոյ տպարանը քայքայվեց *)։

Յիշատակութեան արժանի է Արզուբեանի մի հրատարակութիւնն էլ։ 1799 թվին Պետերբուրգում տպվեց ռուսերէն լեզուով մի գիրք՝ „Исповѣданіе Христіанскія вѣры Армянскія церкви“ վերնագրով։ Գիրքը բաղկացած է երեք մասից. 1) Հայոց եկեղեցու դաւանութիւնը, 2) Մկրտութեան և Դրոշմի կարգը և 3) Պատարագի թարգմանութիւնը։

Առաջաբանի մէջ Յովսէփ արքեպիսկոպոսը ասում է թէ գիրքը հրատարակում է երկու

*) Տպարանը վերանորոգվեց 1820-ական թուականներին, բայց էլի անուշադրութեան մատնվեց։ Սարգիս եպիսկոպոս Հասան-Ջալալեանը իր ճանապարհորդութեան ժամանակ տեսաւ տպարանի թանկագին իրերը հայոց եկեղեցու զանգակատանը անխնամ թափթփած։ Այդտեղ էլ գտաւ նա Յովսէփ արքեպիսկոպոսի հաւաքած ձեռագիրներից մի քանիսը...

նպատակով. նախ, որովհետև Ռուսաստանում ապրող հայերից շատերը արդէն մոռացել են իրանց մայրենի լեզուն, ուրեմն պէտք է որ գոնէ ռուսերէնի միջոցով ծանօթանան իրանց եկեղեցու խորհուրդների հետ, երկրորդ՝ հայոց եկեղեցու մասին ճիշտ հասկացողութիւն տարածելու համար։

Աւելի կարևորը երկրորդ նպատակն էր։ Պէտք է նկատի ունենալ որ ռուսները, իբրև յունական եկեղեցուն պատկանող քրիստոնեաներ, նախապաշարված էին հայերի վերաբերմամբ և չէին ընդունում թէ հայերն էլ ուղղափառ քրիստոնեաներ են։ Կրօնական այդ հակառակութիւնը, որ այնքան կատաղի կերպարանք էր ընդունել յոյների մէջ, մի մեծ արգելք էր հանդիսանում այն ջանքերի դիմաց, որ անում էին հայերը՝ ռուսների ձեռքով գերութիւնից ազատվելու համար։ Հայերի ազատութիւնը միայն քաղաքական հարց չէր. նա աւելի հիմնված էր մարդասիրական և մանաւանդ քրիստոնէական գաղափարների վրա։ Ռուսները յանուն քրիստոնէութեան պիտի ազատէին հայերին. բայց դրա համար պէտք էր որ նրանք համոզվէին թէ հայերը անիծված հերձուածողներ չեն, ինչպէս ցոյց էին տալիս յունական աղբիւրները, այլ մի

հին քրիստոնեայ ազգ, որ իր դաւանութիւն-
ներով հակառակ չէ եկեղեցու հնագոյն աւան-
դութիւններին։

Իր երկարաւոր գործունէութեան միջո-
ցին Արզութեանը շատ է աշխատել այդ
նախապաշարմունքները վերացնելու համար։
Նա մտիկ լարարերութիւններ ունէր ռուս
հոգևորականների հետ, պատում էր նրանց
և պատիներ էր տանում նրանցից, հանդի-
սաւոր արարողութիւններ էր կատարում հայ-
ոց եկեղեցիներում և անխարութեան զեղ-
ցիկ օրինակներ էր տալիս, գնալով ռուսաց
եկեղեցիները և հրաւիրելով ռուսներին հայ-
ոց եկեղեցի։

Մի շատ բնորոշ դէպք է պատմում Ար-
զութեանը։ 1779 թուականի գարնանը նա
Մոսկվայումն էր և հրաւէր ստացաւ մետրո-
պոլիտ Պլատոնից ներկայ լինել ռուսաց մայր
եկեղեցում պատարագին։ Յովսէփը գնում է
և ընդունվում է մեծ պատիներով. նրան
մոցնում են սեղանը և այնտեղ նա մնում է
մինչև պատարագի վերջը։ «Անխմատ և գան-
հիկ ժողովրդից շատերին— ասում է նա—խայ-
թել էր մեր այնտեղ (սեղան) մտնելը և շատ
թունալի նեաեր էին արձակել դէպի սրբա-
զան Պլատոն արքեպիսկոպոսը մեզ սեղան

մոցնելու պատճառով, ինչպէս ինքը և ուրիշ-
ները պատմեցին մեզ. որովհետև նրանց
մտքը այն առասպելական և անխիղճ զբա-
ղարտութիւնների հետից էր, որ գրել են
լոյները մեր մասին և այդ պատճառով մեզ
անարժան էին համարում սեղանում գտնվելու։
Բայց ասուծային հոգով վառված սրբազան
արքեպիսկոպոսը լանդիմանում և ծաղրում է
անխմատ մարդկանց բարբաջանքները և ծի-
ծաղում է նրանց կուրութեան վրա։ Սրանից
լետոյ շատերը սկսեցին լաճախել մեր եկեղե-
ցին պատարագի ժամանակ, նախարարներ և
իշխաններ, վաճառականներ և հասարակ ժո-
ղովուրդ»։

Անա այսպիսի միջոցներով Յովսէփի արք-
եպիսկոպոսը աշխատում էր վերացնել այն
սաստութիւնը, որ կար ռուսների մէջ դէպի
հայերը՝ հնուց մնացած կրօնական հակառա-
կութեան պատճառով։ Այս տեսակ գործերի
մէջ նրան օգնում էր, իհարկէ, և այն փայ-
լուն դիրքը, որ նա ունէր ռուսաց պաշտօ-
նական ամենաբարձր շրջաններում։ Գործը
լաւական չը համարելով, նա վերև լիշած
դիրքն էլ հրատարակեց՝ ցոյց տալու համար,
որ հայերը քրիստոնեաներ են և նրանց սաս-
լու ոչ մի հիմք չը կայ։

Յովսէփ արքեպիսկոպոսը, ինչպէս տեսնում էք, այն բնաւորութիւններից չէր, որոնք սիրում են փակվել մի յայտնի գործի, մի յայտնի իրողութեան շրջանակներում և գործել այդտեղ։ Դա մի լայն, եռանդուն բնաւորութիւն էր, որի համար ամեն տեղ գործ կար և որ հաւասար եռանդով նուիրվում էր թէ ընդհանուր հարցերին, թէ մասնաւոր, չատ անգամ նոյն իսկ անկարևոր գործերին։ Աւելորդ կը լինէր նոյն իսկ փորձել մի հաշիւ կազմելու այն գործերի մասին, որոնց համար աշխատել է Յովսէփը, գրել է նամակներ, զիմումներ է արել։ Ապշեցնում է մանաւանդ նրա նամակագրութիւնը։ Կարելի է ասել, որ նա թղթակցում էր համարեա բոլոր նշանաւոր հայկական կենտրոնների հետ։ Հնդկաստանում հայոց անդրանիկ լրագիր «Աղդարարը» տպում էր նրա գործերը, նրա նամակները։ Նա սովորութիւն ունէր իր բոլոր նամակների պատճէնները արտագրել առանձին գրքերում։ Այդ գրքերից երեք հատն են այժմ յայտնի և այդտեղ արձանագրված նամակների թիւը հասնում է մօտ 2000-ի. երկու այդ տեսակ գրքեր էլ կորած են համարվում։

Պէտք է նկատի ունենանք այն ժամանակվայ հաղորդակցութեան դժուարութիւնները, մանաւանդ թէ ինչ հեռաւոր, անծանօթ տեղեր էին գնում նամակներից չատերը— և այն ժամանակ մենք պէտք է հիանանք այդ մարդու անսպառ եռանդի վրա։ Որքան աշխատանք, որքան ջանք պէտք էր գործ դնել ամեն կողմերից տեղեկութիւններ ստանալու համար։ Այդ տեղեկութիւնները պէտք է գային Վրաստանից, Էջմիածնից, Ղարաբաղից, Պարսկաստանի խորքերից, Հնդկաստանից, Զմիւռնիայից և այլ տեղերից։ Եւ նրանք գալիս էին. և Արդութեանը ամենից լաւ տեղեակ էր թէ ուր ինչ է կատարվում։

Կովկասեան լեռներում, չերքէզների երկրում, ապրում էր մի հայ գաղթականութիւն։ Նա, ինչպէս երևում է, եկել էր Ղրիմի կողմերից։ Հային աշխարհից աշխարհ տանողը առևտրական շահն է։ Սկզբում չերքէզների երկիրը մտնող հայ վաճառականները տեսան որ այդտեղ լաւ ապրելու յարմարութիւններ կան։ Այդքանը բաւական էր որ նրանք քաշվեին բերվին իրանց ետևից մի գաղթականութիւն, որ ցրվեց չերքէզների մէջ, բնակութիւն հաստատեց։ Չերքէզները այն ժամանակները քրիստոնեայ էին. հայերին մեծ իրաւունքներ տուին, այնպէս որ եկուոր

պաղթականները իշխանի կոչման էլ էին հասնում։ Վայրենի, անսանձ ազատութեան աշխարհ էր Չերքեզների հայրենիքը. այդտեղ ոյժը, ուժամարդութիւնը նոյնքան հարկաւոր էին մարդուն, որքան ջուրն ու հացը։ Հայերը դեղեցիկ կերպով են կարողանում յարմարվել այն երկրի պայմաններին, ուր բնակութիւն են հաստատում։ Վաճառականների այդ հատուածը Կովկասի ազատ, պատերազմասէր որդիների հետ ապրելով, կերպարանափոխվում է. կորցնում է իր ազգային լեզուն, դառնում է Չերքէզ՝ նոյն անվեհեր բնաւորութեամբ, արիւնարբուշ հակումներով, նոյն խիզախ ու անկուն քաջութեամբ։

Տասնութերորդ դարի սկզբից Չերքէզների երկրում սկսում է տարածվել խլամը։ Բայց հայերը պահում են իրանց կրօնը, մնում են քրիստոնեայ, սակայն փոխվում են այնքան, որ համարեա ոչնչով չեն նմանվում իրանց ազգակիցներին։ Մանել վայրենի երկիրը, ուր Չերքէզների գիշատիչ ցեղերն էին տէր ու տիրականը, իսարկէ, դժուար, անհնարին էր դրսեցիների համար։ Հայերը դրսի աշխարհից կտրված են մնում և քրիստոնէութիւնն էլ հազիւ հասկանալի ձէսի, պապենական աւան-

դութիւնների ձև է ընդունում։ Սակայն Յովսէփ արքեպիսկոպոսը որոնում, գտնում է այդ կորած մոռացված հայութիւնը։ Նա մարդիկ է ուղարկում Չերքէզստան, գրում է նամակներ, աշխատում է յարաբերութիւններ պահպանել իր այդ մի բուռն լեռնցի ժողովրդի հետ։ Այդ բանակցութիւնների մանրամասնութիւնները մենք չը գիտենք։ Յամենայն դէպս, նկատի առնենք մի քանի հանգամանքներ. Չերքէզահայերը քաջ էին, բուն Չերքէզներից չէին տարբերվում յարձակվելու, յափշտակելու մէջ։ Ռուսաստանը վաղուց արդէն արիւնահեղ ընդհարումներ ունէր Չերքէզների հետ։ Այդտեղ, սահմանագլխի վրա, եղել է Սուվորովը, եղել են ուրիշ զօրավարներ։ Արդեօք Յովսէփի բանակցութիւնները Չերքէզահայերի հետ՝ կապ չունէին ռուսներին այդ կողմում օգնելու գործի հետ, թէ նա պարզապէս կամենում էր հայութեան մոտեցնել Չերքէզացած հայերին *)։

Ու Յովսէփը առանձին հոգատարութեամբ էր որոնում իր կորած ոչխարներին,

*) 1838 թուականին Չերքէզահայերը դուրս գնացին իրանց երկրից և բնակվեցան ռուսաց հողում. գեներալ Զասս հիմնեց նրանց համար Արմաւիր աւանը։

այդ ցույց է տալիս և այն, որ նա հեռաւոր Բաբուլ քաղաքում գտնվող հայերի մօտ էլ այցելուներ էր ուղարկում։

Մենք չը պէտք է զարմանանք որ Աւղանիստանի այդ գլխաւոր քաղաքում էլ կային հայեր։ Նրանք աւելի հեռու տեղեր էին գնացել, դէպի Միջին Ասիայի խորքերը։ Շատ դէպքերում նրանք իրանց յօժար կամքով չէին գնում, այլ նրանց տանում էին։ Բաբուլի հայերին աւղանները հանեցին Նոր-Զուղայից իրանց արշաւանքների ժամանակ։ Այդ վայրենի զինուորականներն էլ հասկանում էին որ իրանց խաւար հայրենիքի համար օգտակար կը լինեն ժիր ու աշխատաւոր հայ վաճառականները, արհեստաւորները։ Բաբուլի հայերը թիւով շատ չէին, մօտ լիսուն ընտանիք։ Մահմեդականութեան ծովի մէջ ընկած քրիստոնեաների այդ մի փոքրիկ կաթիլը նիւթական բարեկեցութեան մէջ էր ապրում, օգտվելով տիրողների չնորհած արտօնութիւններից։ Սիմէօն կաթողիկոսի ժամանակ Էջմիածնի նուիրակները մի մի երևում էին Բաբուլում։ Յովսէփ արքեպիսկոպոսն էլ մարդ էր ուղարկում այնտեղ, յարաբերութիւններ էր պահպանում այդ մի բուռն տարագիր, կորած հայերի հետ։

Ահա ինչ տեսակ գործիչ էր Արղութեանը։ Քանանովի տարի նա այսպէս գործում էր Թուստանում։ Հասկանալի է որ այսպիսի գործիչը իր տրամադրութեան տակ դրամական մեծ միջոցներ պիտի ունենար։ Պալատական բարձր շրջաններում ընդունված մի մարդ, գաղթականութիւններ հիմնող մի առաջնորդ, մեծ ժողովրդականութիւն վայելող մի քաղաքական գործիչ, նա չէր կարող մեծամեծ ծախսեր չանել։ Եւ իրաւ, կրօնաւորի հագուստը կրում էր մի փարթամ, ճոխ իշխան, մեծահոգի, վեհանձն, ամենքին յայտնի իր առատաձեռնութեամբ։ Նրա տունը միշտ բաց էր հիւրերի առաջ և ստացել էր «Աբրահամի տուն» անունը։ Տավրիկեան մեծափառ իշխանը սիրում էր յաճախ ճաշել իր բարեկամ արքեպիսկոպոսի մօտ։ Յովսէփի սեղանի շուրջը բազմում էին և այլ երևելի բարձրատիճան պաշտօնեաներ։ Նա շքեղ ընծաներ էր ուղարկում պալատականներին, նշանաւոր հոգևորականներին, օգնում էր վրաց արքունիքին, Էջմիածնին։ Նրա առատաձեռնութիւնը, փարթամութիւնը համարեա չաւլութեան էր հասնում։ Ոչինչ չը խնայելով արտաքին փայլի և շքեղութեան համար, Յովսէփը իր ապրուստի մէջ չափաւոր էր, խնա-

ցող *)։ Նրա համար զինիներ էին ուղարկվում Ֆրանսիայից. և Պաւել կայսրը իշխան Գաղարինի միջոցով հարցնում էր նրան թէ ուր և ինչպէս ուղարկել զինիները, որ ապահով հասնեն նրա ձեռքը։ Եւ հասկանալի է, որ այսքան առատաձեռն, փարթամ իշխանը մինչև պարտքերի մէջ էր։ 1796 թուին գրած իր մի նամակում Յովսէփը ասում էր. «Թիֆլիսը ոչ միայն ինքը քանդվեց, այլ ինձ էլ քարուքանդ արաւ. պարտքերը դիզվել են ինձ վրա, չափազանց ծախսեր ունեմ, իսկ օգնութիւն ոչ մի տեղից չը կայ»։ Այդ ծախսերի մի թեթև նմուշը տալիս է նրա մի այլ նամակը, որի մէջ կարդում ենք. «Բարսեղին ուղարկեցի Թիֆլիս 3000 բուբլու հետ։ Տէր-Ստեփանի կնոջը ես ազատեցի գերութիւնից 500 բուբլով։ Նրա որդին ու աղջիկը դեռ գերութեան մէջ են. ուղարկեցի 1000 բուբլի նրանց ազատութեան համար»։

Այն, հեշտ չէր պահպանել այն դիրքը, որ գրաւել էր Արղութեանը Ռուսաստանում իբրև հայոց առաջնորդ, իբրև իր հայրենիքի դժբախտութիւնների ու ցաւերի ներկայացուցիչ։

---

*) Ա. Երիցեան — «Կովկասի Հայք», Թիֆլիս, 1894, հատ. Ա., եր. 5.

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՀ

Կաթողիկոսական ընտրութիւն Ղուկաս կաթողիկոսի մահուան պատճառով։—Էջմիածնի ժողովի ընտրութիւնը։—Թիֆլիսի վերաբերմունքը դէպի այդ ընտրութիւնը։—Արղութեանի ցանկութիւնը։—Նրան չընտրելու պատճառները։—Ձնշում և Էջմիածնի նոր ընտրութիւնը։—Կ. Պոլսի ամիրաների տրամադրութիւնը։—Ռուսաց կառավարութեան միջամտութիւնը։—Դանիէլ պատրիարքին աքսորում են։—Յովսէփի ընտրութիւնը հաստատուած է։—Շնորհաւորութիւններ, Պաւել կայսրի նոր շնորհները։—Ճանապարհորդութիւն Ատրպատականից։—Ընդունելութիւն Թիֆլիսում։—Գիւրգի թագաւորի յուղարկաւորութիւնը։—Արղութեանի հիւանդութիւնը և մահը։—Եզրակացութիւն։

1799 թուականի վերջին օրերում վախճանվեց Ղուկաս կաթողիկոսը։ Էջմիածնի միաբանութիւնը չտապեց նոր կաթողիկոս ընտրել։ Ղուկասի մահվան երկրորդ օրը ժողով գումարվեց. այդտեղ միաբանութիւնը յայտնեց որ իր համար ցանկալի ընտրելիներ են Կ. Պոլսի Դանիէլ պատրիարքը և Ռուսաստանի նուիրակ Եփրեմ եպիսկոպոսը։ Ընտրողական թուղթը սարքվեց Նրեանի

մէլիքի և իշխաչիների կողմից էլ, ստացաւ Երևանի խանի հաւանութիւնը և ապա յատուկ պատգամաւորի ձեռքով ուղարկուեց Կ. Պոլիս։ Այդտեղ հոգևորականների և ամիրաների ժողովը երկու ընտրելիներից մէկին պիտի ընդունէր կաթողիկոս, որ այնուհետև հաստատուում էր սուլթանի յատուկ ֆիրմանով։ Այդպիսի ֆիրման պիտի տար և պարտից Շահը։

Այսպէս էր այն ժամանակները կատարուում կաթողիկոսի ընտրութիւնը։ Դա համազգային ընտրութիւն չէր. ընտրողները խիստ էջմիածնի միաբաններն էին, մէկ էլ Կ. Պոլսի ամիրաները։ Ժողովրդի մասնակցութիւն չը կար։

Էջմիածնի պատգամաւոր Դաւիթ եպիսկոպոսը դեռ նոր էր հասել Էրզրում, երբ Թիֆլիսում գտնվող Յովհաննէս եպիսկոպոսը կանչվեց Դիւրդի թագաւորի մօտ։ Այդտեղ նրան յայտնեցին որ ամենայն հայոց կաթողիկոս պիտի լինի Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը։ Յովսէփի թեկնածութեան կողմնակիցներ էին թէ ինքը, վրաց թագաւորը, թէ ռուս զօրքերի հրամանատար գենեռալ Լազարեվ, թէ Արղութեանի բարեկամները։ Յովհաննէս եպիսկոպոսին խմաց տուին որ եթէ

չընդունվի այս առաջարկութիւնը, այն ժամանակ Էջմիածինը կը զրկվի վրաց արքունիքի և ռուսների բարեկամութիւնից և բացի դրանից, Էջմիածնից բերված Գեղարդը չի վերադարձնվի։ Յովհաննէս եպիսկոպոսը չատպեց այս բոլորը յայտնել Էջմիածնի միաբանութեան, իր կողմից խորհուրդ տալով որ կատարվի Դիւրդիի և Թիֆլիսի հայ իշխանների ցանկութիւնը։

Ինչու կաթողիկոսական ընտրութեան ժամանակ մոռացվել էր Յովսէփ արքեպիսկոպոսը։ Նա ինքը չէր էլ թագցնում որ կամենում է կաթողիկոսական աթոռը բարձրանալ։ Դեռ Ղուկասի կենդանութեան ժամանակ նա Կ. Պոլսի հայերին գրած իր նամակներում շատ պարզ յայտնում էր իր այդ ցանկութիւնը։ Այս այսպէս լինելուց յետոյ ինչպէս էր որ ամենանշանաւոր, եռանդուն հոգևորականը, նա, որ քսան եօթ տարի այնքան բեղմնաւոր գործունէութիւն էր ցոյց տուել, արժանի չը համարվեց կաթողիկոսական գահի վրա բազմելու։

Էջմիածնի միաբանութիւնը այսպէս էր պատասխանում այդ հարցին։ Յովսէփ արքեպիսկոպոսը Ռուսաստանի չարերին նուիրված մի մարդ է, աշխատում է ազատել հայե-

ին մահմեդական լուծից, իսկ Էջմիածնի կաթողիկոսը Պարսկաստանի և Թիւրքիայի հաճութեամբ միայն կարող է գոյութիւն ունենալ։ Կը հաշուին այդ երկու պետութիւնները Յովսէփի ընտրութեան հետ։ Էջմիածնի միաբանութիւնը յիշեցնում էր որ ռուս-թիւրքական պատերազմի ժամանակ Յովսէփ արքեպիսկոպոսը գտնվում էր Պոտեմկինի բանակում, որ նա եկեղեցի դարձրեց թիւրքական մզկիթները։ Իսկ 1796-ի պարսկական արշաւանքի ժամանակ զարմանալ նա չէր, որ ուղեկցում էր ռուսաց բանակը, այնքան մեծ օգնութիւններ էր հասցնում նրան և այնքան վնասում էր պարսիկներին։ Էջմիածինը վտանգված պիտի լինի, եթէ նա ընտրվի կաթողիկոս։ Բացի նրանից, որ այդ ընտրութիւնը հայ հոգեորականութեան կողմից մի թշնամական ցոյց կը համարվէր, ուղղված Պարսկաստանի և Թիւրքիայի դէմ, կար և այն հանգամանքը, որ Յովսէփը, իբրև ընդհանրական կաթողիկոս, պիտի աւելի ևս մեծ եռանդով գործէ իր բռնած ուղղութեամբ, այսինքն Ռուսաստանի շահերը պաշտպանելով։

Այս պատճառաբանութիւնը, իհարկէ, ունէր իր հիմքերը։ Բայց չէ կարելի դրա վրա չաւելացնել և այն, որ Արղութեանի պէս

մի մարդը Էջմիածնում, Ղուկասի թոյլ կառավարութեան սովորած հոգեորականների համար անպարմար պիտի լինէր հենց այն պատճառով, որ նա կամքի տէր մարդ էր, սիրում էր գործել և լաւ գործել և որ ամենազլխաւորն է, շատ ուժեղ էր, յենված ռուսաց կառավարութեան վրա։ Դիմադրել Յովսէփին Էջմիածնականները չէին կարող. իրաւ չէին նրանք Յովսէփին «առիւծ» անուանում։

Բայց և այդպէս, Էջմիածնի միաբանութիւնը չը կարողացաւ մերժել Թիֆլիսից ուղղած պահանջը։ Նա ճամարարեց մի նոր թուղթ կազմել, որի մէջ այլ ևս Եփրեմ եպիսկոպոսի անունը չէր գրված, այլ նրա տեղ, իբրև երկրորդ ընտրելի, յիշված էր Արղութեանը։ Այդ թուղթն էլ շտապով ուղարկվեց Կ. Պոլիս։ Մինչդեռ ժամանակ միաբանութիւնը յայտնում էր պօլսեցիներին իր վերոյիշեալ քաղաքական պատճառաբանութիւնները և թախանձում էր, բոլոր դժուարութիւնները վերացնելու համար, կաթողիկոս ընտրել Դանիէլ պատրիարքին։

Այստեղ հարց է առաջ գալիս և այն մասին, թէ ինչու Յովսէփ արքեպիսկոպոսը այդքան ուզում էր Էջմիածնի կաթողիկոսական աթոռը։ Ամենայն հայոց կաթողիկոսութիւնը

այդ ժամանակներում չատ ողորմելի դրութեան մէջ էր գտնվում. կաթողիկոսը ենթարկված էր Երևանի խանին և պիտի կատարէր այդ մանր, տեղական իշխողի հրամաններն ու քմահաճութիւնները. նոյն իսկ կաթողիկոսի անձը պաշտպանված չէր խանի բռնութիւններից։ Կարող էր ռուսաց արքունիքում մինչև մեծ ուշադրութիւն գտնող, մինչև հեղինակութիւն և դիրք վայելող, բարձր շրջաններում փարթամ կեանք վարող մարդը որ և է հրապոյր զգալ Երևանի խանի բարբարոս ձեռքի տակ մտնելու մտքից։

Ինչ էլ լինէին Արղութեանի ծրագիրները, ինչ դիտաւորութիւններ էլ ունենար նա կաթողիկոսական աթոռի վերաբերմամբ, չէ կարելի չասել, որ նրա այդ քայլը սխալ քայլ էր։ Ռուսաստանում մնալով, նա աւելի օգտակար կարող էր լինել իր ազգին, քանի որ գործելու լայն ասպարէզ ունէր։ Ի՞նչը ստիպեց նրան փոխել իր դրութիւնը Արարատեան դաշտի մի անկիւնում պարսկական բռնակալութեան ճնշման տակ ապրելու ապագայի հետ։

Չենք կարող թաղցնել, որ այս դէպքում մեծ դերծէր տեսնում փառասիրութիւնը։ Արղութեանը չատ փառասէր էր։ Նրա ապարանում

հրատարակված համարեա բոլոր գրքերի մէջ մենք կարդում ենք ճարտասանական անզուսպ ոճով գրված ներբողներ, նուիրված նրան։ Նա ինքը չէր գրում այդ ներբողները, բայց դրանք տպագրվում էին, ի հարկէ, ոչ առանց նրա գիտութեան։ Ժամանակակիցներից մէկը *) հաղորդում է որ պատմում էին թէ նա կամենում էր իր եղբօրորդուն հայոց թագաւոր դարձնել և պատրաստել էր նրա համար նոյն իսկ թագ։ Եւ զարմանալի էլ չէ. նրա բախտին, նրա անօրինակ աջողութիւններին արժանացած մարդուն ներելի կը լինէր և փառասիրութիւնը։ Ահա այդ փառասիրութիւնն էլ տանում էր նրան դէպի եկեղեցական բարձրագոյն պաշտօնը։

Գուցէ կալին և ուրիշ, աւելի ուժեղ հանգամանքներ։ Գուցէ Արղութեանը տեսնում էր, որ Ռուսաստանում տիրած նոր կարգերը այլ ևս չեն թոյլ տալ նրան նախկին դերը կատարել և նա ստիպված պիտի լինի բաւականանալ Ատարախանի թեմի առաջնորդի դիրքով։ Գուցէ և ռուսական քաղաքականութիւնն էր նրան ուղարկում Էջմիածին։ Պէտք է ի նկատի ունենալ ժամանակը։ Դա մի ժա-

*) Бутковъ, т. II, եր. 456։

մանակ էր, երբ ռուսաց կառավարությունը պատրաստվում էր հաստատել իր տիրապետությունը Անդրկովկասում և շատ կարևոր էր որ Արզուբեանի պէս մի փորձված, եռանդուն մարդը գրաւէր ամենայն հայոց կաթողիկոսական գահը։ 1801 թուականի լուսվարին, այն ժամանակ, երբ Յովսէփը իբրև հայոց կաթողիկոս ճանապարհվել էր Աստրախանից և գնում էր դէպի Թիֆլիս, Պաւել կայսրը մի ինքնագիր հրովարտակով հրամայում էր Կովկասեան բանակի գլխաւոր հրամանատար Կնորրինգին. «Աշխատել մօտենալ Հայաստանին վաճառականության միջոցով և նկատի ունենալ նրան ձեռք բերելը ինքնաբաւ համաձայնությամբ» *)։

Այսպէս թէ այնպէս, Արզուբեանի կաթողիկոսության հարցը գտնվում էր Կ. Պոլսի հայերի ձեռքում և ամբողջապէս կախված էր նրանցից։ Իսկ Կ. Պոլսում նրա թեկնածությունը լուրջ արգելքների հանդիպեց։ Ընտրողների մեծ մասը համաձայն էր Էջմիածնից գրված թղթին և յանձնեց թիւրքաց կառավարության, որ Յովսէփ արքեպիսկոպոսին ինքը չէ ընդունում կաթողիկոսական թեկ-

*) Бутковъ, т. III, եր. 335։

նածու, որովհետև նա ապրում է օտար պետության մէջ։ Կառավարությունը իրաւունք տուեց հայերին վարվել այնպէս, ինչպէս իրանց սովորությունն է այդպիսի դէպքերում։

Հարցը ձգձգվեց։ Արզուբեանը, իհարկէ, տեղեկություններ էր ստանում այն ամենի մասին, ինչ կատարվում էր Կ. Պոլսում և վճռեց գործել ռուսաց կառավարության միջոցով։ Պաւել կայսրը բարեհաճությամբ վերաբերվեց Յովսէփի կաթողիկոսանալու մտքին և Կ. Պոլսի ռուսաց դեսպան Տամարան հրաման ստացաւ իր կառավարությունից աջակցնելու Արզուբեանի թեկնածությունը։ Առաջին անգամն էր որ Ռուսաստանը միջամտում էր հայոց կաթողիկոսի ընտրությանն։ Դեսպան Տամարա զրպարտություն ունէր և Յովսէփ արքեպիսկոպոսի հետ. նա աշխատում էր եռանդով և ռուս պաշտոնեաներին գրած իր նամակներում հաստատում էր թէ «իրանց ընդհանուր ծանօթ» Յովսէփը կաթողիկոս կը լինի։ Բայց աջողությունը անկարելի եղաւ առանց բանությունների։ Ռուսաց դեսպանի ստիպմամբ Դանիէլ պատրիարքը և Դարուստ եպիսկոպոսը, Արզուբեանի կաթողիկոսության գլխաւոր արգելք-

ները, աքսորվեցին Կ. Պոլսից և պատրիարք նշանակվեց Յովսէփի կուսակից Յովհաննէս եպիսկոպոսը։

Այլ ևս արդեօք չը կար. Կ. Պոլսի հայերը ընդունեցին Յովսէփին կաթողիկոս, թիւրքաց կառավարութեան ֆէրմանը սատանայը դժուար չէր Տամարայի համար։ Արղութեանը Պետերբուրգում սպասում էր անհամբեր։ Սատնալով Կ. Պոլսից բարեյաջող լուրեր, նա այլ ևս աւելորդ համարեց սպասել ֆէրմանին և սկսեց սորագրվել «ամենայն հայոց կաթողիկոս»։ Կաթողիկոսական նշաններով էլ նա նկարել տուեց իր պատկերը։ Նուսով ստացվեց սուլթանի ֆէրմանը. Պաւել կայսրն էլ իր կողմից հաստատութեան հրովարտակ տուեց և Յովսէփը, այժմ արդէն կաթողիկոս, սկսեց իր պատրաստութիւնները տեսնել։

1800 թուականի օգոստոսի 4-ին նա վերջին անգամ ներկայացաւ կայսրին, հրաժեշտի ողջոյն տուեց և ապա ճանապարհ ընկաւ դէպի Աստրախան։ Նրա հետ էր Յովհաննէս Լազարեանը։

Մոսկվայում նոր կաթողիկոսին մեծ պատիւներ արին։ Աւելի մեծ փառքով նա մուտք գործեց Աստրախան, սեպտեմբերի 12-ին։ Պաւել կայսրը նրա վրա թափում էր իր

շնորհները։ Յովսէփը մինչև այդ ստանում էր ռոճիկ 2000 բուբլի, այժմ այդ ռոճիկը յատկացրին նրան մինչև մահ. ճանապարհի ծախսերի համար պետական գանձարանը 1000 բ. տուեց։ Բացի այդ բ՛ լրրից, կայսրը յատուկ հրաման ուղարկեց գեներալ Կնօրրինգին, որ նա հոգ տանէ կաթողիկոսի ապահով և պատուաւոր ճանապարհորդութեան մասին։

Աստրախանից մինչև Թիֆլիս Արղութեանի ճանապարհորդութիւնը յաղթական գնացքի էր նման։ Նրան ուղեկցում էին հարիւր կոզակներ մի օֆիցերի հետ։ Գեներալ Կնօրրինգ դիմաւորեց նրան Մոզդոկ քաղաքում և մի քանի օր մնաց նրա մօտ։ Կովկասեան սարերով ապահով անցնելու համար Կնօրրինգ բանակցութիւններ էր սկսել լեռնաբնակ ցեղերի հետ և նրանցից էլ կազմել էր պահակախումբ, որ ուղեկցում էր կաթողիկոսին։

Դեկտեմբերին դուրս գալով Աստրախանից, Արղութեանը 1801 թ. փետրվարի 6-ին հասաւ Դուշէթ, իսկ 10-ին մուտք էր գործում Թիֆլիս։ Այստեղ, Կուկիա գիւղում, նրան դիմաւորեցին վրաց թագաժառանգը, շրջապատված իշխաններով, ռուս զօրքի հրամանատար երկու գեներալները, օֆիցերները

և ժողովրդի անպին բաղմութիւն։ Բերդից սկսվեց ողջույնի թնդանօթաձգութիւն։ Մեծ հանդէսով մտնելով հայոց եկեղեցին, կաթողիկոսը այնտեղից գնաց Սիօնի մայր եկեղեցին, ուր դրված էր Գիւրգի թագաւորի դագաղը։ Մոմնկ չոքելով նրա առաջ, Արղութեանը փաթաթվեց իր բարեկամ թագաւորի դիակին։ Ապա դիմելով ժողովրդի խուռն բազմութեան, նա վրացերէն լեզուով մի գեղեցիկ քարոզ ասաց, ողբաց Վրաստանի թշուառութիւնները և յորդորեց յոյս դնել ռուսաց կառավարութեան վրա։

Մենք արդէն պատմեցինք թէ ինչ դեր կատարեց նա իբրև վրաց իշխաններին ռուսաց տիրապետութեան մտքի հետ հաշտեցնող, նկարագրեցինք փետրվարի 17-ի չքեղ հանդէսը։ Տօնախմբութիւնից երեք օր յետոյ նա կատարեց իր վերջին պարտքը Գիւրգի թագաւորի վերաբերմամբ։ Մօտ մի ամիս առաջ վախճանված վերջին թագակիր Բագրատունու մարմինը փետրվարի 20-ին ուղարկվում էր Թիֆլիսից Մցխէթ՝ այնտեղի տաճարում թաղելու համար։ Յովսէփ կաթողիկոսը ճանապարհ դրեց իր բարեկամին մինչև Վէրա։

Արդէն հասել էին Էջմիածնից հրաւիրակ ուղարկված եպիսկոպոսները։ Յովսէփը

որոշել էր ճանապարհվել մարտի 1-ին։ Բայց գնալուց առաջ կամեցաւ լսել Թիֆլիսի հռչակված բաղնիքներում։ Հերակլ թագաւորի այրին, Դարէջան թագուհին, հրաւիրեց նրան գնալ իրան պատկանող բաղնիքը։ Կաթողիկոսը երկար մնաց տաք ջրի մէջ, իսկ իրիկնապահին, փետրվարի 27-ին, գնաց թագուհու մօտ թէյ խմելու։ Դիշերը նա ընկաւ դողացնել և անկողին մտաւ, որտեղից նրան այլ ևս վիճակված չէր ոտք դուրս դալ։ Մարտի 9-ին, գիշերը, Յովսէփ կաթողիկոսը վախճանվեց իր եղբօրորդի Սօլոմոն Արղութեանի տանը, Մոդնու թաղում։

Մի քանի ամսից յետոյ նրա մարմինը ուղարկվեց Էջմիածին, ուր, համաձայն նրա կտակի, թաղվեց Սիմէօն կաթողիկոսի մօտ։

Այսպէս տնա վերջացաւ այս նշանաւոր մարդու և հռչակաւոր հայ դործիչի կեանքը 58 տարեկան հասակում։

Նրա մահից յետոյ Էջմիածնում սկսեցին խառնակութիւններ։ Նորից կաթողիկոս ընտրվեց Դանիէլը, բայց մինչև նրա Էջմիածին հասնելը, Դաւիթ եպիսկոպոսը կարողացաւ Երևանի խանի և իր կուսակիցների ա-

ջակցութեամբ կաթողիկոս նստել։ Եւ այնուհետեւ այդ երկու կաթողիկոսների մէջ սկսեցին խաչտառակ ընդհարումներ, որոնց պատմութիւնը, բարեբախտաբար, մեր ներկայ գործին չէ վերաբերվում։

Հարկաւոր է միայն մի փոքրիկ ծանոթութիւն։

Հոգեորականութեան մեծ մասը Դանիէլի կողմնակից էր։ Յովսէփ կաթողիկոսի հետ Ռուսաստանից եկել էր Դրիգոր վարդապետը, որ Թիֆլիսում լաւ տարածեց թէ Յովսէփը մեռնելիս բերանացի կտակել է կաթողիկոս ընտրել կամ Կ. Պոլսի պատրիարք Յովհաննէսին կամ թէ Դաւիթ եպիսկոպոսին։ Այդ պատճառով էլ ռուսաց կառավարութիւնը պաշտպանում էր Դաւթին։ Եւ որովհետեւ Դաւիթը Յովսէփի կողմնակիցն էր, Դանիէլի կուսակցութիւնը Դաւթի հետ ատում էր և Յովսէփին։ Յովսէփը չատերի կողմից կաթողիկոս էլ չէր համարվում, քանի որ, ասում էին, նա ազգի կողմից ընտրված չէր։ Բայց անաչառութեամբ վերաբերվելով փաստերին, մենք տեսնում ենք որ բուն համազգային ընտրութիւն չը կար էլ այն ժամանակներում և Յովսէփի ընտրութիւնը նոյնքան կարող է

օրինական համարվել, որքան օրինական էր հէնց նոյն Դանիէլի ընտրութիւնը։

Ի հարկէ, ցանկալի կը լինէր, որ Յովսէփի պէս մի արժանաւոր մարդը ժողովրդական կանոնաւոր ընտրութեամբ հրաւիրված լինէր իր բարձր պաշտօնին։ Բայց կարող ենք հէնց միայն այդ պատճառով ուրանալ այդ հոգեորականի մատուցած ծառայութիւնները, գործադրած անտգին ջանքերը։

Ընդունելով որ Յովսէփի կաթողիկոսութիւնը մի սխալ էր, ընդունելով որ փառասիրութիւնը չատ էր զարգացած նրա մէջ և այդ փառասիրութեան համար նա նոյն իսկ անվայել քայլեր արաւ իր կեանքի վերջում, մենք, այնուամենայնիւ, պիտի խոստովանենք որ դա մի բացառիկ անճնաւորութիւն էր XVIII դարի երկրորդ կէսում։ Քաղաքական հանճար չէր նա, այն. նրա գործողութիւնների մէջ չատ սխալներ, անհեռատեսութիւն կը գտնենք մենք։ Բայց հանճարներ մենք չենք ունեցել և չէինք կարող ունենալ մանաւանդ տասնութերորդ դարում, երբ մենք խանական բարբարոսութիւնների տակ ճնչված տարուէներ էինք։ Այդ արիւնոտ, ոգրալի իրականութիւնից, խաւարի և յուսահատութեան միջնավայրից, դուրս է գալիս այսպի-

Ոչ Սիմ

ամ մի եռանդոտ, գործունեայ մարդ, կարծքը ի լարի ցանկութիւններով, ազատական, բարեկարգիչ տենչերով։ Եւ նրա գործերը այնքան շատ են, այնքան նշանաւոր, որ նրա մարդկային թուլութիւններին կարելի է և պէտք է ներողամտութեամբ վերաբերուել։

Ժամանակով Յովսէփ Արղութեանը, երբ կը հրատարակուին նրա լոյսը գրագրութիւնները, աւելի խոշոր անձնաւորութիւն կը դառնայ, քան որքան այժմ է երևում։ Չը պիտի մոռանուի նրա գերեզմանը։ Որովհետև նա մի ամբողջ պատմական շրջան է ստեղծել մեր կեանքի մէջ...

Վ Ե Ր Ջ

680
~~ԱԼՀ~~
105
ՀՀ Ազգային գրադարան
NL0418503

8739

9(47.925)
Д-38